



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17685

1873
371
P-50

3

2010

2001



371

F-50

1873

(1003
14463)

ԵՐԱԾ ԲԵՕՄԻ

ՄԱՆԿԱՎԱՐՁԱԿԱՆ

ՆԱՍԱԿՆԵՐԸ

ՔԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

ԹԻԳԼԻԶ.

1873



30677-42
1-8781

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

“ՄԵՂՈՒ ՔԱՑԱՍՑԱՆԻ”

ԱՐԱԳՐԻ.

Дозволено цензурою 5 Марта. 1873 г.

13803-38

Հերնատ Բերօմէի մանկալարժական նամակներն անցեալ տարի տպագրվեցան “Մեղու Հայաստանի” լրադրի մէջ և, որքան մեզ յայտնի է, պիրակր լնդումնելութեան արժանացան չայ հասարակութեան կողմից . ուստի մենք պարուք համարեցինք յայտնել, որ նոյն նամակներն առանձին զրբոյկով ի լոյս լնծայենք, որովհետու մաս մաս կարդալով լրագրի մէջ, լնթերցողները մի լնդհանուր գալափար կարող էին ստունալ և միշտ ձեռի տա՛ւ չէին ունենալ այդ նամակները: Համաձայն մեր խօստման ահա ի լոյս լնծայեցինք և քաջայոյս ևնք, որ մեր աշխատանքն ի գոր չի մնի, այլ մենք այս զրբոյկով կնապասունք (մերնոր սերնդի դաշտի արարակավթեանն, որ ծնողաց և դաստիարակների արգիտութեանն պատճառով միանդամայն բարձի թողի է արած:) Բերօմէի գլխաւոր միտքն այն է, թէ ինչպէս մայրն իւր օրինակով և երեխայի կետմկին մասնակցելով կարող է զարգայնել երեխայի մէջ այն յատկութիւններն, որոնք անհրաժեշտ են մարդու բարդարութեան համար: Այս նապատակին մայրը հիանի միայն այն ժամանակ, երբ նա կյարգէ երեխայի մարդկայն արժանաւորութիւններն և ոչ թէ կնայէ նորա վերայ, իրեւմի խաղսդիրի կամ մի անրան էակի վերայ: Այս գլխաւոր սկզբունքն աչքի առաջ ունենալով մայրը պէտք է մեծ հոգացողութիւն ունենայ երեխայի բարյական գալգացման վերայ և հեռու պահէ նորան

Հ զնցումն , և Հմտարերեւը , ծեծը ԱՆ ՀՅՈՒՅՆԻ ԵՐԵ-
ԽԱԹԻ ԽՆՔՆԱՄԱՐՄԹԻՆԸ . նա երբէք չի մռանալի , որ նո-
րան վիրաւուեցին , անսպասուեցին . այդ գրացմանքը
կմնայ նորա մէջ : ի հարիվ , եթէ դուք միայն մի անդաս
ծեծէք նորան և վերջը վարվէք նորա հետ մարդուվարի
—կանչետանայ աշ գ զդացմոնքը . բայց զգուշացէ՞ք , մայ-
րե՛ր , առաջին զարկից , որովհետև զարմելով երեխային
մի անդամ , դուք կը անշոշու երկրորդ , երրորդ և
այլ շատ անդամներ են . վերջապէս ծեծը սովորթին
կդանանայ թէ ծեղ և թէ երեխայի համար , որ ծեծից
ոչ մի բարուական սարաւութիւն չի ստանալ . աւ մի-
այն փողիքական ցաւ : Կան խալ այդ փողիքական ցա-
ւոց նա վախենալով միս անդամ զայցէ չանէ այն ,
ինչ որ ծեծի պատճառ էր զարդարակ թէ թէ զիտակցե-
լով արած յանցունիքի յանձնաւոր լինիլը : Մեղ անհաս-
կանէ ի է այն ձեզ , թէ հարկաւոր է զարնել նախ և սովա-
նորա ուշադրութիւնը մի այլ առարկացի վերայ դարձ-
նել : Բայց միթէ այդ այլ առարկանել չկան ծեծից
սուաջ և միթէ ծեծից յետոյ երեխայն առաւել ընդու-
նակ է իսր ուշադրութիւնը նոյսա վերայ դարձնելու :

Երեխայն սովորել ուլ ծեծին , կկորցնէ իսր մարդկային
արժանաւորութիւնն և պատին և ի վերջոյ կզորի անբա-
րոյականութեան անդունդն , որովհետև զիղիքական ցա-
ւոց ազատվելու համար նա աշխատ կը լինի ստախօսու-
թեամբ , խարեցայութեամբ , որացութեամբ և այլ մի-
ջոցներով չեւացնել իսր անձնից : Այդ պատճառ ծեծն և դո-
րանով լցնել իսր մաքուր սիրան և միաքը զանազան
տեսակ ախտերով :

Մենք զարմանում ենք , թէ ինչորէս է , թեօմէն , որի
նամակները քարոզում են մարդավարի վարմոնք երե-

ԱՀասուառող Եսականութիւնից . խարերայութիւնն'ց , սը-
տախօսութիւնից և այլ այնպիսի ո խոռելց , որոնք յա-
սուկ են մեր հասարակական կեանքին : Բորոյ ափառե-
րից հեղինակը առամել ուշադրութիւնն է դադ ձեռում սը-
տախօսութեան վերայ , որ միս ափառերի միայն աղբա-
նեան է և ասպազոյ ուրեմն , որ առա խօսողը մի յան-
ցանք է գործել , որից ցանկանում է աղատիլի : Հեղի-
նակը շատ շոշապիելի օրինակներով քննում է ստախօ-
սութեան բորոյ շարժառիթներն և ի վերջոյ դարիս է
այն ճիշդ եղակացութեանը թէ , լաւ բարուական զաս-
տափառակոմիւն ստացած երեխան երբէք սուա չի խօ-
սել . իսկ եթէ երբեմն սուա ված ևս իինի ստախօսու-
թեան դիմելու , այդ իրազմինը վատ հետեանքներ
չի թողնել նորա վերայ :

Համակի երով հեղինակի սկզբունքներին և ի բորոյ
սուէ ցանկանալով , որ մեր հասարակութիւնն աշխատ
իներ իրագործելու սոցա մեր նոր մերնդի դաստիարա-
կութեան ժամանակ , ընթերցողներին պարտք ենք հա-
մարում զգուշացնել մի անմանկափարժական զարդիա-
րից , որ շատ ասպածված է ընդհակառակ մեր թէջ . խօս-
քերս ծ ե ծ ի մասին է : Եւ նեօմէն ծեծն ստաջարիում է
իրբեք մի մանկավայ ժաման միջոց երեխային յանձնու-
թիւնից հանելու և հրամանը կատարել տալու համար :
Նա ասում է , թէ ծեծը պատիժ չէ , այլ մի շնցումն ,
սրով երեխային խերքը գ տիմն է ժողովում և սկսում է
զիստակցել իսր արածն : Այդ ցնցումից յետոյ երեխայի
ուշադրութիւնը զարձնելու է մի այլ առարկայի վերայ ,
իրու ոչինչ չի պատահէ : Առհասարակ ծեծն ընդունե-
ված է զերմանական ստամեարաններում և ընտանեաց
մէջ և մինչ դեր է խաղում այնակեղ . երբանացի ման-
կափարժները միանդամայն մռանաւում են , որ բայց

Խաչի հետ, չէ կարողացել հեռու պահել խրեան խր հայրենակից մանկավարժների անմանկավարժական հայեացքից ծեծի նշանակութեան մասին:

Կրկն և կրկն զգուշացնելով լնմթերցողներին ծեծի գործածութիւնից, մենք մեր նպաստակին հասած կհամարենք մեղեթէ Եւ բեօմէի միս գաղափարների համեմատ կրթելով խրեանց հայ մայրերը նոր ուղղութիւն կմըսնեն դաստիարակութեան մէջ: Մեծայոյս ենք, որ հայ մայրերի ցանկութիւններն ես համապատասխան են մեր յոցութիւն: ուստի իրեւ լաւ առաջնորդ խրեանց դժուար գործած, մենք նուիրում ենք նոյս Եւ բեօմէի նամակների հայերէն թարգմանութիւնը:

Ա. Ն.

ՆՈՒԻՐ

ՀԱՅ

ՄԱՅՐԵՐԻՆ:

Է. ԲԵՇԵՒՔԻ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐԸ:

ՆԱՄԱԿ

Ա.

Վաղելի Տիկն. Մեծ Համակրոթեամբ
կարդացի ձեր նամակն, ուր դուք յայտ-
նում եք, որ «մի փոքրիկ հրաշալի որդւոյ»
մայր էք արդէն և թէ ձեզ միանվամայն
երջանիկ կհամարէիք, եթէ միայն չկասկա-
ծէիք, արդեօք կարող էք ձեր մայրական
պարտաւորութիւնները կատարել թէ ոչ:
Թէ ձեր և թէ ձեր բոլոր աղջականների

Հաւատարմութիւնն և անկեղծ բարեկաս-
մութիւնն իրաւունք են տալիս կամ լաւ է
ասել պարտաւորում են ինձ կարողութեանս
չափով՝ նազաստել ձեր որդւոյ գասահարա-
կութեանն: Ահա այս նպատակով մի քանի
նամակների միջնորդութեամբ ես հաղոր-
դելու եմ ձեզ այն, ինչոր այդ հարցի վերա-
բերութեամբ յայանի է առօրեայ կեանքի
փորձերից և արդի մանկավարժական գի-
տութիւնից.

Ժան Պօլն ասաց երբեմն. «Պոտե՛ք ՆԵՐ ԿԱ-
ՆԿԳՐԻՆ ՏԱՅԷՇ և մենք լաւագոյն մարդիկ
կրառնանք»: Ի՞նչ է պահաս այժմեան մայ-
րերի մեծ մասին: Ամենահասարակ բան՝
իւրեանց ապագայ կոչման համար նախա-
պատրաստութիւն: Թէպէտ անհաւատի է
թվում, բայց ճշմարիտ է, որ կնամարդոց
կրթութիւն տալու ժամանակ բոլորովին բար-
ձի թողի են առնում նոցա ապագայ և
ամենակարեղ կոչումն: Այդպիսի կրթու-
թիւնն իրաւացի և պատշաճաւոր են հա-
մարում շատերը. նոքա ասում են, որ կնա-

մարդիկ իւրեանց տպագայ կոչման՝ մայր
լինելու համար նախապատրաստովելու. կա-
րօտութիւն չունին, որովհետեւ նոքա այդ
բանի համար առաւել բնական ընդունա-
կութիւն ունին քան տղամարդիկ: Բայց
պէտք է ասել, որ շատ կնամարդիկ կամ բոլո-
րովին զուրկ են այդ ունակութիւնից կամ
թէ կրթութիւնն այնպիսի ներդործութիւն է
ունեցել նոցա վերայ, որ այդ ունակութիւնը
միաւանձին միակողմանի ուղղաթիւն է ասա-
ցել: Օրինակ. կնամարդիկ հասարակութեան
մէջ մեծ զգուշութեամբ են վարժում, իսկ երե-
խաների հետ միանգամայն կորցնում են այդ
զգուշութիւնն, որովհետեւ նոքա տեղեակ չեն
մօր պարտաւորութիւններին և նորա ու-
րախութիւններին. ուստի նոցա մնում են
միայն մայրական հոգացողութիւնն և չար-
չարանքը: Դուք զրուցէք, որ ձեր զօրու-
թեան մասին ունեցած կասկածների և եր-
կիւղե պատճառն այն է, որ փորձառու-
մայրերի բերանից լած էք շատ անդամ
գասահարակութեան դժուարութիւնների

մասին։ ԳԺԲԱՂՔԹՐԱՐ այդ տեսակ փորձառու մայրերի թիւը շատ է։ Բայց մի՞՛թէ նոցանից ոչ մին երեխաների ուրախութիւնների մասին ոչնչ պատմած չէ ձեզ։ Գիտեմ, որ այդպիսին լաւաղոյն մայրերի թիւը շատ սակաւ է մինչև անգամ հասարակութեան բարձր դասերում։ այս դասի կնամարդիկ ուսանումնեն ամեն տեսակ կարելի և տնկարելի բաներ, որովհետեւ հասարակութեան մէջ իւրեան լուսաւորեալ ցոյց տալիս հեշտ բան չէ. բայց իւր ապագայ բնական կոչման մասին կամ ոչնչ չեն լուսմ և կամ հատուկաոր բաներ են լած, այն ևս պատահմամբ, որովհետեւ նոցա կարծիքով այդ առարկացի մասին խօսելն անհամեսառութեան նշան է։ Այսպիսի ուղղութեան հետեւոքը շատ պարզ է՝ շատ մայրեր հասարակական պարտաւորութիւններով զբաղված լինելով և իւրեանց երեխաների դաստիարակութեան մասին հոգալու ժամանակ չունենալով յանձնում են նոցա աղախինների խնամառապութեանն։

Իսկ ինչ որ կվերաբերի ձեզ ես հաւատացած եմ, որ դուք ըստ ձեր ցանկութեան շատ հեշտ կը ացնէք ձեր գիտութիւնների թերութիւններն և կյաղթէք բոլոր դժուարութիւններին։ Ես ձեզ հաւատացնում եմ, որ ձեր որդւոյ վերայ ունեցած հսկողութիւնն օրի ըստ օրէ հետաքրիզիր կողմեր կրանայ ձեր առաջ մինչև այն աստիճան, որ ձեր որդւոյ ներկայութիւնից հեռու անցկացրած ժամերը ձեզ համար մի զրեկանք կթվին։ Ուրոք է առել, որ համեմատաբար ձեր զրութիւնը շատ գերազանց է, որովհետեւ դուք մի կողմից կարող եք օգուտ քաղել ուրիշների փորձերից, զրբերից և այլն։ միւս կողմից դուք ունիք բաւականին արձակ ժամանակ աղասաօրէն խորհելու ձեր մոյրական պարտաւորութիւնների մասին։ Ֆիզիքական գժուար աշխատանքը դուք կարող եք յանձնել ձեր սպասաւորներին։ Մի մոռանաք, որ կան շատ չքաւոր կնամարդիկ, որոնք բացի օրական հացի համար անգաղար հոգս և աշխատանք կրելուց, կտ-

բողանում են և երբեմն շատ լաւ կրթել
իւրեանց բազմաթիւ զաւակներին:

Վնամարդու աշխարհական գուարծու-
թիւնները շուտով կորցնում են իւրեանց
գրաւիչը յատկութիւններն և ծերութեան
ժամանակ ակնյայանի երեւումէ, որ նորա
սիրաը գաղաքի է լինում սիրուց և իւր հա-
րազատ երեխաները խորթ են երեւում և
տորս ընդհանուր հետևանքը զղջումն է:
Բոլորովին այլէ այնպիսի կնամարդու ապա-
գայն, որ իւր զաւակների բարի կրթու-
թեան և դաստիարակութեան հոգացողու-
թեան մէջ որոնում է իւր աշխատանքի
և չարչարանքի վարձարութիւնը: Նորա
սիրաը չէ գաղաքիփում, նու երբէք միայ-
նացած չէ մնում: Մայրն իւր երեխայի
հոգւյ մէջ անջնջելի տպաւորումէ իւր
ազգեցութիւնը. ոորան ապացոյց կալող է
լինիւ և այն, որ բոլոր լաւագոյն երեխի
մարդիկ, մոռաքերեւով իւրեանց ծնողներին,
մի առանձին սիրով և շնորհակալութեամբ
դառնում են դէպի իւրեանց մայրերը կամ
սոցա միշտակը:

Յանկանում եմ ձեզ ևս, նազելի ջիկին,
այնպէս բաղդաւոր լինիւ, որ համոզվիք թէ
դաստիարակել էք, այն, մի լաւագոյն
ձշմարիտ մարդ:

ՆԱՄԱԿ

Բ.

Զեր նախընթաց նամակում ես նկա-
տեցի երկու սխալ և միանգամայն վնասա-
կար կարծիք: Սակայն պէտք է ասել, որ
կան մարդիկ, որոնք այդ կարծիքները ճշշ-
մարտութիւն են ընդունում և անդադար
կրկնում նոցա: Նախ՝ դուք կարծում էք,
որ ձեր որդուց համար դեռ ևս դաստիա-
րակուհի հարկաւոր չէ, վասն զինորա (երե-
խայի) խելքի շըջանը դեռ շատ նեղ է:
Արդարեւ երկու կամ երեք եօթնեկուայ երե-
խայն դեռ շատ քիչ բանականութիւն
ունի. բայց այդ հասակում նորան մինչեւ
այն աստիճան կարելի է զեղծուցանել, որ
ձեր ամբողջ ընտանիքը մի օտարոտի բուռն



աղբեցութեան ներքոյ կընկի: Զեր երկրորդ
սխալ կարծիքն այն է, իբր թէ երեխայն
կարող է ունենալ այնպիսի բնական պառ
կասութիւններ, որոնց դէմ գաստիարաւ-
կութիւնը կամ միտհամոյն և չամ փռէր և
շառէ տնջօք է: Այս երկու սխալ կարծիքը
գաստիարակները սիրումեն առաջ բերել,
երբ նոյցա գաստիարակական դորձունէու-
թիւնը վաս հետեւանքներ է ունենում:
Սոցա սխալ լինին ապացուցանելու հա-
մար ես կոկում մանկավարժական այն և
բնական այսինքն կաշխատեմ բացատրել ձեզ,
թէ ինչպէս պէտք է վարպել տառջ երե-
խայի հետ նորա կեանքի առաջին եօթ-
նեկներում:

“Սորածին երեխայի հոգին խոր քնով
քնած է և փոքր առ փոքր զարթնումէ ար-
տապին զգայարանքներով ստացած տպառո-
րութիւնները յաճախ կրկնելով: Թէպէս
երեխայն իւր պիտոյքն արտայացաւմէ
աննշան հնչեւններով միայն, բայց կասկած
չկայ, որ այդ անումէ նա անդիտակցաբար:

Նորա աչքերը տեսնում են, բայց նա չէ
կըուում իւր աեսածը, նոյնպէս նորա ճա-
շակը բոլորովին զարգացած չէ լինում
կեանքի առաջին օրերում: Նորա համար
մի ևնոյն ճաշակին ունին իւր մօր կաթն և
կամ որ և իցէ գառն օշարակ: Այսպէս շա-
րունակվումէ մինչև որ շատ անդամ մի
ևնոյնը կրկնվելով նորա ճաշակը զարդա-
նայ: Սորանից հետեւում է, որ երեխայն
զգայական տպառութիւնները միմիանցից
զանազաննել սովորումէ միայն այն ժամա-
նակ, երբ այդ տպառորութիւնները կրկնը-
վումեն շատ անդամ: Այն ծնողքն, որոնք
զըկումէն իւրեւանց նորածին երեխանե-
րից, կարող են մի փոքր միսիթարվել նո-
րանով, որ նոյցա երեխաների հիւանդու-
թիւնն և մահն այնքան գժուարատար չեն,
ինչքան մենք կարծում ենք, որովհետե-
նքա անդիտակցական թմբած կեանքից գը-
նումէն նոյնպէս անդիտակցաբար դէպի
յաւիտենականութիւն:

Դուք զբումէք, որ ձեր սրդին բոլոր

վին առողջ է, ուստի խօսենք այժմ նորա
մասին։ Ինչպէս ամեն առողջ երեխայ, ձեր
որդին ևս իւր բնական պիտոյքներին բաւա-
կանութիւն տալուց յետոյ հանդարտ պառ-
կած սկսում է նայել իւր շուրջն եղած
առարկաներին։ Ո՞ր մայրը չե ուրախա-
նալ, երբ տեսնէ իւր որդւոյ հրաշալի
և պարզ աչքերով չորս կողմ նայելն։ Աւ-
րախութիւնից նորան ձեռն են առնում,
օրօրում են, ման են ածում սենեկումն և
ահա այդ փայփայանքներն և գգուանքներն
երեխայի վատ սովորութիւնների արմատն
են դառնում։ Մի քանի անդամ փորձե-
լով օրօրելն և մանածելն, երեխայն երբեք
հանդարտ չի սպառկիլ — եթէ նորան ցան-
կանան պառկած թողնել։ Նա կդայ, որ նո-
րան մի բան ստակաս է՝ օրօրելն և մանա-
ծելն և կակաէ գուալ մինչեւ որ նորան ձեռը
չառնեն և չմանածեն։ Սոյնպէս երեխայն
սովորում է օրօրոցի և երգի։ Նորան ըլո-
նութեամբ սովորեցնում են զանազան պի-
տոյքի և նա շուտով ընդունում է այդ սո-

վորութիւններն։ Երեխայի քնիցնելու ժա-
մանակ երգելու մասին կարելի է ասել այն,
որ մայրը դորամով արտայայտում է իւր
զգացմունքն և սէրը դէպի նա. այսպիսի
զիսպուածքում երգն ինքն իւրեան է երգ-
վում, կարծես, բայց այնուամենայնիւ աւե-
լրութ է միանգամայն և վերջը շատ ան-
հանդասութեան պատճառ կարող է լինիլ։
Այս և սորա նման սխալների պատճառն
այն է, որ մայրերը բոլըրովին տեղեակ չեն
երեխայի կեանքին։ Նթէ երեխայն գոռում
է, դորա պատճառն այն է, որ նա անցար-
մար է պառկած կամ մի ցաւ է զգում։
Բայց ուշադրութեամբ նայելու և տեղափո-
խելու փոխարէն, նորան զրկում են, օրօ-
րում են և շատ անդամ իզուր է լինում
այդ բոլըր բաներն, որովհետեւ երեխայն շա-
րունակում է գոռալ, վասն զի նորա իսկա-
կան պիտոյքը չէ բաւականացրած։ Այս-
պէս ուրեմն, եթէ ձեր որդին իւր համար
հանդարտ պառկած է և ուշադրութեամբ
իւր չորս կողմն է նայում, այդ նշանակում

է, որ նորա բոլոր պիտոյքը բաւականացրած
է և ինքն իւրեան շատ լաւ է զգում: Ձեռը
մի տաք նորան և մի թողնէք, որ նորան
ուրիշները ձեռը տան—թող պառկի այն-
քան, որքան ցանկանումէ: Ես լաւ գիտեմ,
որ դուք այդպիսի ժամանակ կցանկանայիք
նորան դրկել. բայց մի մոռանաք, որ այդ
ըստէական վուարձութիւնն ապադայում
շատ անքուն գիշերների և ձանձրացուցիչ
օրօմննքի պատճառ կդառնայ: Ես փորձով
դիտեմ, որ լաւ սովորեցրած երեխայն ոչ
թէ չէ պահանջում իւրեան օրօրել, այլ
դուռըմէ, երբ նորան մի օտար մարդ գրկում
և կամ օրօրումէ: Գոռալու պատճառը շատ
հասկանալի է, իսանդարումեն նորա հան-
դատութիւնն, որ սովորութիւնից նորա պի-
տոյքն է դարձել:

Այսպէս ուրեմն, դուք կարող եք երե-
խային տալ ձեր ցանկացած լու սովորու-
թիւններն, եթէ դոյց յաճախ կրկնէք,
միանդամայն հեռացնելով վատերը: Բացի
սորանից երեխայի դաստիարակութեան ժա-

մանակ հարկաւոր է կանոնաւոր կենցաղա-
վարութիւն: Կարելի է երեխայի ամենօրեայ
կեանքից առնել մի որևիցէ իրողութիւն՝
օրինակի, լողացնելն և այդ իրողութեան
յարմար կարգաւորել նորա օրուան բոլոր
պիտոյքները: Լողացնելուց յետոյ երեխայն
բաւական երկար ժամանակ քնումէ: ուստի
եթէ նորան միշտ միենցն ժամանակ լո-
ղացնեն, մայրը կանոնաւարապէս կունենայ
մի քանի աղատ ժամերը: Երբ նա կզարթի,
նորա պիտոյքը բաւականացնելուց յետոյ,
նորան այնպէս աեղաւորեցէք, որ կարողա-
նայ աւեմնել սենեկում եղողների շարժո-
ղութիւնները, լսել նոյց ձայներն և այն:

Մի քանի ժամանակից յետոյ, երբ ձեր
որդին 2—3 ամսական կդառնայ, հարկա-
ւոր կլինի դրաւել նորա ուշադրութիւնը,
զառնալով դէսի նա զանազան սիրոյ բա-
ռերով, նշաններով և այն: Հաւ կլինի, եթէ
սենեկը տաք է, քանդել նորա փաթա-
թաններն և նորա ձեռքոյիներով և ոտիկ-
ներով զանազան փոքր շարժողութիւններ

անել։ Եթէ այս տեսակ ամեն օր մի որոշ շեալ ժամանակ — օրինակ կէս օրին — կպարապիք երեխայի հետ, նա երկար ժամանակ արթուն լինելուց յետոյ կրկին խոր քնի մէջ կընկղմի և գուք կրկին մի քանի աղատ ժամեր կունենաք ձեզ համար։ Նոյնը կրկնեցէք և երեկոյեան և երեխայն դիշերը շատ հանդիսատ կինի և ձեզ կղարթեցնէ մի երկու անգամ միայն և ոչ առաւել։ Երբ դիշերը կղարթի, գուք որքան կարելի է շուտ և առանց լացացնելու լցուցէք նորա կարիքը, շլնի թէ թողնէք նորան կուրծքի կամ ձեռների վերայ քնելու։ Գանի մեծանոյ ձեր որդին, այնքան կհեշտանայ ձեր գործն։ Երբ նա կսկսէ ժպտալ կամ ոտիկներով զանազան շարժողութիւններ անել, հարկաւոր է խսկյն ազատել նորան փաթաթաններից և թողնել խաղալու մինչև յոդնին։ Ի՞նչպէս արագ ծիծաղելի և հրաշալի շարծողութիւննէր է անում նա իւր կարճ ոտիկներով և ձեռքոյկներով։ Ի՞նչպէս ուրախութեամբ գուռումէ նա թափ

տալով դլուխն և խւր պարզ և կայտառ աքերն այս և այն կողմը շրջելով։ Կո ծանօթ եմ այնպիսի ինամարդոց հետ որոնք իւրեանց երիտասարդութիւնը անցկացրել են հասարակութեան մէջ և միջին հասակում մայրեր գտառնալուց յետոյ իւրեանց նույիրել են բոլըրովին իւրեանց երեխաներին։ Նոքա ցաւով մասքերում են իզուր և անօդուտ փորուսած ժամանակն, ասելով, որ կնամարդն իւր խսկական բաղդաւորութիւնը կարող է առանալ միայն իւր երեխայից։



Դուք զրումէք, որ ամառը ձեր որ դոյն մասկիր էք, որքան կարելի է երկար ժամանակ բայց օդի մէջ պահել, դայեւ կի հետ ուղարկել այնպիսի պարտէզներ և այդիներ, ուր ժողովում են շատ երեխաներ։ Ս. Յ. Դ շատ լաւ միաք է. բայց նախ

ինքեանքը անձամբ նայեցէք այդ տեղերն
և ապա թոյլ տուէք, որ ձեր որդոյն այն-
տեղ տանեն: Այդ տեղերում լաւ բաներ
շատ քիչ են, իսկ վատերն անթիւ: Ես
այդ զբանարանները քննելուց և հետագօ-
տելուց յետոյ այն եզրակացութեանը հա-
սայ որ դոքա ըստ մեծի մասին երեխանե-
րի համար զանազան ցաւերի աղքիւներ
են դառնում և միանդամայն վասակար
ներգործում նոցա վերսյ: Հարցը պար-
զելու համար մի օրինակ բերեմ. ահա մի
երեխայ նստած է իւր սայլակում. արևի
ձառագայթներն ուղղակի նորա երեսի վե-
րայ ընկերով խոտայնումեն նորա աշ-
քերը—բայց դայեակն ուշք չէ դարձնում
դոքա վերսյ. երեխայն կամենումէ վազ-
վզել և շարժումէ իւր ոտիկները—բայց
այդ դայեկի համար նեղութիւն է, որով
հետեւ այն ժամանակ հարկաւոր է երե-
խայի ձեռիցը բոնել, հսկել, որ վայր չընկ-
նի, չկեղուուէ իւր շորերն և այլն. այն
ինչ այլակի մէջ նա ապահով է ամեն
փորձանքներից, իսկ դայեակն ազատօրէն մի

կրկու ժամ կարող է իւր ընկերուհւոյ
հետ քաղցը խօսակցութիւն անել: Անց-
նումէ մի փոքր միջոց, երեխայն բեզարում
է նստելուց և սկսում է լալ: Դայնակը
նեղանում է, որ նորա խօսակցութիւնն
ընդմիջեցին, սկսումէ երեխային հայհո-
յել և մինչև անգամ ծեծել, դիտենա-
լով որ գանգատելու չէ երեխայն: Փոքրինչ
հասակը առած երեխաները զբօնարաննե-
րում սովորում են այլ և այլ յիշոցներ:
Ծնողքը զարմանում են, թէ որտեղից նո-
ցա երեխաները սովորում են այդպիսի խօս-
քեր, երբ իւրեանք չեն դորձածում տա-
նը այդ բառերն) և չգանելով այդ հարցին
պատասխան, նորա այդ մեկնում են երե-
խայի բնական յատկութեամբ: Կան և
այնպիսի դայեակներ, որոնք երեխաներին
հանդարտ նստել են տալիս, վախճեցնե-
լով նոցա պէսպէս յիմար բաներով: Այդ
տեսակ դայեակներն առաջիններից առա-
ւել վետակար են: Իմ կարծիքով երե-
խային աչ և դողի մէջ պահելը քըէա-

կան յանցանք է. բարկութիւնն և ծեծն
երեխայն կարողէ մոռանալ, բայց վախը
տանջումէ նորան օր և գիշեր:

Կան և դայեակներ (լաւագոյններ), որոնք
երեխային թոյլ են տալիս խաղալու միւս
երեխաների հետ, բայց այս պարագայում
ևս երեխայն ապահով չէ դայեկի արը-
տունջից և անիրաւացի հարուածներից. ըստ
որում երեխաները խաղալու ժամանակ
կովումնեն միմեանց հետ, որով և զայ-
րացնում դայեկին: Փոքր երեխաները շատ
զգալի են դէպի անարդարութիւնն և թէ
նոքա շատ անդամ ենթարկվին կամակը
և անիրաւացի վարմանիքի (ինչոր կարելի է
յուսալ ամեն մի տգէտ մարդուց), այն
ժամանակ նոցա մէջ կզարդանայ մի ատե-
լութիւն նախ դէպի իւր դայեակն և ապա
դէպի ամէնքը. մի խօսքով նոքա կչարանան
և կյամառանան:

Այսպէս ուրեմն, լաւ դայեակներ չկան.
բայց պէտք է որ լինին, ըստ ուրում դուք
շատ անդամ հարկադրսած կլինիք ձեր

որդւոյն օտարներին յանձնել: « Ուրեմն,
ի՞նչ անեմ» կհարցնէք դուք: Դմ՛ կար-
ծիքով այս դժուարութիւնից ազատվե-
լու. Համար ամենալաւ միջոցն այն կլինի,
որ դուք լինէտանէտ չեք որդւոյ համար մը դայ-
էան պատրաստէս: » Այս գործն այնքան զը-
մուար չէ, ինչքան գուցէ ձեզ երեւայ ըս-
կղեցից, և մանաւանդ եթէ Հասակաւոր և
փորձառու կնամարդու փոխարէն դուք մի
օրիորդ վարձէք. առաւել լաւ եթէ այդ
օրիորդը նոր աւարտած լինի իւր ուսման
ընթացքը: Հասակաւոր կնամարդուն, այն
ևս ուսմական դասից դուքս եկածին, զը-
րեթէ անհնար է մի բան սովորեցնելը, միւս
կողմից նորան ծիծաղելի և անյարմար կը-
թվի, եթէ ձեզ նման մի մատաղահաս
արկին երեխայի հետ վարմելու մասին
խրատներ տայ: Այսպէս ուրեմն վարձեցէք
մի մատաղահաս և պարկեցո օրիորդ: Այս
տեսակ օրիորդն ընդունակ կլինի և յանկու-
թիւն կունենայ բան ուսանելու առաւել,
քան թէ այլ և այլ « փորձառու » կար-

ծեցեալ կնամարդիկ: Բացի այդ, օրիորդն
այն յարմարութիւնն ունի, որ գեռ մոռա-
յած չլինելով իւր մանկութիւնը մեծ
հոգացողութիւն կունենայ երեխայի հոգե-
կան կեանքի մասին: Բայց նախ քան այդ
օրիորդին կյանձնէք ձեր որդւոյն, մի քա-
նի ժամանակ պահեցէք ձեր տանն, որ
տեսնելով դուք ինչպէս էք վարվում ե-
րեխայի հետ, սովորի ձեզանից խաղալ,
խօսել և այլ տեսակ ժամանակ անցկացնել
երեխայի հետ: Հաւատացէք, որ օրիորդը
շուտ կրմբունէ ձեր վարմունքի թէ ձեւն
և թէ յատկութիւնն, մանաւանդ ե-
թէ դուք նորա հետ ևո վարվեք մարդա-
սիրաբար: Վարվեցէք նորա հետ իբր ձեր
որդւոյ ընկերի հետ, իբր ձեր աշակերտու-
հոյ հետ, որին սիրով և կարեկցութեամբ
ուսուցանումէք: Կնչ տեսակ որ վարվեք
մատաղահաս զայեկի հետ, նոյն տեսակ
նա կվարվի և ձեր որդւոյ հետ: Մի խօս-
քով նայեցէք նորա վերայ ոչ իրմւ մի
աղախնի վերայ, այլ որպէս ձեր օդնակա-

նի վերայ: Եթէ ձեր ընարութիւնը յաջո-
ղակ լինի և գործը լսու գնայ, շուտով գուք
կտեսնէք, որ ձեր որդին մեծ յօժարու-
թեամբ կսաղայ դայեկի հետ, ինչպէս և
ձեր հետ: Սկզբում կարճ միջոցով յանձ-
նեցէք ձեր որդւոյն դայեկին այն ևս տա-
նը, յետոյ թողէք, որ տանի գրօննելու
մօտակայ և միայնակեայ տեղ: Ձեր որդին
դեռ փոքր է և կարօտ չէ ընկերութեան,
ուրեմն առաւել յարմար է մօտակայ տեղ
գրօննելու ուղարկել, որ դուք ինքեանքդ
ձեր աչքով տեսնէք, թէ ուր և ինչ տե-
սակ է զրօննում ձեր որդին:

Փանի զուարթութեամբ խօսիք ձեր
որդւոյ հետ, այնքան շուտ կբացվին նո-
րա թոթով լեզուի կապերն: Երեխայի ըս-
կըքի անկատ և քաղցր բառերն այնքան
մեծ բաղդաւորութիւն են մօր համար, որ
զորանով միանդամայն վարձաարվում են
մայրական հոգացողութիւնն և չարչարան-
քըն: Այդ ժամանակ երեխայի սենեակն ու-
րախութեան և հանգստութեան պատրս-

պարան է դառնում: Գանի քանի անդամ
ես նկատել եմ, որ բաւական է երեխայի
քաղցրանուագ ձայնը լսել, նորա բառեր
արտասանելու փորձերը տեսնել, որ մարդ
բոլորովին մոռանայ ամեն մի հոգս, զբաղ
մնեմք և կակիծ: Բայց պէտք է նախազգու-
շացնեմ, որ երեխայի հետ հարկաւոր չէ
նորա լեզուով խօսել, նախ որ շատ ծի-
ծաղելի է լսել մեծերի բերանից երեխայ-
ական արտասանութիւն և երկրորդ որ
երեխայի համար առաւել օդտաւէտ է
ամեն բանի խսկական անունը լսել. խակ մի-
միսցն զրւարձութեան համար զոհել երե-
խայի օդուտը հարկաւորութիւն չկայ, մու-
նաւանդ որ առանց դրւան ևս զուարձու-
թեան նիւթ շատ է մնում:

Ազիտեմ, կարողանումէ արդեօք ձեր
որդին արդին նստել թէ ոչ: Եթէ ոչ — թող
սպառկած մնայ մինչեւ որ ինքն իւրեան
բարձրանայ, որովհետեւ, երբ նա ունենայ
բարձրանայու զօրութիւն, առանց մի որ և
իցէ օգնութեան կնատի, ասկա կկանգնի և

վերջապէս կսկսէ մանդալ պատերը կամ
սենեկի կարսալիքը բռնելով: Զգուշացէք
զանազան փութայուցիչ միջոցներ դործա-
ծելուց — այդ ձեր որդւոյն անուղղելի մնաս
կպատճառէ: Խակ ձեզ համար մի և նոյն
է նորա ծիծաղաշարժ հաւասարակշռու-
թեան փորձերը մի քանի եօթնեակ առաջ
տեսնել թէ ոչ:

Դուք հարցնում էք. թէ հարկաւոր
է ձեր որդւոյն խաղալիքներ տալ թէ ոչ:
Ոչ. մի՛ տաք: Ձեր որդւոյ համար այժմ
նորան շրջապատող բոլոր բնութիւնը խա-
ղալեք է: Սենեկի կարասիքը, մարդիկը, նո-
ցա պարապմունքը, կենդանիները, փողոցից
անցեղարձ անող կառքերը, մի խօսքով
ամեն մի բան զրաւումէ նորա ուշադրու-
թիւնն: Այժմ հարկաւոր է փոքր առ փո-
քը ձեր որդւոյն սովորեցնել ինքնուրոյն
խաղալու — ի հարկէ ձեր ներկայութեամբ:
Օրինակի համար ես ձեզ կպատմեմ, ինչ-
պէս անումէ այդ մի արհեստաւորի կին,
որ ի հարկէ սպասաւոր չունի և բացի իւր

որդւոյ գաստիարակելը հարկադրված է կատարել և անտէսական բոլոր պիտոյքը: Դիցուք թէ ճաշ պատրաստելու ժամանակ է: Նա նստեցնումէ իւր որդւոյն յատակի վերայ փուած ծածկոցի վերայ և ինքը սկսումէ իւր գործը, պատմելով երեսխային իւր ամեն մի շարժմունքն: «Ահա նայիր ես վառարանում փայտ եմ դնում,» ասումէ նա, «ինչպէս մեծ փայտեր են, ինչպէս ձայն են հանումնոքա: Ահա այժմ վառումեմ. իսկ այժմ մեծ անօթի մէջ ջուր եմ ածում. լսումես, ինչ ձայն է արձակում ջուրը. այժմ ջրի մէջ ձգում եմ գետնախնձոր. ահա քեզ ևս մի զոյտ կտամ, աեսնումես, ինչպէս գեղեցիկ և կոր գնդակներ ենք. և այնու Այսպէս մայրն իւր գործն է շնուռ. իսկ երեխայն հետեւում է նորա ամեն մի շարժմունքն, լսում է նորա ամեն մի բառը, գործի ժամանակ արձակած ամեն մի հնչենն և ինքն ևս պէս բացականչութիւններով և շարժողութիւններով արտայսյտումէ իւր հա-

մակլութիւնը, զարմանքն և այլ զգացմունքները: Մի խօսքով նորա արտաքին զգայարանքները զբաղված են, նա չէ բեզզարում և իւր մօր գործին չէ խանդարում: Խօսք չկայ, որ լուսաւորեալ մօր համար առաւել հեշտ է զբաղեցնել իւր որդւոյ արտաքին զգայարանքներն և մի և նոյն ժամանակ իւր գործն անել: Դորա համար հարկաւոր է միայն զիաենալ, ինչպէս պէտք է խօսել երեխայի հետ և խօսել միայն այն առարկաների մասին, որոնք մօտ են կամ այն հնչենների մասին, որոնք լսասումեն:

Ես արդէն յիշել եմ, որ երեխայի հողին զարգանումէ զգայական տալաւորութիւնների ազգեցութեամբ. ուրեմն միշտ զբաղեցնելով նորա արտաքին զգայարանքները մենք կըսրբացնենք և նորա հոգին: Սորա համար խաղալիքներ բոլորովին աւելացր են: Օրինակ, առեւէք նորան թէ յի զրդալ: Ինչպէս նա հիանումէ, տեսնելով դրդալը, նա թիւթիւնացնումէ նորա-

նով, ամեն կողմից տնտղումէ և վերջաւպէս բերանն է դնում: Ի՞նչու: Որովհետեւ երեխայն առարկայի հեա բազմակողմանի ծանօթանալու մի բնական ձգտումն ունի: Մի փաքը մեծ երեխաները շատ անգամ կոտրում են և ոչնչացնում զանազան իրեր, միայն նորա համար, որ տեսնեն, ինչպէս է շինած կամ մէջը ի՞նչ կայ: Այսպէս ուրեմն քննադատութիւնն և դիտողականութիւնն երեխաների բնական ձգտումն են, որ հարկաւոր է զարգացնել: Անշուշտ չպէտք է թողնել, որ քննասիրութիւնից ամեն բան կոտրելու և քանդելու սովորութիւն առաջանայ:

Հատ անգամ ծնողքն և դայեակներն սւրախանում են երեխայի պէսպէս չարութիւնները տեսնելով. օրինակ, թոյլ են տալիս վայր ձգել ամեն մի ձեռքն ընկած բան, իւրեանց մաղերից քարշել, ձևանալով իր լայ են լինում և այն: Այս և տղա նման զուարձութիւնները, թէ և մինչև որոշեալ հասակն անդնաս են. բայց

նախատինքի արժանի են, եթէ կրկնվում են երեխաների այն հասակում ես, երբ նոքա ներգործում են վաքը ի շատէ գիտակցաբար: Յան այն է, որ այդպիսի զուարձութիւնները, շատ անդամ կրկնելով, երեխային սովորեցնում են չարչարելարդոց և ամեն տեսակ առարկաներ կոտրտել. Կոյնպէս շատ վատ սովորութիւն է, երբ երեխայն մի առարկայ ստացածին պէս իսկ կյան վայր է ձգում առանց հետը խաղալու: Այդ տեսակ սովորութիւնը պէտք է աշխատել ոչնչացնել կամ լաւ է ասել, պէտք է աշխատել, որ այդ տեսակ սովորութիւնների առաջն առնել: Երեխային զբաղեցնելու ժամանակ հարկաւոր չէ մի քանի առարկայ ի միասին տալ: Թոյլ առաջ զննէ մինն և նորանով խաղայ, ապա տուէք միւմն և այն: Առ հասարակ երեխայի հետ խաղալու և խօսելու ժամանակ հարկաւոր է մեծ հնարագիտութիւն: Գիւմամ, որ երբեմն այդ հնարագիտութիւնը ձեզ համար բաւական գժուար աշխատաք

կլինի, բայց գորա փոխարէն ձեր որդին բաղդաւոր և հանգիստ կլինի: Աւարտելով նամակս հարկաւոր եմ համարում կրկնել, որ երբ դուք ինքեանքդ խաղում եք ձեր որդւոյ հետ, աշխատեցէք դայեկի ներկայութեամբ անել այդ, ժամանակին այդ երկուսի համար ևս մեծ օդուտ կլինի:

ՆԱՄԱԿ

Դ.

Դուք զրումէք թէ, որ ձեր որդին արդէն փոքր առ փոքր սկսել է մանգալ, խօսել և նորա հետ խօսածը զրիթէ բոլոր հասկանումէ: Արդարեւ այդ մեծ յառաջադիմութիւն է և ես լաւ գիտեմ, որ ձեր ուրախութեանը չափ չկայ, թէպէս կան այնպիսի մայրեր, որոնք չեն ուրախանում տեսնելով երեխայի անկախութեան առաջին քայլերն: «Ո, հայ այժմ կակալի ամենա-գժուար չարչարանքի ժամանակն,» ասում են նորա, «առաջ կարելի էր նստեցնել նորան յատակի վերայ և ապահով լինիլ, որ

նա անմիսս կմնայ, իսկ այժմ ամեն մի բոսէ պէտք է վախենալ, որ չլինի թէ մի որեիցէ փորձանքը պատահի նորան:» Արդարեւ երբ երեխայն ոտք է ելանում, այնուահետեւ նա աղատ չէ փորձանքներից: Օրինակ նա կարող է վայր ընկնիլ, այսինքն և այն և այս բոլոր պատճառում են սարսափելի գուոց և լայ, ուստի նախ տեսնենք ի՞նչ հարներով դուք կարող էք ձեր որդւոյն պաշտպանել զանազան մեծ փորձանքներից, որոնք նորա փորձառու և ճարապիկ չլինելուց են առաջ գալիս: Չնչին փորձանքից բոլորովին ապահով պահէլ երեխային անհնար է, եթէ չենք կամենում նստեցնել նորան այնպիսի մի սենեկում, ուր ոչ կահ կարասիք կայ և ոչայլ առարկայ և պատերն և յատակը բարձերով և կակուղ բաներով են զարդարած միայն: Պէտք է ասել, որ հարկաւորութիւն ևս չկայ պաշտպանել նորան ամեն մի փորձանքից և հեռացնել նորան ամեն մի անակտորութիւնից, որովհետեւ երեխայն

Հարցէ է կարօտ, բայցի այդ, թէ գուք յանահանումէք, որ ձեր որդին խնքնապաշտպանութեան սովորի, պէտք է երբեմն դիտութեամբ նորան այլ և այլ փոքր փորձանք ների մէջ ձգէք: Պարզեմ միաքա: Զեր որդւոյն գուք պէտք է սովորեցնէք միայն մընալու, ասենք թէ նա մնայ այնպիսի մի սենեկում, ուր տաք վառարան կայ. իհարկէ երեխայն կմօտենայ վառարանին և շատ հաւանական է, որ այրվի: Այս փորձանքից պաշտպանելու համար երկու միջոց կայ. կամ վառարանի առաջը վանդակապատ չինէք, որ երեխայն վառարանին չհամնի և կամ երեխային պէտք է տանէք վառարանի մօտ և պատմէք նորան վառարանի օգուտը. օրինակ, թէ առանց վառարանի սենեկում ցուրտ կլինէր, ճաշ չէր կարելի պատրաստել և այնու յետոյ ասէք, «պէտք է զգուշանալ վառարանից, որովհետեւ տես ինչպէս տաք է,» ոյս ասելով նորա մատը կայրէք այնպիսի մի տեղ, որ այնքան տաք չէ, բայց որ մի փոքր եցաւեցնէ նո-

րա մատը: Կամ թէ մօտեցրէք նորան մի մեծ բոցի մօտ, այնպէս որ մի քանի վայրկեան սաստիկ և գտալի կերպով լուսաւորէ նորա երեսը. յետոյ առէք մի թղթի կտոր և ձգեցէք կրակի մէջ, որ այրվի, իսկ երեխային այս ցոյց տալով պատմեցէք որ ամեն բան—նորա շորերը, ձեռնիկներն և այն—նոյնպէս կարող են այրվել. ուստի զգուշացրէք, որ չմօտենայ վառարանին, նա գեռ փոքր է և այնու: Աթէ բոցն այնքան սաստիկ էր, որ կարողանար տպաւորութիւն թողնել նորա վերայ, երեխայն միշտ կհեռանայ կրակից:

Կարծեմ գուք կը համաձայնիք, որ երեխային կրակից դղուշացնելու համար վերոյիշեալ միջոցն առաւել լաւ է, քանի թէ զանազան վանդակապատներ և այլ հնարներ գործածելու:

Բայց գուցէ գուք կարծումէք, որ առաւել լաւ կլինէր թողնել այդ փորձը մինչեւ ձեր որդւոյ մեծանալու: Այդ եւս կարելի էր անել, բայց ցաւն այն է, որ մին-

չեւ մեծանալը նա կարողէ միանդամ սաս-
տիկ այլվել և այն ժամանակ այդ դառը
փորձից յետոյ նա ինքը շատ լաւ կիմանայ
վառարանի սպառնած վտանգը:

“Այնպէս դուք կարող էք բացատրել և
բոլոր առաք առարկաներից առաջացած վլ-
նասներն:

Ասել անդամ հարկաւոր չէ, որ բոլոր
վտանգաւոր բաները—ըստին և այն պէտք
է այնպիսի տեղ պահել, որ երեխայն չը-
կարողանայ առնել: Բայց այնուամենայնիւ
պէտք է նորան բացատրէք նոցա վտանգա-
ւորութիւնն, որովհետեւ պատահամի ե-
րեխայն կարող է գտնել սրահում մի լուց-
կի և արդէն ծանօթ լինելով նորա վառե-
լու եղանակին, կցանկանայ նոյնն անել և ին-
քնն. ի հարկէ իւր անփորձութիւնից մի
որ և իցէ մնաս կպատճառէ իւրեան: Աւսափ
լուցկւով այլրեցէք մի քանի
թերթ թռողթ ի միասին, որ բոցը մեծ
սպառորութիւն թողնէ նորա վերայ. այս
պարագայում ևս սպառմեցէք նորան լուց-

կոյ օգուտն և ասացէք, որ իւր համար
նոքա գեռ վտանգաւոր են. որովհետեւ նա
փոքր է, չպէտք է ձեռք տայ, ապա թէ ոչ
. . . ևայն: Հաւատացած եղէք, որ ե-
րեխայն դորանից յետոյ միշտ երբ մի լուց-
կի գտնէ, իսկոյն մեծ ուրախութեամբ
զայտնէ իւր գիւտի մասին:

“Այնպէս շատ հաւանական է, որ զա-
նազան սուր բաներ կդտնէ. գնտա-
սեղ, մեխ ևայն և դտածին պէս իսկոյն
կառնէ: Երեխաներն առհասարակ սիրում
են մանր մնանք բաներ ժաղովել իւրեանց
ձեռքովիներով: Ի՞նչ պիտի անել այսպիսի
պարագայում: Մեծ զգուշութիւն է հար-
կաւոր, որովհետեւ այդ տեսակ զիւտն ե-
րեխայի համար շատ վատ հետեւանք կա-
րող է ունենալ: Առաւել լաւ կլինի, եթէ
երեխային ֆրիզով ցոյց տան, ինչպէս նա կա-
րող է ծակել իւր ձեռքն այդ սուր բա-
ներով. միեւնոյն ժամանակն ասացէք նորան,
որ երբ նա գտնէ գնդասեղ կամ մեխ,
իսկոյն թող զգուշութեամբ ցցէ կարի բար-

ձի վերայ և ցոյց տուէք ինչպէս հարկաւ տոր է այդ անել. նոյնպէս զգուշացրէք, որ երբ ձեռումն ունի մի որեկցէ տուր բան, չվազվէ, ապա թէ ոչ առաւել սաստիկ կծակէ իւր ձեռը, քան թէ դուք ծակեցիք:

Ես տեսել եմ մի տասնամսեայ երեխայ, որ սովորել էր սենեկի ծաղիկների տերեւները կարտել, իսկ երբ արգելում էին նորան այդ դորձողութիւնը, սկսում էր գոռալ և լալ: Այս վատ սովորութիւնից ազատվելու համար, մի անգամ նորա ձեռը ծակեցին վարդենւոյ փշոտ ճիւղավ դորանով երեխայն զգաստացաւ և թողեց իւր սովորութիւնը: Պէտք էր տեսնել, ինչպէս ծիծաղելի կերպով նա մօտեցնում էր իւր երկու մասները վարդենւոյն, բայց չէր համարձակվում ձեռք տալ — վախենում էր: Այս միջոցն իմ կարծիքով առաւել լաւ է, քան թէ այն, որ սովորաբար անումէն՝ սուր և կտրող բոլոր բաները պահել, որ երեխայն մի որեկցէ կերպով ձեռք բերէ պահածն և կարէ կամ ծակէ

իւր ձեռն, որից յառաջացած վտանգն երբեմն շատ խիստ է լինում: Առհասարակ աշխատեցէք երեխային ամեն մի յարմար պարագայում փորձառու շնորհի: Օրինակ՝ երբ նա կդիպչի սեղանին կամ բաղմնոցին — ասացէք, որ մի որ և իցէ կարասիքի մօափց անցկենալու ժամանակ պէտք է մի ձեռուլ ամուր բռնել նորա անկիւնից և սովորեցրէք, ինչպէս անէ: Գուցէ դուք կարծում էք, որ ես շատ մանր մօւնր բաների ետևն եմ ընկել, բայց նաև՝ դաստիարակութեան մէջ մանր բան չկայ և երկրորդ՝ վերույշեալ միջոցները ձեզ յետագայ նպատակներին կհասցնեն. ա.) կբազմացնեն ձեր որդույ փորձառութիւնն սցսինքն նորա գիտութիւնը, բ.) դուք կը սովորեցնէք նորան փոքր փորձանքներից նորէն ոպաշտապանել, որով նա կզգայ իւր մէջ զօրութիւն և չի վախենալ վտանգից. օրինակ, երեխայն ասում է. «Ես չեմ վախենում վառարանից, մայրիկ, այնպէս չէ, ես չեմ մօտենալ նորան, այնպէս չէ, կրակն ինձ չի

այրել, այնպէս չէ դանակը . . . » և այն .
դ.) ձեր որդին կակսէ ձեզ հաւատալ, տես-
նելով որ ձեր բողոք ասածը ճշմարտութիւն
է և թէ դուք նորան բարի էք ցանկանում:
Երբ նա զգաց այս, նա միշտ ձեր ասածը
կիատարէ, մինչև անդամ եթէ չհակա-
նայ հրամանի նպատակն և պատճառը:
Վերջապէս դ.) Երեխայն կզգայ, որ ձեզա-
նից և առհասարակ մեծերից կախումն ու-
նի: Նա կհասկանայ, որ ինքը շատ բան չի
կարող անել, բայց մարդիկն և դայեակն
կարող են: Սորանից հետումէ շնորհակա-
ռութեան և երախտադիմութեան զգա-
ցումն:

Աշխատեցէք, որ դայեակն ևս վարվի ե-
րեխայի հետ այնպէս, ինչպէս վարվումէք
դուք: Եթէ անակնկալ կերպով մի փոր-
ձանք պատահի երեխայնն—առանց դոյց
անկարելի է—աշխատեցէք ցոյց տալ, որ
նոյն էր մեղաւոր, որովհետև զիտէր նոյ-
նին կարող էր ազատվել այդ փորձանկից,
բայց անզգոյշ եղաւեայն:

Տղէտ դայեակներն այդպիսի դէպքերում
հակառակ են գործում: օրինակ, եթէ
երեխայն աթոռին դիպաւ, նոքա իսկոյն
մեղքն աթոռի վերայ են ձգում, ասելով՝
«անպիտան աթոռ, գառնուկիս վայր ձգեցիր,
ահա քեզ գառնուկ փայտ, առ և մի լաւ
ծեծիր աթոռին» այդպէս, այդպէս . . . :
Երեխայն աթոռին մի քանի հարուած տա-
լուցյետոյ, արդարե հանդարտվումէ, բայց
հանդարտվելու պատճառն այն է, որ նա
իւր սրբագրութեանը բաւականութիւն է
տալիս:

Դորա փոխարէն հարկաւոր է ասել. «ա-
հա գառնուկ, կրկին վայր ընկալ, որովհետեւ
անզգոյշ էիր: արի զլուխտ համբուրեմ և
կամցինայ, բայց միւս անդամ զգոյշ եղիր:»
Ամենից լաւն է ընկատել փոքր փորձանկ-
ներն և երեխայի ուշադրութիւնը մի այլ
առարկայի վերայ դարձնել: Շատ անդամ
պատահումէ, որ երեխայն մի բանի դիպքերուց
կամ վայր ընկնելուց յետոյ իւր շուրջն է
նայում, որ տեսնէ մարդ կայ թէ ոչ: Ե-

թէ կայ ընտանի մարդ — սկսումէ գոռալ։
իսկ եթէ ոչոք չկայ կամ մի օտար մարդ է,
մնումէ հանդարտ, կարծես թէ նա չէր ընկ-
նողս։ Այնումէ և այսպէս, ընկնումէ երե-
խայն և չէ բարձրանում, այլ մնումէ ըն-
կած, թէ չէ լավիս։ Բայց ասացէք, «վեր
կաց, գտանուկ» — իսկոյն սկսումէ լու։

ՆԱՄԱԿ

Ե.

Դուք արդէն ձեր որդւոյն սովորեցրել էք
զանազան վտանգներից ինքն իւրեան պաշտ-
պանելու միջոցներն, այժմ ձեր պարտա-
կանութիւնն է սովորեցնել իւրաքանչիւր
պարագայում ինքն իւրեան օգնելու մի-
ջոցներն։ Վասնորդյ աշխատեցէ որդուն իտ-
րելի է Քիչ ծտուայել նորան։ Օրինակ, եթէ
նորս խաղալիքը վայր ընկաւ, թող ինքը
բարձրացնէ։ Եթէ ցանկանումէ լուսամտից
նայել, թող ինքն աթոռը լուսամտին մօ-
տեցնէ և բարձրանայ. միայն զդուշացրէք,
որ վայր չընկնի։ Աթէ խաղաղունդը բազ-

մոցի կամ սեղանի տակը դլրովեցաւ, տուէք
նորան մի փայտ, որովթող գուրս դլրէ
նորան և այլն։ Քնելու ժամանակ աշխա-
տեցէք, որ ինքը հանէ իւր շորերն և
անկողին մանին։ Նոյնպէս սովորեցրէք նորան,
որքան կարելի է շուտ հագնվի և լուաց-
վի առանց ուրիշի օգնութեան։ Համա-
ձայն եմ, որ այս վերջնը մի փոքր զը-
ժուար է, բայց հարկաւոր է կամեցողութիւն
ունենալ և շուտով կհեռանան բոլոր գը-
ժուարութիւնները։

Բայց դուք կարող էք ասել, որ եթէ
երեխայն լու չկարողացաւ լուացվիլ, ի՞նչ
արած։ Ես պատասխանում եմ. մի անդամ,
հինգ անդամ, տասն անդամ չկարողացաւ,
վերայ մետասաներորդ անդամը կկարողա-
նայ — հարկաւոր է համբերութիւն։ Վերջ
ի վերջոյ նա զրեթէ առանց ում և իցէ օգ-
նութեան կլուացվի։ Երեխայն լուացվի-
լու ժամանակ որպէս վեհագուստը չմըր-
ջէ, որ հիւանդութիւն կարող է պատճառ-
աել, հարկաւոր է նաև՝ ամելիկական

մօմազօծ կտաւից ղենջակ բանեցնել.
լաւ կլինի, եթէ ղենջակը մինչև պա-
րանոցն և ուսերը հանի, երկրորդ՝ շապիկ
թեզանիքը բարձրացնել մինչև ուսերն:

Երեխայի զգեստն որքան կարելի է հա-
սարակ է լինելու, ապա թէ ոչ առանց օդ-
նութեան գժուար թէ կարողանայ հադ-
ախիլ: Ես շատ լաւ գիտեմ, որ իմ ա-
ռաջարկած ձեւը հեշտ չէ, պահանջում է
առաւել շատ ժամանակ և համբերու-
թիւն, քան թէ հին ձեւն, երբ դայեախին
է կատարում ամեն բան և հինգ բողե-
ում արդէն բոլըրովին պրծած է ամենայն
ինչ: Բայց իմ տուած խորհուրդները պահ-
պանելն այն արժանաւորութիւնն ունի,
որ երեխայն շուտով հասկանումէ և գի-
տակցում, որ շատ բան ինքն ևս կարողէ
անել և ինչ որ երեխայի ձեռից դալիս է,
նա յօժարաւթեամբ կատարումէ և մինչև
անդամ լաց է լինում, երբ նորա փոխա-
րէն ուրիշն անէ սցու բանն:

Երեխաները սիրում են գործունէու-

թիւն, ուստի պատրաստ են միշտ որ և
իցէ ծառայութիւն անել: Հարկաւոր է այդ
ձգտութից օգուտ քաղել և երեխային փո-
քը և հեշտ յանձնարարութիւններ տալ.
գեր այս բանը, տար, դիր, կանչիր» ևայն:
Զմոռանաք ամեն մի ծառայութեան հա-
մար շնորհակալութիւն անելու, մանաւանդ
եթէնորաարածը համեմատաբար գժուար
բան էր: Հարկաւորէ շնորհակալութիւն
անել, որովհետեւ երեխայն ուրախանում
է, երբ մի որ և իցէ գործ է կատարում,
սորանով զարգանում է նորա գործունէ-
ութիւնն և ճարպիկութիւնն և բացի այս
նա սկսումէ հասկանալ, թէ ինչէ նշանաւ
կում « շնորհակալ լինիլ, ի՞նչու համար
և երբ են շնորհակալ լինում:

Այս այնպիսի դաստիարակներ, որոնք
ակամայ և անգիտակցաբար բնաջինջ են
անում երեխայի ինքնագործունէութիւնն
և ինքնահաւասարիութիւնը: Զեր որդին,
ինչպէս ամեն մի երեխայ կցանկանայ նմանիլ
մեծերին գործով և խօսքով և այս կանէ

կատակերգաբար և պարզամտաբար: Այս
պարագայում պէտք է աշխատել միան-
գամայն բարձրաձայն չծիծաղել, որով-
հետեւ երեխայի ձգտութների վերայ ծի-
ծաղելն աններելի է: Զպէտք է ծիծաղել
երեխայի խօսքերի վերայ, որ չլինի թէ դո-
րանից նա գաղտամիտ գառնայ. այս ի՞նքն
վախենայ իւր կարծիքները յայտնելուց:
Զպէտք է ծիծաղել նորա անձարակիու-
թեան վերայ, որ չլինի թէ մեր ծիծաղով
մեռյնենք նորա մէջ գործունէութեան
ձգտումք: Զմոռանաք, որ ծաղըն և հեգա-
նութիւնը պատիժներ են: Նոքա ժամաս-
նակին կարող են լաւ գաստիարակական
միջոց դառնալ, նոցանով կարելի կինի
հասակաւոր (վեց տարեկանից սկսած) եւ
բախաների ծուլութեան և անուշադրու-
թեան առաջն առնել, բայց եթէ գործ-
ածնենք նոյն միջոցները փոքր երեխաների
համար ես, մենք նոցա գաղտամիտ և ան-
խղճանանք դառնալու չարաչար պատճառը
կդառնաք:

Կոյնալէս վնասակար է շատերի (մինչեւ
անգամ լուսաւորեալների) սովորութիւնը
ծաղըել երեխայի պարզամտութիւնն և առ-
հասարակ յիմարացնել նորան: Երեխանե-
րն այդպիսի մարդոց ոչ միայն չեն սիրում,
այլ և սիսում են ատել:

Առաջիկայ տօների առթիւ դուք մը-
տածումէք ի՞նչ տեսակ խաղալիքներ գը-
նել ձեր որդւոյ համար: Արդարեւ բաւա-
կան կարևոր հոգս է այդ: Շատ ուղիղ է
այն կարծիքը, թէ խաղն երեխայի համար
ծանր աշխատանք է և երեխայի խաղե-
րից կարելի է նախագուշակել, թէ ի՞նչ տե-
սակ մարդ է դառնալու նա: Այս պարա-
գայս աչքիս առաջն ունենալով հարկա-
ւոր եմ համարում խօսել խաղալիքների
մասին. ուստի հրաւիրումեմ ձեր ուշա-
դրութիւնը դէպի հետեւալ նկատողու-
թիւնները:

Գնեցէք ձեր որդւոյ համար այնպիսի
խաղալիքներ, որով նա կարողանայ խա-
ղալ: Դուք ժպտումէք ասածներիս վե-

բայ, բայց ևս խօսում եմ հաստատապէս վաճառանոցներում եղած շքեղ խաղալիքների մեծ մասը նայելու համար է շենած և ոչ խաղալու: Խսկ երեխաննըրը փութով ձեռիցը թողնումեն այդպիսի խաղալիքներ, թէև լինէին նոքա գեղեցիկ և շքեղատես, որովհետեւ դոցա երեխայական գործունէութեան յարմարացնել չէ կարելի: Աւ խաղալիքը պէտք է լինի հասարակ, ամուր և գանազան խաղերի յարմար: Օրինակ, խաղագունդը, կէզին, մանաւանդ արկղները լի տեսակտեսակ փայտի կտորներով շենութեան համար, փայտի կտորներ կենդանիների պատկերներով այլ ժողովածոներով զարդարած: Նայեցէք ձբաւոր ընտանիքի երեխանների խաղալիքներին. ի՞նչէք տեսնում. գոյնզզոյն լրիաններ, որոնցից նոքա այլ և այլ ձեւեր են կազմում. մի քանի փայտի կտորներ, թոկեր և երեխն մի արժանադին սայլակ նրեխանները դացանով ևս կարողանում են շատ տեսակ ձեւերպեր իւրեանց խաղերն:

Եթէ դուք ցանկանում էք ձեր որդւոյն ձանձրացնել, գնեցէք որքան կարելի է շատ խաղալիքներ. սորանից լաւ միջոցչկայ: Նայեցէք, օրինակ, հարիւրաւոր խաղալիքներով շըջապատած մի երեխայի վերայ: Նասկզբում երեխայական յափշտակութեամբ ընտրումէ նոցանից մի երկուսն և սկսումէ ի խաղալ, շուտով առաջները ձգումէ և նորերն է առնում, կրկին փոխումէ և այլն. վերջապէս բոլոր խաղալիքներն ի միասին անկարգ և խառնիխուռն թողնումէ, որովհետեւ ձանձրանումէ: Զէ կարող երեխայն մինչև անգամ իւր խաղալիքները կարգի ձգել—այդ շատ դժուար է նորահամար: Այսպիսի երեխանների դրութիւնը կարելի է համեմատել Դրեզզեն քաղաքի պատկերների երեւլի թանգարանը մի օրում նայել ցանկացողի դրութեան հետ: Սա ևս սկզբում մեծ ու շաղբութեամբ քննումէ մի քանի պատկեր, բայց վերջը ձանձրացած այս և այն կողմն է վազում և ի հարկէ ոչինչ չէ տեսնում:

ի՞նչէ սորա պատճառը։ Զավաւորութիւն
չդիտենալն և անհնարին բան ցանկանա-
լն։ Եթէ մեծերը կորցնում են իւրեանց
շափն, ուր մնաց երեխաներն, օրոնց հա-
մար հարկաւոր է, որ մեծերն որոշեն այդ
շափը։

Բայի վերոյիշեալ պատճառից կայ և
մի պատճառ, որ շատ խաղալիքներ ունե-
նաին երեխային ցաւ է պատճառում:

Անշուշտ հարկաւոր է, որ երեխային իւր
խաղալիքները կարգով պահէ և ոչ թէ
անկարգ այս և այն կողմը ձգէ. բայց կա-
րո՞ւ է արդեօք նա անել այդ, երբ խաղա-
լիքները շատ են: Երբ մի խաղալիքը ձանձ-
բացրեց նորան, նա նաև քան միւսը առնէ,
պէտք է առաջինն իւր տեղը դնէ: Գնե-
լուց առաջ ամեն մի խաղալիքն իւր տե-
ղը պէտք է զրած լինի: Զկարծէք թէ ես
տան, մեջ տնկացնեալիւն չլինելու համար
եմ ասում այս. ոչ, ծառաները՝ կարող
են կարդի ձգել, բայց պէտք է երեխայից
անշուշտ պահանջնել. որ նա ինքն ամեն

մի բան կարդի ձգէ, որով ներքին բաւարարութիւն կղզայ: Աթէ պատահի, որ պառկելուց առաջ երեխայն չժողովեց իւր խաղալիքները, դուք պէս ոք է ասէք նորանունեաս, գառնուկ, քո խաղագունդը գեանին է ընկած, մէկի ոտի տակ կընկնի, կպատռվի. Ճիդ սենեկի գրան մօտ ես թողել, մինը կղիալչի նորան—կիշացնէ. Կէզլիներդ սենեկի մշշ ես թողել, քիչմնաց ես վայր ընկնէի» և այլն: Աթէ այս բառերից յետոյ գուը աեսաք, որ երեխայն անհանդստութեան մէջ ընկաւ, թող կրկին հագնիվի և ինչոք հարին է ժողովէ: Սորանօվ հետեւողաբար երկու զգացմոնքէ զգում: անկարգութիւնից առաջ եկած անբաւականութիւն և կարգաւորութիւնից առաջ եկած—բաւականութիւն: Սորա հետեւանքն այն կընի, որ երեխայն կակսէ փոքր առ փոքր սիրել կարգաւորութիւնը:

Լաւ, մտածումէք դուք, ես պատշաճ եմ՝ կատարել ձեր խորհուրդը, բայց ինչ անեմ ազգականների և բարեկամների

ձեռից, որոնք ուղարկում են անթիւ խաղաղիներ երեխայիս համար» Ի հարկէ, չընդունել դուք չեք կարող. այլ պահեցէք և փոքր առ փոքր տուեք երեխային, այն ևս այնքան, որքան նորան հարկաւոր է մի անգամից: Կարելի է նոյնպէս մի քանիսըն ընծայել չքաւոր երեխաներին:

Երեխաների համար շատ օգտակատ են և մեծ զուարժութիւն կապահանեն պատսկերագրդ գրքերն, որոնք երեխայի ընդհանուր զարգացման, մանաւանդ նորա ճաշակի զարգացման համար մեծ նշանակութիւն ունին: Բայց պէտք է զգոյշ լինիլ այդ տեսակ գրքեր ընտրելու ժամանակ, որովհետեւ արդի մանկական գրականութեան մէջ այդ տեսակ գրքերի թէ պարունակութիւնն և թէ պատկերները չեն կարող զարգացուցիչ նշանակութիւն ունենալ: Այդ գրքերի մէջ պատահում են այնպիսի պատկերներ, որոնք իբրև կատակերգական են, բայց իսկապէս ասելով երեխաներին վախեցնելու միջոցներ են առ

ռաւել, քան զարգացնելու. կան և այն պիսի պատկերներ, որոնք երեխային անհաւատալի կթուին: Սորա հետեւանքն այն կինի, որ երեխայն չի վախենալ ոչ մի ըսպառնալիքից և չի հաւատալ գրքերին: Այս երկու հանգամանքն ևս վատ են: Զնայելով, որ ևս յարգում եմ մտքերի ապատութեան գաղափարն և ինքս այդ մտքերի պաշտպաններից մինն եմ բայց այնու ամենայնիւ պէտք է ասեմ, որ գիրքըն երեխայի համար հեղինակութիւն (աւտորիտէտ) պէտք է լինի, այսինքն պէտք է ծառայէ երեխայի զարգացմանն և կրթութեանն. ուստի եւ երեխաներին պէտք է առաջ ամենալաւ գրքեր և պատկերներ:

Պատկերներ ցոյց տալու ժամանակ պէտք է մանրամասնաբար պատմել նկարածի պարունակութիւնն, այնպէս որ մի պատկերն ամբողջ մանրամասն պատմութիւն ներկայացնէ: Զլինի թէ մի չբացարած մասնաւորութիւն բաց թողնէք և մինչեւ

որ երեխայն մի պատկերը բաղմակողմանի չզննէ և չսերտէ, չտաք նոր պատկեր: Այս միջոցով նա կսկսէ սիրել իւր պատկերներն և վերջն ինքն առանձին նայելու ժամանակ իւրեան կատմէ ծանօթ բովանդակութիւններն երբեմն առելացնելով այնպիսի պարագաներ, որոնք դուք պատմելու ժամանակ չէիք նկատել:

ՆԱՄԱԿ

Զ

Առանց հնապանդութեան անկարելի է երեխայի բարոյական և հոգեկան կողմերը զարգացնել: Երեխային հնապանդութիւն սովորեցնելը միանգամայն դժուար բան չէ. թէ և ամենայն կողմից լավում է, որ երեխաները անհնապանդ են: Կան և այնպիսի օրինակներ, երբ մայրը, մօրաքոյրն և դայեակն ասում են թէ երեխայն անհնապանդ է, կամակոր է. իսկ հայրը կամ ուսուցիչը դովում են նորան: Այս հակածառութեան պատճառը մասսամբ այն է, որ հայրերը առ հասարակ սակաւ են տես-

նում իւրեանց զաւակներին, ուստի առաւել սակաւ են ձանաչում նոցա, քան թէ մայրերն, որոնք զրեթէ միշտ իւրեանց զաւակների հետ են լինում. բայց միւս կողմից պէտք է ասել, որ երեխաները չեն հնապանդում նոցա միայն, որոնք իւրեանց հետ վարփելու եղանակը չդիտեն: Արդարեւ շատ մայրերն երեխաների ձեռում կրակն են ընկած, մասսաւանդ եթէ երեխաներն աշխոյժ և չար են. վերջ ի վերջոյ այդ տեսակ մայրերի սպառնալիքն այն է, որ նոքա անդադար ասում են. «սպասիր հօռոդ պատմեմ», տեսնենք ի՞նչ կանես այն ժամանակի: Այս ձեւը միանդամայն անհիմն է եւ անմիտ, որովհետեւ նախ, հօր համար մեծ ախորժութիւն չէ իւր որդւոյ վախեցուցիչ առարկայ դառնան և երկրորդ՝ այս բոլոր անախորժութիւնները, դանդասաները, լայն և այն դառնացնում են գերդաստանի ուրախութիւնները, հեռացնում են զաւակները ծնողներից. իսկ խորթ զաւակներին միանդա-

մայն դժբաղդ և տառելի են դարձնում:

Երեխաների հետ վարվելու եղանակը չդիտենալով շատ զաւակասէր ծնողք խըստաբար են վարվում իւրեանց զաւակների հետ . այս ինքն՝ պատմում են այնպիսի հրաման չկատարելու համար, որ անկարելի է կատարել: Օրինակ, գնումեն այդի, պարտէզ կամ անտառ զբոնելու, երեխայն ցանկանում է երեխայաբար խաղալ, բայց թողնողն ովէ է, անդադար լըսվումէ. «Վարդան, խոտի վերայ չպառկիս, շրբերդ կիեղոստես: Ինչո՞ւ ես աւազի մէջ մտնում — կոշիկներդ աւազով կցուին: Հոգով մի խաղայ — ձեռներդ կիեղոստես: Ի՞նչո՞ւ ես քարեր ժողովում — հարկաւոր չէ: Կրկին ծառի վերայ ես բարձրանում — տեսնոր վարտիկներդ ի՞նչ եղան: Զրին մի մօտենայ, առաջ մի գնայ, յետ մի ընկնիր.» . . . Մի խօսքով սորա վերջը չկայ: Երեխայի ամեն մի քայլի առաջն առնում են «կարելի չէ» ասելով: Բայց ի՞նչէ կարելի — այդ չգիտէ նոյն ինքը հրամայողը: Ծը-

նողին ասում են. «Ճող երեխայն ուրախ ժամանակ անցկացնէ, բայց չէ կարելի իւր կամքին թողնել, ապա թէ ոչ իւր շորերը կպառառուտէ և այնու: Արդարե, դրեթէ ամեն մի արդելքի պատճառը շուրերի լու մնալու հոգն է: Մանաւանդ քաղաքներում «զուքված զարդարված» երեխաները զբոնելու են տանում ի ցոյց մարդկան, կարծես ծնողաց համար է այդ և ոչ երեխաների. ուստի պահանջնում են երեխաներից այնպիսի վարմունք, որ համապատասխան է իւրեանց վերցիշեալ սկզբունքին: Այսպէս ուրեմն, եթէ դուք ցանկանումէք հեռու մնալ պէս պէս անախորժութիւններից, մի՛ մռանաք, որ զանազան գեղեցիկ և նորելուկ շորերն երեխայի համար պէտք է սաած միանգամայն ցաւ են և ոչ ուրախութիւն: Նրեխայի շորերը պէտք է լինին յարմար, լաւ կարած և ամուր կտորից. մի խօսքով պէտք է աշխատէք, որ շորերը չխանդարեն երեխային երեխայ մնալու և այն ժամանակ

դուք կկարտղանաք արգելել երեխային մի-
այն այն, ինչ որ վնաս է, այո՛, թէ ջի-
ղեքապէս և թէ բարցյապէս։ Առ հասա-
րակ որքան կարելի է քիչ արգելքներ և
հրամաններ տուեք երեխային։ Կան այնպի-
սի ծնողք, որոնք իւրեանց խրաններով
եւ յանդիմանութիւններով այնքան են
զառնում գէպի երեխայն, որ հիւրը բոլո-
րովին ձանձրանումէ։ Այսպիսի պարագայ-
ում ծնողքն ասում են հիւրին։ «Ճնայ-
ելով մեր բոլոր հոգսերին և հակողու-
թեանն այնուամեայնիւ երեխաններս ան-
հնագանդ են։» Ճշմարիտն ասելով, այդ
տեսակ հոգսերը միանդամայն ցաւ են երե-
խանների համար, որոնք անշափ ուրախ կի-
նէին ազատիլու այդ տեսակ հոգացողու-
թիւնից։ Զանազան աւելորդ հրամաններ
տալուց ազատիլու համար, սովորեցրէք
ձեր որդուցն առօրեւայ կեանքում մի որո-
շեալ կարգի և կանոնի և թէ պատահի,
որ նա մի բան մօռացաւ, մի նեղանաք նո-
րայ վերայ, այլ յայտնեցէք ձեր զարման-

քըն, որպէս թէ մի տարօրինակ բան պա-
տահեցաւ։ Կակ հարկաւոր հրամանը կամ
արգելքն որքան կարելի է կարձառօտ ձե-
ռվ տուեք, որովհետեւ քանի քիչ բառ
ասէք, այնքան շուտ կհասկանայ երեխայն։
Բացի այս, չէ կարելի երեխային բարդ հը-
րաման տալ, օրինակ, «ժաղովիր այստեղեց
բոլոր քո թափիթփածն»։ Այս հրամանը
երեխայն չէ կարող կատարել, որովհետեւ
մի երկու բան ժաղովիլուց յետոյ, մի ա-
ռարկոյով կզրաւիլու և կսկսէ խաղալ, այս
ինքն կժողովնէ իւր գործը։ Բայց երեխայն
մեծ յօժարութեամբ կկատարէ, եթէ ա-
ռանձին հրամաններ տաք, օրինակ, «տար
ձիւ, աթոռն իւր տեղը դիր, խաղալու քա-
րելոդ արկղի մէջ պահիր և այն։»

Ամենակարեւոր կանոնը պետք է լինի
անշուշտ կատարել տալ ձեր հրամանն։
Առանց սորան անկարելի է երեխային հը-
նազաննդութիւն սովորեցնել։ Յատ դաստի-
արակներ չեն կատարում այս կանոնն, ո-
րովհետեւ երբեմն անցարմար է լինում դո-

րա կատարելն։ Օրինակ երեխայն լոբիա-
ներով իւաղալու ժամանակ թափթփեց սե-
նեկում։ Գիցուք այդ միջոցում դուք ձեր
որդւոյ հետ զբօնելու էք գնալու։ Ասում
էք երեխային, որ ժողովէ լորիաներն և դուք
գնում էք հագնիւլու։ Վերադառնալով
սինեակ տեսնում էք, որ թափածի կէսը
չէ հաւաքած։ ուստի դուք ինքեանքդ էք.
ժողովում մնացածը։ Մի լոպէում ամեն
բան պրծած է և դուք գնում էք զբօ-
նելու ձեր որդւոյ հետ։ Այս փորձից յե-
տոյ երեխայն, եթէ միւս անդամ մի անա-
խորժ յանձնարարութիւն տաք նորան, կը-
նկատէ, որ հարկաւոր է գործը յետ ձը-
գել, որ ձեր համբերութիւնը հասնի և
դուք ինքեանքդ կատարէք նորա կատարե-
լիքը։ Պատահում է և այսպիսի դէպք։ ե-
րեխայն ժողովում է լորիաները, բայց ոչ բոլո-
րն, այլ մի քանիսը մնում են բաղնոցի տակ
կամ մի որ և իցէ անկիւնում։ Դուք թէ-
պէտ տեմնում էք, բայց չտեսնելու էք
տալիս, դուցէ և դովում նորա հնագանդու-

թիւնը։ Հաւատացած կացէք, որ երեխայն
այս հանգամանքից ևս օգուտ կըաղէ և
միւս անդամ նոյն դիպուածում կաշխատի
ողքան կարելի է շատ լորիաներ մութ ան-
կիւնները կըրել, որովհետև ժողովին ա-
ռաւել դժուար է, քան թէ մի կերպով
ցան և ցիր անեն։ Այսպէս ուրեմն. միշտ
պահանջեցէք, որ ձեր մինչեւ անդամ ա-
մենաշնչին հրամանները ճշդաբար կատար-
վին, ապա թէ ոչ երեխայն շուտով
կհասկանայ, որ երբեմն կարելի է և չհա-
զանդել։

Ծնողքն իւրեանց երեխանների հետ
իմաստութեամբ և հաստատութեամբ վար-
վելու փոխարէն երբեմն յետադայ ձևե-
րըն են բանեցնում։ օրինակ, մայրը կան-
չումէ իւր երեքամեայ Տիգրանին լուաց-
վելու, բայց երեխայն լուացվել չսիրե-
լով պահ է մտնում։ Մայրն երեխային
յորդորելու համար ասումէ, «Եթէ, դառ-
նուկ, չես գայ լուացվելու, ես լաց կի-
նիմ» և փոքր ինչ սպասելուց յետոյ, ըսկ-

սումէ սուտ լաց լինիլ։ Տիգրանը կակա-
ղումէ և գալիս է լուացվելու։ Կամ ա-
սումէ մայրը։ «Գառնուի, արի լուացվիր,
քեզ քաղցրեղէն կտամ»։ Երեխայն հա-
մաձայնումէ և գալիս է լուացվելու։ Առ-
պազարում երեխային մի որ և իցէ հրա-
ման տալու ժամանակ միշտ կհարկաւորի
քաղցրեղէն խօստանալ, որ երեխայն կառ-
տարէ այդ հրամանը։ «Ի՞նչ անեմ, ասում
է մայրը, գոնեա այս երազ վարվելով երե-
խայն լսումէ»։ Բայց սաստիկ սխալում
է մայրը։ Նա ինքն իւր որդւոյն անհնա-
գանգութիւն է ուսուցանում և քաղցրե-
ղէնի սովորեցնում։ Առհասարակ երբէք չէ
պէտք պարզեներ տալ կամ գովարանել
հնազանդութիւն համար, մանաւանդ զա-
նազան խօստումներով կատարել տալ մի
որ և իցէ հրաման։ Առաջի անհնազան-
դութիւնը պատճի արժան չէ, սպառնալի-
քըն ևս անտեղի կինի, որովհետեւ նա չի-
հասկանալ։ Մի հնար կայ, օթեթև հար-
կանել։ և հանդարտութեամբ կրկնել հրա-

րամանը։ Մի մոռանաք, որ այդ հարուա-
ծը պատիւ չէ, որովհետեւ անդիմ բան կը-
լինիր պատժել երեխային անհնազանդու-
թեան համար, երբ նա հասկացողութիւնն
չունի իւր պարտականութիւնների մասին։
Հարուածը միայն կգօրացնէ ձեր հրամանն.
ուստի չպէտք է այս դէպքում ոչ նեղա-
նալ երեխայի վերայ և ոչ անօստականութ-
թիւն յարտնել, այլ պէտք է մնալ քաղց-
րադէմ ինչպէս և միշտ։ Յս շատ լաւ զի-
տեմ, որ ձեզ գժուար կլինի ձեռք բարձ-
րացնել երեխայի վերայ, բայց չկարծէք թէ
այդ խստութիւն է. ոչ։ ձեր որդին առա-
ջին հարուածից յետոյ կհասկանայ, որ
հարկաւոր է հնազանդիլ և դուք այնու-
հետեւ չեք հարկադրված լինիլ կրկնի հար-
կանել նորան։ Զեր կողմից խստութիւն
կրկնի այն հանգամանքն, եթէ գուք մի
հարուածի վոխարէն զանազան խօստում-
ներով կատարել կտաք ձեր հրամանինըն,
որովհետեւ այդ ձև վարմունքի հետևանքն
անհնազանդութիւնն է և դուք հարկա-

դրված կլինիք վերջն, երբ ձեր որդին առաւել խելքի հհամնի և իւրեան կճանաչէ, պատժել նորան և այն ևս շատ անգամ անօդուտ կլինի:

Անհապանդութեան դէմ գործ դրած միջոցներից ամենավատն երեխային այսպէս բարոյական խրատներ և յանդիմանութիւններ կարգան է: Այս դէպքում երեխասները կամ չեն հասկանում խրատողին կամ բոլորովին չեն լսում նոցա. ուստի այս միջոցը միանգամայն չէ ազդում նոցա վերայ: Պատահում է և առաւել վատն—երեխայն հասկանում և լսում է խրատները, բայց նա անախորժ տպաւորութիւն ստանալով այդյանդիմանութիւններից իւր հոգւոյ մէջ որոնում է համաձայն ընդհարնուր մարդկային օրէնքների--ընդդիմադրութիւն: Երեխաները խրատների բովանդակութիւնը չհասկանալով, ընդունում են միայն ձեւն, որ վատ տպաւորութիւն է թողնում նոցա վերայ. ուստի փոխվում են—դառնալով գուցէ առաւել խելացի,

բայց ոչ առաւել լաւ և հնապանդ :

Եթէ ծնողն ամեն մի հրաման տալու ժամանակ հարկադրված են սպառնալիք բանացնել—կարելի է հաստատ ասել, որ նոքա վատ են դաստիարակել իւրեանց երեխաներին: Ակնյայտնի է, որ այդ ծնողքըն արդէն սովորել են իւրեանց երեխաների անհապանդութեանն և չեն իրագործում, գոնեա առաջ չեն իրագործել, իւրեանց սպառնալիքն, ապա թէ ոչ նոցա երեխաները սպառնալիքի կարօտ չէին լինիլ: Մի մոռանաք, որ եթէ մի որ և իցէ սպառնալիք գործածեցիք արդէն, որքան դժուար ևս լինէր նորա իրագործելը, պէտք է անշուշտ իրագործէք: Ուստի զգոյշ եղէք թէ սպառնալու և թէ խօստումներ տալու ժամանակ և ամեն անդամ նախ լաւ մաածեցէք, կարողէք արգե՞օք իրագործել ձեր սպառնալիքը թէ ոչ: Օրինակ, հայրը ասումէ. ավահան, թէ դու չես հնապանդիլ, ըզ բօմնելու չեմ տանել: Սպառնալիքը չաղ-

դեց. ուրեմն երեխայն պէտք է տանը մնայ; Բայց մայրը ասում է. «ի՞նչողիս կարելի է երեխային տանը թողնել, մենք երեք չօրս ժամով ենք գնում». ո՞վ զիսէ, ինչ կպատահի: «Բարի, այս անդամ թող գայ, ասում է հայրը, բայց միւս անդամ անապատնառ տանը կմնայ;» Երեխայն ուրախանում է, ոչ թէ միայն նորա համար, որ այս անդամ զըօսնելու կերթայ, աղևնորա համար, որ նա միշտ կերթայ: «Ուրան տանը չէ կարելի, միայն թողնել — այդ բանը նա լսեց արդէն մօրից; Առհասարակ, թէպէտ անիրադործելի սպառնալիքները շատ անդամ կատակերգական տեսարաններ են առաջ բերում, բայց առաւել յաճախ կամ լաւ ես է առել, միշտ ծնողաց հեղինակութիւնը քանդում են; Վարտելով նամակս, կմասրերեմ ձեզ մի ամենահասարակ ծշմարտութիւնն կանոնաւոր դաստիարակված չորսամեայ երեխայն բոլորովին հնազանդ է, ուստի նա երբեք անհնազանդութեան համար չի պատճիլ:

Կամակ

Ե

Պատահել է ձեզ տեսնել մի յամառերեխայ: Նայեցէք փաքրիկ Արամի վերայ: Նորա կեղաստ այտերի վերայից կաթում են արտասոնքի կաթիլներ: Նա դեմքը ծովնելով անլուռ գոռում է. աղայեակիս հետ ճաշելու ձեմ, ցանեամում եմ, որ մայրիկս ինձն ուժաեցնէ: Օրուայ մէջ մի քանի անդամ կրկնվում է այս տեսարանը, մինչև որ լացկոտը հասնի իւր ցանկութեանը: Այդ տեսակ յամառերեխաների ծնողը միսիթարիսում են, տառելով, որ «երեխայն հաստատ բնաւորութեան տէր կլինի:» Այն ինչ այդ տեսակ յամառ երեխայն ամենի համար ձանձրակի գատնում, մանսաւանդ իւր ծնողաց համար, որնք, թէեւ ակամայ, սակայն պատճառ են նորա յամառութեան: Յամառ Արամը գեռ իւր կեանքի առաջն ամիսներում սկսում էր լսլ, երբ նորան չէին

օրօրում։ Վերջը երբ նա մի փոքր մեծացաւ, մայրը նորա հետ յետագայ կերպ էր վարվում։ «Արամ, հոգիս, ի՞նչ ես ցանկանում՝ կաթթէթէթէյ, տան հաց թէ ըստիտակ հաց կաթ և սպիտակ հաց—բարի, ահա քեզ կաթ։» Բայց երեխայն դեռ կաթը չլսմած հրաժարվում է, սպիտակ հացը ևս չէ ուտում։ «Ինքն ևս չգիտէ, ինչ է ցանկանում», ասում է մայրը, «թէյ տամ, կարելի է թէյ խմէ։» Բայց Արամը այն թասից չէ ցանկանումխմէլ, ասում է, որ թասը փոխն և այն — ձշմարիտ որ երեխայն ինքը ևս չգիտէ, ինչ է հարկաւոր նորան, այսինքն չգիտէ ինչ ընտրել, ուստի հարկաւոր չէ առաջարկել նորան և այս և այն։ Մեծերը պէտք է ընտրեն նորա փոխարէն և խրեանց ընտրածը երբէք չփոխեն ըստ ցանկութեան երեխայի։ Արամը շուտով հասկացաւ, որ նորա բոլոր ցանկութիւնները անշուշո կիստարվին։ Յետոյ նա սովորեց խր ցանկութիւնը արտայայտել

ոչ թէ խօսքերով, այլ գոռալով, թէն նա կարողանում էր խօսել։ Խզուր մայրը, Արամին հարցնում է. «ի՞նչ է լացիդ պտաճառը, զառնուկ, ի՞նչ ես ցանկանում, ասա—տեմնենք. խաղաղունդդ ևս ցանկանում, թէ ձիգ. զուցէ զբօնուլ ևս ցանկանում։» Այս բոլորը ունացն է—Արամը զուռում է։ Այսպիսի պարագայում հարկաւոր է մի երկու անգամ թեթև զարնել նորան, բայց առանց բարկութեան, այլ հանգարտ կերպով։ Մայրը ինքը կը զարմանար այդ միջոցի հանգարտեցուցիչ աղքեցութեան վերայ։ Բանը այն է, որ երեխայն յամառելով, միանդամայն չգիտէ, ինչ է հարկաւոր նորան և ինչ է ցանկանում։ Յամառութեան առիթը, ըստ մեծի մասին սովորութիւնն է, բայց բորբոքվելով, գուռալով և այն երեխայն միանդամայն խրեան մոռանում է և միայն մեքենայաբար կրկնում է զանազան բառեր։ Այս բարոյական հիւանդ զբութիւնից

տէտք է աղստել, թօթափել նորան. սուրա համար և մի միայն սորա համար եւ բեխայի արտաքին զգայարանքների վերայ ներգործում են հարուածով, այս ինքն ցնցմամբ, որը զարմանք է առաջնում եւ փոխում է յամառութեան անդիտակցական դրութիւնը դէպի առաւել դիտակցական և այդ վայրինում կարել է նորա ուշադրութիւնը դարձնել դէպի մի այնպիսի առարկայ, որ ծանօթ և հետաքրքիր լենելով գրաւել նորա բոլոր ուշադրութիւնը: Երեխային իւր անդիտակցական դրութիւնից գուրս բերելու համար կարել է բայց հարուածից, որ ներգործում է նորա շօշափիչ զգայարանքի վերայ, գործածել և սաստիկ մեծ հնչելու, լոյս և ներգործել նորա լսելիքի և աչքերի վերայ. բայց այս միջոցը չպէտք է գործածել, որովհետեւ բայցի վախից, այդ ունի և այլ անյարմար կողմերը: Հարուածը անախորժ յիշում է բայց երեկն և առաւել ուշ այնպիսի պատճառներից, որ երեխայն ինքը չէ կարող մեկնել: Մանաւանդ պէտք է իմասի ունենալ, որ թոյլ կազմուածքի և հիւանդատ երեխաները երազում վախենում են և գոռալով զարթնում:

Հեռանում է ամեն մի անախորժ բանից: Մինչև որ երեխայն չհանդարտվի և չլուէ, նորա խնդիրը կամ ցանկութիւնը չպէտք է կատարել, ապա թէ ոչ նա չի հասկանալ, ինչ են պահանջում նորանից և հարկանելը իզուր կինի: Պէտք է ինկատի ունենալ, որ երեխայն երբեմն լալիս է հեւանդութիւնից կամ ցաւ զդալուց. ուստի միշտ պէտք է զանազաննել այդ լայլ յամառութիւնից առաջ եկած լայլից: Նաև անդամ երեխայն հանդարտ խաղալու ժամանակ յանհարձ թողնում է իւր խաղալիքը և անհանդստութիւն է յայտնում: Այսպէս պատահում է յաճախ ատամներ հանելու ժամանակ. բայց երբեմն և առաւել ուշ այնպիսի պատճառներից, որ երեխայն ինքը չէ կարող մեկնել: Մանաւանդ պէտք է իմասի ունենալ, որ թոյլ կազմուածքի և հիւանդատ երեխաները երազում վախենում են և գոռալով զարթնում:

Առաւել վատթար է, եթէ յամառու-

թիւնը մանում է դործի և վարքի մջ,
այսինքն կամակորութիւն է դառնում: Կա-
մակորութիւնը մարդուս բնական յատկու-
թիւնը չէ, բայց կան շատ երեխաներ, ու
րոնք կամակոր են լինում: Ծիծաղելու և
վուարձանալու համար երեխաներին շրջա-
պառող մարդիկ զանազան աւելորդ բա-
ներ են թոյլ տալիս: Արդարեւ երեխաների
բոլոր կատակները շատ գեղեցիկ և ախոր-
ժելի են: Օրինակ երեխայն իւր մօրը ըս-
պառնում է դաւազանոյլ, «շուտով ձիս
բեր, ինձ հարկաւոր է»: Բոլորեքեան ծի-
ծաղում են—որովհետև երեխայն միայն
սպառնում է, բայց չէ համարձակվում
զարնել: «Սա ժամանակին ուժեղ մարդ
կլինի», մատծում է հայրը, «և միշտ իւր
սասածից ոչ մի դիջումչի անել. այժմ ևս
սպասաւորներին այնպէս է հրամայում,
որ մարդու «քէֆը» դալիս է: Երեխայի
չարութիւնը ընգունում են իրը մի առան-
ձին ձիրք և երեխայիներկայութեամբ սպաս-
մաւմ են բոլոր բարեկամներին: Աթէ երե-

խայն տեմնում է, որ նորա պահանջմանկը
չին կատարում, սկսում է գոռալ, ոտնե-
րով խիել, մի խօսքով այնպէս աղաղակ
է բարձրացնում, որ Աստուած հեռու անէ:
Իհարիէ, խիզին կատարում են նորա պա-
հանջմանքը, որքան կարելի է շուտ, մա-
նաւանդ որ սպասաւորներին պատուիրած
է «չպայրացնել» երեխային: Երեխայն մե-
ծանում է, բայց հասակի հետ աճում է
և կամակորութիւնը: «Ծաղիկներին մի դիպ-
չոր, ասում է մայրը, երբ տեսնում է, որ
երեխայն ծաղիկը կարեց: Երեխայն մօր «ջըդ-
րու» մի հատ ևս կարում է: «Մի համար-
ձակուիր», ասում է կրկին մայրը: Երեխայն
չէ լուսմ և շարունակում է իւր գործը:
Այսպիսի բաներ ախորժելի չին: Հայրը տես-
նում է, որ «երեխայն համը տարաւ», մայ-
րը սկսում է իւր ծանօթներին գանգա-
տովել իւր որդուց: Ծանօթները նորան միխ-
թարում են ասելով, թէ այդ հասակի
երեխաները միշտ անտանելի են և շուտով
նա կիսուիի: Բայց քանի գնում է, երե-

խայն առաւել և առաւել անտանելի և
փառթար է դառնում: Ծնողքը յուսահա-
տվում էն և չգիտենալով ինչ անել, ըս-
կում են անդադար հարկանել, յանդի-
մանել և այլն:

Անընդ է մեղաւոր երեխայն, երբ ծը-
սուհը եւրեանտ են տառջ բերել և պար-
գայրել նորս բոլոց վաս յառիւթենուերը
և տնտեսակառավենուերը: Ծնողքը թոյլ է-
ին տալիս, որ երեխայն յամառութիւն ա-
նե, և զուարձանում էին գորանով. իսկ
վերջը, երբ յամառութիւնը կամակորու-
թիւն դարձաւ, յուսահատեցան և սկսե-
ցին պատժել խեղճ երեխային: Շատ ծը-
սողք հեռու կմնային այլպիսի սիսլին-
քից, եթէ երեխաների յամառութիւնը
հաստատ բնաւորութեան. յատկութիւն
չընդունէին: Ես քաջայոս եմ, որ գոնեայ
դուք, նապելի Տիկին, այդ սիսլանքից հե-
ռու կմնաք և յամառութիւնը թուլու-
թեան և ոչ թէ զօրութեան նշան կըն-
դունէք, իսկ հեստութիւնը զործով ար-

տայսյտած յամառութեան նշան, այսինքն
ամենաբարձր աստիճանի յամառութիւն:

Ամենից շատ են խօսում սրտի և մրտ-
քի զարգացման մասին իսկ ամենից քիչ
կամքի զարգացման մասին: Բայց մարդս
կարող է կատարեալ զարգացած միտք և
սիրտ ունենալ և մի և նոյն ժամանակ դըժ-
բաղա և զործունէութեան անլնդունակ
մարդ լինիլ միանդամայն, եթէ կամքի զար-
գացումից զուրկ լինի: Այս ինչ, եթէ նո-
րա կամքը կանոնաւոր ուղղութիւն է ստա-
ցել և բաւականին հաստատ արմատներ է
տուել, այն ժամանակ, եթէ նա ապագա-
յում իւր զարգացումը և լուսաւորութիւ-
նը թիրի գտնի, իւր մէջ բաւականին զօ-
րութիւն կղայ այդ թիրութիւնը լուցը-
նելու համար: Մանկավարժութիւնը ուսու-
ցանում է, որ գրաստիարակութեան նպա-
տակն է տալ մարդուս կարողութիւն, որ
ինքը իւրեան գաստիարակէ: Այս միան-
գամայն արդարացի և ծշմարիտ է: Մար-
դուս ամենագլուխ կամքը կամքը կամքը

է եւր ամբողջ չետնի ընթացքամ աւ-
նասուել եւր հռգենոն կտառակելագործութեանու
հասնելու: Այն ինչ այս միանդամայն
անկատար կմնայ, թէ երեխայի դաստի-
արակները իմանի չեն ունեցել նորա կամ
քի զարգացումը—այս ինքն չեն տուել նո-
րան ինքնորոշման կարելութիւն: Այդ
տեսակ դաստիարակված մարդը միշտ գէպ-
քի խաղալիք կդառնայ, նա միատեսակ կր-
կարողանայ ենթարկվել թէ լաւ և թէ
վաս աղջեցութեան, որովհետեւ նա ընդ-
դիմադրութեան զօրութիւն չունի: Սակայն
պէտք է ասել, որ թուլութիւնը մեր մա-
տադաշաս սերնդի զրեթէ ամենազդլսաւ որ
յատկանիշ նշանն է: «Ի՞նչ անում, որ որ-
դիս զօրիդ կամքի տէր մարդ դաւնայ,»
դուք կարող եք հարցանել: Դորա համար
հարկաւոր է, որ դուք ձեր որդուն սո-
վորեցնէք յաղթահաւել եւ էտնիով, ոչ
թէ ձեր և իւր դաստիարակների կամքը.
ոչ, այլ չետնիում պատճեղ ամեն մի
իրադան արգելուած և եւր սէփուն յան-

իութեանները: Խնդրեմ, ուշի ուշովքնեցէք
յետագայ արարողութիւնը և դուք կշաս-
կամաք իմ միտքը: Սկզբում ձեր որդին կամք
չունէր. բայց դուք առաջին ամիսներից ըս-
կած ընտելացնում էիք նորան—այսինքն
նորա մէջ առաջ էիք բերում ապօրու-
թիւններ, որոնք փոխարինում էին նորա
կամքը. Երբ ձեր որդին սկսեց փոքր ինչ
հասկանալ դուք նորան տուիք խաղալիք-
ներ, նա առնում էր. մատնանիշ արիք
զանազան առարկաների վերայ, նա նայում
էր և այն: Այս բոլոր գէպքերում դուք
զարգայնում էիք նորա կամքը: Երբ նա
հաղեւ հաղսկսեց ոտի կանոննել, դուք նո-
րան ձեզ մօտ կամքեցիք—նա դժուարա-
նում էր ձեզ մօտ դալ, բայց նա, թէ-
պէտ մեծ դժուարութեամբ, բայց եկաւ
—այսինքն դուք արթնայրեցիք նորա կամքը.
իսկ նորա հնազանգութիւնը յաղթեց ար-
գելառիթները—այսինքն նա կատարեց
իւր կամքը: Նոյնը կը կնվում է ձեր ամեն
մի հրամանը կատարելս: Նա պէտք է

ամեն օր իւր խաղալիքները ժողովէ և այ-
լըն։ Այս շատ ձանձրակի աշխատանք է,
բայց հնագանդվելով նա կատարում է
ձեր հրամանը և սորանով հաստատվում
է նորա կամքը։ Խելացի հրամանները առվետ-
նուած էն երեխոյն հոմքը և նու համարակա-
լինը հասպառառած է և պարգացնուած նորուն-
ի հարկ է, երեխայի կամքը անկախ
չէ կարող լինիլ, այլ միշտ դաստի-
արակի կամքից կախութն ունի. բայց ե-
րեխային սկզբուց պէտք է հասկացնել, որ
նորան տուած հրամանները կամաւոր չեն,
այլ անփափոխ կանոնների վերայ են հիմ-
նված։ Ապագայում ամեն մի հրաման
կամ արգելք պէտք է արվի ընդհանուր
կանոնների և օրեքների համաձայն, և դո-
ցա պէտք է հնագանդվի ինչպէս աշակեր-
տը, նոյնպէս և դաստիարակը։ Խաղալու-
ժամանակ ձեր որդուն կարող էք աղատու-
թիւն տալ թէպէտա այս պարագայում ևս
գուք կարող էք աղգել նորա վերայ։ Օրի-
նակ, կանոն դրէք, որ նա շատ խաղալիք-

ներով մի և նոյն ժամանակը չխաղայ, եւ
թէ նա մի բան սկսիլ է, թող աւարտէ
— այսինքն իրագործէ իւր դիտաւորու-
թիւնը, իւր սկզբնական կամքը։ Օգնեցէք
նորան յայտնելով ձեր համակրութիւնը
և եթէ նա շատ աշխատեց մի բան շնե-
լու ժամանակ, գովեցէք, բայց ոչ իւրեան,
այլ նորա շնութիւնը։ Մի ասէք նորան.
«Դու լաւ տղայ ես, շատ աշխատեցար»
այլ ասացէք. «Գեղեցիկ շնութիւն է, այ-
ժըմ կողքին մի բուրդ է հարկաւոր և այ-
լըն։» Ճետեեալ նամակիցս կիմանաք, ինչու
եմ ձեզ խորհուրդ տալիս այսպէս վար-
վել և ոչ այլապէս։

Որքան կարելի է զգոյշ եղիք պատճե-
լու ժամանակ։ Օրինակ, երբէք մի որ և իցէ
աշխատանք կամ գործ մի յանձնէք երե-
խային իրը պատիմ։ Աշխատանքը երեխա-
յի համար պէտք է լինի ախորժ և բարի,
իսկ պատճեր ոչ բարի է և ոչ ախորժ։
Եթէ ձեր որդին ծուլութիւնից կամ մոքի
ցրմանքից մի որ և իցէ բան վատ կատա-

րեց, նորան, օրինակ, ասացէք. այս վատ
է, երեկ դու առաւել լսւ շինեցիր. ահա
այս պէտք է ուղղել, այս նորից շինել և
այլն։ Աշխատեցէք, որ նա ինքը իւր վատ
շինածից անբաւական մնայ, իսկ լաւ (համե-
մատաբար) շինածը բաւականութիւն պատ-
ճառէ։ Այն պատիմները, որոնք ահ և
գողի պատճառ են դառնում և ձնում
են ինքնագործունեութիւնը, միանգամայն
վնաս են։ Օրինակ, հարկաւոր չէ երեխային
սպառնալ մուժ սենեկում փակել կամ
սորա նման մի այլ սպառնալք գործածել։
Նրեխայն անդիտակցաբար վախ չպէտք է
ունենայ առ հասարակ, իսկ մթին պէտք
է սովորեցնել, որովհետեւ մուժը հասա-
րակ և ամենօրեայ բան է։

Ամամակ



Ունայնասիրութիւնը, ինքնահաւանու-
թիւնը և եսութիւնը բնաւորումն են երե-

խաների մէջ դաստիարակները ինչպէս և ու-
թիւ լսւ թէ վատ ամեն մի յատկութիւն։
Օրինակ, մի օրիորդ նոր շորեր ունի հա-
գած։ «Ինչ հրաշալի օրիորդ է և ինչ
գեղեցիկ շորեր է հագել. եթէ դու խե-
չօք կլնիս, քեզ համար ևս այդպիսի նոր
շորեր կարել կտամ տօներիս», ասում է
մայրը իւր գտաեր։ Ծանօթները և ազգա-
կանները անշուշտ կդուլին օրիորդի շորերը։
Այսպիսով վնասվում են երկու երեխայ.
մինը լեւով գովասանք իւր մասին (կամ
շորերի-մի և նոյն է), իսկ երկրորդը հետայ-
նու մի առանձին ցանկութիւն ստանալով նոր
շորեր ունենալու—կարծես, թէ այդ մի շատ
ցանկալի բան է։ Առաջնը դրանով սովո-
րում է գեղեցիկ հագստի և նորա բաւա-
կանութիւններից մինն է զառնում լսւ
հագելը. երկրորդը ստանում է անօգուտ
ցանկութիւններ և ծնում է նորա մէջ նա-
խանձ։ Այս վերաբերում է օրիորդներին.
աղայքը ըստ մեծի մասին չեն դնահաւ-
տում գեղեցիկ շորերը և լսւ չեն ուս-

Հում՝ նոցա: Բայց տղայոց ևս շատ շուտ
կարելի է ունայնասէր դարձնել կրինելով
յաճախ հետեւեալ օրինակի նման տեսա-
րաններ: Դիցուք, եկաւ ձեզ մօտ մի հիւր
և ցանկանում է տեսնել ձեր որդուն: Երբ
երեխայն ներա է մննում սենեակ, իսո-
կոյն հաղար և մի հարց են առաջար-
կում նորան և նորա սրամիտ պատասխան-
ները անթիւ գովասանկներով վարձատր-
վում են: Ի հարկէ այս գովասանկները վե-
րաբերում են և մօրը, որ շատ ուրախա-
նում է այսպիսի դէպքերում: Ցանկալով
աւելի պարծենալ հիւրի առաջ, մայրը
որդուն ասել է տալիս ոտանաւորներ, ա-
ռակներ և այն: Որքան որ դժուար չինի,
խեղճ երեխայն ճարահատեալ կատարումէ
և յաջողակ աւարտում այս քննութիւնը:
Վերջապէս Ճանապարհ են ձգում երե-
խային և հետ այնու մայրը սկսումէ պատ-
մել հիւրին երեխայի քաջագործութիւնները:
Այդ միջոցին երեխայն խաղումէ և կար-
ծես չէ լուսում նոցա խօսակցութիւնը. մա-

նաւանդ որ աշխատում են ցածր խօսել,
բայց մի՛ մոռանաք, որ երեխաները շատ
ուշադիր են դէպի ցածր խօսակցութիւնը
և ի հարկէ հաւատում են իւրեանց լա-
ծին: Երեխայն յաճախ լինելով խօսակցու-
թեան զլիսաւոր առարկայ, սկսումէ կար-
ծել թէ ինքը մի մեծ նշանակութիւն ու-
նի գերգաստանի մէջ: Շատ ծնողներ երե-
խային հաստատում են այդ կարծիքի մէջ
վերաբերելով բոլոր բնութիւնը նորան: Օ-
րինակ, ծառերը պտուղ են տալիս—նորա
համար, կովը կաթ—նորա համար, մայրը
տան հոգմն է քաշում—նորա համար և
այն: Այս միջոցով ցանկանում են երե-
խայի սրտի մէջ շնորհակալութեան զգայ-
մունք ծնուցանել: Բայց շատ սխալվում են
դորանով սովորեցնում են երեխային բոլոր ըլո-
ջապատող բնութեան տէր կալծել իւր-
եան—այսինքն մի այնպիսի բան, որի սխալ
լինելը ժամանակին անշուշտ իմանալու է
և զգացանալու: Այս վարմունքը բացի
վատ կողմերից ոչ մի այլ յատկութիւն չու-

նի: Փայփայելում անդամ պէտք է չափաւոր լինել: Շատ անդամ երեխաները ինչքն իւրեանց են գալիս ծնողների մօտ փայփայվելու, բայց չէ կարելի հերքել և այն, որ շատ անդամ նոքա մասածում են. աերանի մայրիկս թողնէ ինձ, դնամ խաղամ: » Օտար մարդիկ, որոնք խանդարում են երեխաների խաղը և պարապմունքը, նոցա համար անտանելի են իւրեանց զանազան փայփայող և ախորժ գովասանքներով և փաղաքշանքներով: Երեխաները չեն սիրում այդ տեսակ մարդոց: Նոքա սիրում են միայն նոցա, որոնք ուշադրութիւն են դարձնում իւրեանց պարապմունքի և ունեցած իրերի վերայ: Հարկաւոր չէ երեխաների մօտ խօսել ոչ նոցա և ոչ նոցա դաստիարակութեան վերաբերեալ առարկաների վերայ: Առաջնոր կը երէ երեխային այն մոքին թէ ինքը մի մեծ նշանակութիւն ունեցող անձն է. խսկ երկրորդը կը դարձացնէ երեխայի ընդդիմաղրող զգացմունքները և եթէ դաստիարակի պատուե-

րը նորան դուր չդայ, նա կդանի մի բաւական սրամկա միջոց չկատարելու այդ անախորժ պատուելը: Առ հասարակ երեխային պէտք է դաստիարակիւ այնպէս, որ ինքը չդայ թէ իւրեան դաստիարակում են: Այս կանոնը կատարելով դաստիարակը անշուշտ կհանի իւր նպատակին: Երեխաների համար հարկաւոր է ընկերութիւն, որովհետեւ մեծերը ինչքան որ չաշխատեն երեխաների հասկացողութեան համեմատ վարկել — այնու ամենացնիւ չեն կարող փոխարինել երեխաների ընկերութիւնը: Մեծերի ընկերութիւնը կարող է վատ հետեւանքներ մինչև անդամ ունենալ երեխայի վերայ, դարձնելով նորան առաւել բարեբարոյ և բարեմիտ քան վայել է երեխային: Միայն իւր հասակակիցների ընկերութեան մէջ երեխայն կսովորի հասկանալ հաւասարութեան և հաւասար իրաւունքներ ունենալու նշանակութիւնը և միայն երեխաների ընկերութեան մէջ կկոկվին երեխայի այն անհարթութիւնները,

որոնք ընդունված չեն հասարակութեան
մէջ։ Մեծերի հասարակութեան մէջ, ուր
երեխայն սոտոր է համարվում, ուր նա
զգում է իւր կախումն, ոչինչ սովորել չէ
կարող։ Երեխայական ընկերութիւն ասե-
րվ եւ հասկանում եմ երեխաների բնա-
կան և հասարակ ընկերութիւնը և ոչ թէ
երեխայական պարահանդէները, երեկոները
և մասկարագները, ուր երեխաները մեծերին
են աշխատում նմանիլ. այս տեսակ ընկե-
րութիւնները վեսասկարեն երեխաների հա-
մար։ Փէտքէ խոստովանիմ, որ տեսել եմ այն-
պիսի ծնողք, որոնք երեխաների հասարակ
ընկերութիւնը ես կարողացել են դարձնել
ի վնաս իւրեանց որդուոց։ Օրինակ մայրը
տափս է իւր որդուն մի քանի տանձ և
խնձոր իւր ընկերներին բաժանելու համար.
“ահա այս ամենալաւ տանձը քեզ, հո-
գիս,, , որդու ականջում ասում է մայրը։
Երբ երեխայի հիւրերը վնում են տուն,
մայրը սկսում է երեխայի մօտ իւր հիւրե-
րի վարմունքը քննել և վերջը աւելացումէ

ոռչ, մեր Տիղրանը նոցա նման չէ.
նա այդպէս բան չի անել, նա խելօք է,,
և այն. մի խօսքով երեխայի մէջ ծնոցա-
նումն եսութիւն։ Այսպիսի դէպքերում
պէտք է միանդամայն հակառակ վարվել։
Սովորցրէք ձեր որդուն բաւականանալ քը-
չով և տալ լաւը իւր ընկերին։ Սովորե-
ցրէք նորան ներողամիտա լինել մանաւանդ
դէպի իւրեանից փոքրերը։ Բացակայ ըն-
կերների մասին լաւ խօսեցէք, դառնալով
ոչ թէ ձեր որդուն այլ երրորդին մինչեւ
անդամ այնպիս իւր չէք նկատում երե-
խայի ներկայութիւնը, կամ իւր չէք ցան-
կանում որ նա լսէ ձեր ասածը։ Այսպիսի
նկատողութիւնները ամենից առաւել են
ներդործում երեխայի վերայ։

Եթէ դոք հրաւիրել էք ձեր որդու-
մօտ նորա ընկերներին կամ ծանօթներին,
ուրեմն դոք պարտական էք և հսկել նո-
ցա վերայ այնպիս, ինչպիս հսկումէք ձեր
սեփական որդու վերայ։ Առ հասարակ այս
չեն անում, վախենալով մի դուցէ նեղա-

նան նոցա ծնողքը. և այս պատճառով
թոյլ են տալիս նոցա. ամեն տեսակ չարու-
թիւններ: Ուստի հարկաւոր է երթեւեկու-
թիւն ունենալ միայն խելացի և բանի-
բուն ծնողների հետ, որոնք հասկանում
են, որ խրեանց որդւոց վերայ տնից դուրս
հսկողութիւնը բարի է և խրեանք ևս
պարտական են փոխադարձաբար հսկելու-
ձեր որդու վերայ, երբ նորան ուղարկէք նո-
ցա որդւոց մօտ: Մի մօռանաք որ տնից դուրս
երեխանները շատ անդամ ուրիշ ակտակ են
երեւում քան առանը և թէ օտարները եր-
բեմն նկատում են այնպիսի բաներ, որոնք
դուք երբէք նկատած չեիք: Ուստի շատ
օդտաւէտ կլինի ծնողների և դաստիարակ-
ների համար, եթէ միմեանց բարեկամա-
բար նկատէին խրեանց որդւոց պակասու-
թիւնները:

Երբէմն պատահում է, որ երեխայն
տուն գալով իւր ընկերի մօտից սկսում է
փանել իւր խաղալիքը—ձին կամ սայլակը,
որովհետեւ իւր ընկերը նոյզանից լսւը ու-

նի: Այս նախանձի սկիզբն է: Աշխատեցէք
նորան բացատրել, որ նորա խաղալիքը ևս լաւ
է, իւր ձին կարելի է նոյնակս լծել սայլակում,
կարելի է նորա վերայ նստել և այն: Առ
հասարակ այն երեխանների մէջ է զարթ-
նում նախանձը, որոնք միայն նայում են
խրեանց խաղալիքի վերայ և ոչ թէ յար-
մարացնում են խրեանց գործունէութեանը:
Այս դէպքում ևս լինառագործունէութեանը
և խաղալիքը իւր գործունէութեան յար-
մարացնելու եղանակը գիտենալը կազմատէ
երեխային այդ վատ զգացմունքից—նա-
խանձից: Եթէ պատահի, որ խաղի ժամա-
նակ ձեր որդու ընկերներից մինը նորան
դիպաւ, կամ խիեց և կամ մի որ և իցէ
բան փչացրեց—բացատրեցէք նորան, որ
ընկերը չէր ցանկանում այդ անել, այլ
պատահեցաւ: Ուրեմն զգուշացրէք նորան,
որ ինքը, փորձելով, թէ որքան անախորժ է իւր
համար ընկերի վարմունքը, զգուշանայ իւր
հողմից միւսին դիպելուց, խիելուց և այն:
Սովորեցրէք ձեր որդուն զըհարերաւթիւն.

օրինակ, ասացէք. «Գառնուկ, դու ամեն
օր խաղումես քո խաղալիքով, այսօր թող-
փոքրիկ վահանը խաղայ, նա քեզանից
շատ շնորհակալ կլինի, թէև չէ կարող
խօսքերով արտայայտել իւր շնորհակա-
լութիւնը»; Կան այնպիսի խաղեր, որոնցով
միմեանցից տաճումեա տարիումն կաղին,
վէդ և այն: Տարուողը առ հասարակ ան-
բաւական է մնում: Բացատրեցէք ձեր որ-
դուն, որ ինքը մեղաւոր չէ տարուելում,
ուստի թող ուրախանաց տեսնելով իւր
բարեկամաց տանելը, որոնք նորան այնքան
կսիրեն, որպան որ ինքը նոցա սիրումէ:*)

Երեխայն առանց թոյլատութեան ոչ
ինչ չպէտք է անէ և ամեն բանի համար
պէտք է շնորհակալ լինի: Բայց միայն այն
ժամանակ միտք կունենայ երեխայի այս
տեսակ վարմունքը, երբ նա հասկանում է
ինչ է աշխատանքը և ինչ դժուարութիւ-
նը—ապա թէ ոչ թոյլատութիւն իրն-
դրելը և շնորհակալութիւն անելը ըսկ ծի-
սակատարութիւն կլինի նորա կողմից և ոչ այլ

(*) Ի հարկէ առաւել լաւ կլինի եթէ երե-
խաները այդպիսի խաղեր չխաղան:

ինչ: Իսկ նորան հասկացնել դոցա նշա-
նակութիւնը, կարող է միայն իւր երեխա-
յական գործունէութեան մէջ պատահած
դժուարութիւնը: Այն երեխայն որ սովոր չէ
աշխատանքի, նայում է ամեն մի նորա
համար արած գործի վերայ իրեւ մի պար-
տականութեան առ նա այդ երեխային
շնորհակալութեան զգացմունքը անցայտէ.
Նա գիտէ միայն բառը:

Ի դէպ, մի քանի խօսք աղօթքի մա-
սին շատ յարմար կլինի սյս տեղ, որովհե-
տեւ աղօթքը ըստ իւր բուն էութեան կամ
ինդրուածք է կամ շնորհակալութիւն:
Յովհաննէս առաքեալը իւր առաջին ընդ-
հանրական թղթի մէջ ասումէ: Առվ որ
չէ սիրում իւր եղօրը, որին տեսնումէ,
կարող է արդեօք սիրել Աստուծուն, որին
չէ տեսնում: Այս վեհ քրիստոնէական
խօսքերը պարզ ցցց են տակիս ինչպէս
պէտք է երեխայի սրտի մէջ ծնուցանել սէր
առ Աստուծ և ինչպէս անել, որ երե-
խայի աղօթքը անկեղծ լինի: Կրեխայն

վերացական մաքեր ըմբռնելու ընդունակ չէ, ուրեմն չէ կարող սիրել մի աներևոյթ էութիւն. ուստի սկզբում նա պէտքէ սովորի սիրել իւր ծնողաց, դաստիարակներին, ընկերներին և առ հասարակ ամենին, ումից նա օգուտ է ստանում: Մինչեւ որ ձեր որդին չզգայ կախումն իւր ծնողքից, և չհասկանայ շնորհակալութեան զգացմունքը, մի խօսքով մինչեւ որ ձեր որդին լսու դաստիարակված չլինի, աղօթքը անհնարինակ է: Ապագայում, դուք նորա ուշադրութիւնը դարձնելով բնութեան երևոյթների վերայ՝ օրուայ եղանակի և բարեխառնութեան փոխախութիւնների վերայ. բոյսերի և կենդանիների կենաց վերայ և այն—կարողէք նորան բացառիկել թէ այս ամենը մեր կամքից կամ բոլորովին չեն կախված և կամ մասամբ միայն ենթարկվում են մեր աղջեցութեանը:

Երեխայն Աստուծուն նիւթականապէս կներկայացնէ. և դժուար է ապացուցանել, թէ ինչ վնաս երեխայի համար, եթէ

նա Աստուծուն նիւթակայացնէ մի աղևոր ծելունու կերպարանքով: Երեխային հարկաւոր է միայն սովորեցնել կարճ աղօթքներ, որոնք արտայայտեն խնդրուածք կամ դոհութիւն մի որևէից նիւթական տուլքի համար: Մի խօսքով աչքի առաջ ունէցէք միշտ, որ երեխային անմատչելի և անընդունելի են վերացական գաղափարները:

Կամակ

ԾՃ.

Վան այնպիսի ծնողք, որոնք իւրեանց որդւոց մեծ հոգացողութեամբ և աշխատութեամբ են դաստիարակում և այս ծընողաց ջանքը լսու պտուղներ են տալիս: Բայց գմբախտաբար երեխայի կեանքում պատահում են այնպիսի գէպքեր, որոնք պատճառ են գատնում երկար հոգով և աշխատութեամբ ստացած պտուղները ամենակարճ միջոցում չորացնելու և ի թերեւ հանելու: Այս տեսակ գէպքեր երեխային պատճառ են գատնում երկար հոգով և

Կառաջն հիւանդութեան շրջաններն են: Հաստատ կարելի է ասել, որ բոլոր երեխասները առաւել լւաւ դաստիարակված կլենէին, եթէ նոքա միշտ առողջ մնային: Դատ հասկանալի է, որ ծնողքը ցաւում են իւրեանց որդւոց հիւանդութեան վերայ ասկայն չպէտք է երեխայի մօտ յայտնել իւր ցաւակցութիւնը և երեխային զգալի անել նորա ցաւը: Այս վարձունքի հետևանքը այն է լինում, որ երեխայն սկսումէ գիտակցել իւր ցաւը, նեղանալ և լալ մինչև անգամ ցաւ չըդպացած ժամանակի:

Եթէ ձեր որդին հիւանդանայ — և անկարելի է որ այլապէս լինի — աշխատեցէք, որ նա իւր չորս կողմը զուարթ կերպարանքներ տեսնի միայն և սպօրականից առևլի ժամանակ անցկացրէք հետը, սպառմէցէք զանազան առակներ և այլն, մինչև որ ինքը հանգստութիւն ցանկանայ: Դիւտեցէք մեծերին և դուք կնկատէք, որ դրեթէ միշտ լուսաւորեալ մարդը առա-

և լ հեշտ է տանում իւր հիւանդութեանը քան մի տղէտ մարդ: Խնչու, որովհետեւ առ լուսաւորեալ մարդը հիւանդութեան ժամանակ ևս կարող է գտնել իւր յարմար մի թեթև դործունէութիւն. նա կարող է մասնակցել հասարակական կեանքի երեսոյթներին, գիտութեանց և արուեստից զարդանալուն և այն, բայց տղէտը չկարողանալով ոչ մի բանի հետեւ կամաց ականց ստիպված է մտածել միայն իւր հիւանդութեան վերայ և այնքան ծանր կզգայ իւր հիւանդութիւնը, որ միջոց չկ դանիլ իւր հիւանդութիւնը, որքան որ միջոց չկ դանիլ իւր ուշադրութիւնը մի այլ առարկայի վերայ դարձնելու: Վերջապէս յայտնի է, որ կենդրոնացնելով իւր ուշադրութիւնը մարմնի մի որ և իցէ մասի վերայ, մարդ կզգայ անախորդ, մինչև անդամ ցաւեցուցիչ զգացմունք: Նոյնպէս հիւանդ երեխաների համար պէտք է աշխատել հեռացնել նոցանից ցաւի զգալը զբաղեցնելով նորան բոլորովին հիւանդութեան չվերաբերեալ

բաներով։ Ուստի այս ի մոի ունենալով
Երեխայի առողջ ժամանակ պէտք է որքան
կարելի է բազմակողմանի դործունէութեան
սալորեցնել նորա արտաքին զգայարանք-
ները և հասկացնել շրջապատող կեսների
իմաստը։ Թէպէտ հիւանդութեան ժամա-
նակ երեխայն ինքնագործունէութեան ըն-
դունակ չէ, բայց նորան կարելի կլնի զբա-
ղեցնել, եթէ նա բազմակողմանի տեղե-
կութիւններ ունի, և գոնեայ դժուար հան-
գամանքներում այդպիսի երեխայն ան-
տարբեր չի լինիլ գէպի իւր շրջապատողնե-
րը։ Երեխայն բժշկից չպէտք է վախենայ,
ընդ հակառակն, նա լիակատար հաւատար-
մութամբ նայելու է նորան։ Եթէ երեխայն
լու է դաստիարակված, հիւանդութեան
ժամանակ շատ քիչ յամառութիւն ցոյց
կտայ։ Բայց մի մօռանաք, որ հիւանդ երե-
խանէը տմէն մի տնմիտ պահանջը և յոմտ-
ուառնենու էտառելու չէ։ Բայց ի հարկէ
պատճելու ևս չէ դորա համար, մի-
այն պէտք է հանաքով կամ մի առա-

կով մնուանալ տալ երեխային իւր ցան-
կութիւնը։ Հիւանդ երեխայն չի բառակա-
նակալ իւր ցանկութեան կատարելովը, օ-
րինակ, ցանկալ մի բան, երբ նորան տո-
ւնին, խկրյն ձգումէ։

Հատ անգամ բժիշկները մեծ տարա-
կուսութեան մէջ են ընկնում հիւանդ ե-
րեխաների ձեռքում, որովհետեւ նորա
երբեմն չղիտեն ինչ տեղն է ցաւում, մին-
չև անգամ մարմնի անդամների անուննե-
րը չփիտեն։ Ուստի մայրը որքան կարելի է
շուտ պէտք է սովորեցնէ երեխային մար-
մնի մասերի անունները և հիւանդութեան
ժամանակ ինքը իւր որդուց տեղեկանալով
կարող է պատմել բժշկին։ Առ հասարակ
հիւանդ երեխայի հետ պէտք է վարկել
այնպէս, ինչպէս և առողջի հետ։ Բայց
չպատճել յամառութեան համար, այլ
հիւանդնել անտեղի ցանկութիւնները ոչ
քաղցրեղնով, այլ նորա ուշադրութիւնը
այլ առարկայի վերայ գարձնելով։ Ի
հարկէ մենք չենք խօսում անցյս հիւանդ

երեխաների մասին, որոնց մինչև անդամական շատ անողութիւնները չկատարելը շատ անողութիւն է:

Առողջացող երեխայի հետ վորքը առ վորքը պէտք է դառնալ դէպի ամենօրեայ կարդը, զրգուելով նորա զործունէութիւնը, զիսակցելով նորա զօրութիւնների վերաբարձր և վորքայնելով նորա պահպանողութիւնը: Ապա թէ ոչ երեխայն ցանկալով աւելի երկար միջոց պահելիւր ժամանակաւոր արտօնութիւնները շատ անդամ իւր թուլութիւնը և տփարութիւնը աւելացնում է:

Հիւանդութիւնը բնշնէլը — բժշկի զործն է, իսկ հիւանդութեան տառաջն տառնելը — ծնողաց և դաստիարակների: Մանաւանդ զգուշացեք ծայրահեղութիւնից: Շատ վատ է, երբ դաստիարակութիւնը նրբայնում է երեխային, բայց նոյնպէս վատ է, երբ ցանկանում են երեխային ամեն տեսակ անհաջող պայմաններին ենթարկելով իր ամրացնել նորան — սորա հետեանքները

և երբեմն շատ վատ են լինում: Երեխամի կենաց մէջ կան այնպիսի շրջաններ՝ երբ նա աւելի շուտ է ենթարկվում հիւանդութիւնների օրինակ՝ ատամներ հանելու և վոխելու ժամանակ. այս հանդամննքում պէտք է պահպաննել նորան ցըստից — մանաւանդ ցուրա հողմից: Այս և սցապիսի հանդամնքներից զուրս երեխային պէտք է սովորեցնել ցրտի անաւսորժ տպաւորութեանը: Մի և նոյն ժամանակ պէտք է երեխայի կազմուածքը այնքան ընտելացնել ցրտին, որ նա կարողանայ ընդդիմանալ նորա մնասակար ներգործութեանը և սորա համար պէտք է նորան, նաև՝ տաք հաղցնել, բայց ոչ այնքան, որ նա շարժվել անդամ չկարողանայ և երկլարդ՝ զբաններու չթողնել մինչև որ մի տաք կերակուր չուտէ: Բայց աւելի հարկաւոր է տաք կերակուրը, (տաք կաթկամ թէյ), երբ երեխայն կվերադառնոց զբօսանքից: Կասկած չկայ, որ այս հաստրակ զգուշութիւնները կազմատեն շատ եւ

ըեխաներին մահաբեր կոկորտացաւից։ Աշ-
մառը պէտքէ կազդուրիւլ երեխայի կազ-
մուածքը լողացնելով նորան սառը ջրում
և հեռու տեղ զբօնելով տանելով, որով
նորան կտորեցնէք երկար ժամանակ քաղ-
ցած և ծարաւ մնալու։ Պէտքէ սակաւ առ-
սակաւ տովորեցնել նորան և օդի վատ ե-
ղանակներին և չժողնել, որ նա գանդասի
և անբաւական լինի վատ եղանակից, ինչ-
պէս որ շատ անդամ լալում է մեծերից։
Ոէ որքան աստիճան պարզ օդը և արել
բարերար ազդեցութիւն ունին երեխաների
առողջութեան վերայ, դուք կարող էք եղ-
րակացնել տեսնելով շինականների երե-
խաները, որոնք չնայելով ամենաանցաղ
պայմաններին՝ ծնողաց տգիտութեանը և
նոցա անհոգացողութեանը, այնու ամե-
նայնիւ մշտական շարժողութեամբ և պարզ
օդով այնպէս են կազդուրվում, որ ցան-
կալի կլններ մեղ ևս այնպէս առողջ լի-
նել։

Ետմակ

Ժ

Եթէ պահապտ ասելով պէտք է հաս-
կանալ որոշեալ բարոյական յատկութիւն-
ներ և որոշեալ բնաւորութիւն ունեցող
մի անձն, մէնք կ'աեսնենք, որ շատ անձնիք
կրումեն այդ անունը միանգամայն անար-
ժան։ Ինքնաղապութիւն և զրկանք կը-
րելու ընդունակութիւն ունենալու փոխա-
րէն, նոքա են չնչին, նրբացած և դատարկ
բաների ետև ընկնող մարդիկ։ Խօսքս այն
մարդոց վերայ չէ, որոնք խելացի կերպով
հարստանում են, այլ նոցա վերայ, որոնք
ի բնէ խելացի և բարի լինելով, մասնաւոր
օկտի և յարմարութեան համար իւրեանց
բնաւորութեան չքութեան պատճառով
գուշիկ և անաղնիւ գործեր են կատա-
րում։ Այս չարութեան արմատը դաստի-
արակութեան մէջն է, այսինքն հասարակա-
կան, ընսամեկան և առօրեայ կեանքի բոլոր
չանդամնիքների մէջն, որոնք ազգումեն ե-

բեկայի վերայ: Շատ անդամ ծնողքը տղիւ
առութիւնից խրեանց որդւոց բնաւորու-
թեան ապագայ չքութեան պատճառ են
դառնում այնպիսի «նշն» բաներով, ո-
րոնք նոցա կարծիքով մի առանձին ապ-
գեցութիւն չեն կարող ունենալ: Օրինակ,
երեխային ժամանակից դուրս տալիս են
մրգեղին և քաղցրեղին, մեծերի կերած
կերակուրը և այն ևս նորա ցանկացած կը-
տորը. այսպիսով երեխայի ստամբուր ցա-
ւեցնում են և որկրամղութեան են սովո-
րեցնում: Երեխային որոշեալ ժամանակ
պէտք է տալ ուտելեղին, օրը չորս անդամ
և ոչ թէ երբ միտքն ընկնի: Մինչև ան-
դամ եթէ երեխայն քաղցած է և դեռ
15-20 րոպէ կայ Ճաշն, թող սպասէ:
Երեխաների հետ երբէք չպէտքէ խօսել
կերակուրների համեղութեան կամ ան-
համութեան վերայ և թէ ինչպէս և
ինչու համեղ է. իսկ եթէ գոլումէք կե-
րակուրը, գովեցէք նորան միայն մննդակա-
նութեան պատճառով: Տղայքը շուտով

ինքն խրեանց կղազեն, երբ կհասկանան,
որ այդ պատիւ է խրեանց համար: Մե-
ծերի բաւականութիւններին մասնակցին ևս
վատ աղղեցութիւն ունի երեխաների համար:
Խղուր տեղն երեխաներին տանումնեն թատ-
րոն, կոնցերտ և զանազան հասարակական
զուարձութեան տեղեր: Դորանով նոցա
մաշնումնեն բռնութեամբ միանդամայն օ-
տար աշխարհ, ծանօթայնումնեն այնպիսի
զգացմնելների և տպաւորութիւնների հետ,
որոնք չեն համապատասխանում նոցա ֆի-
զիքական և բարոյական զարգացմանը: Այս
բոլոր զուարձատեղեր երեխաների համար
այն են, ինչոր համեմանք այն ստամբուրի հա-
մար, որ կաթով պէտք է մննդվէր: Սոքա
վաղահաս հիւանդութեան պատճառներ
են և կարծացնում են երեխայի մանկու-
թիւնը, մինչ զի մենք ամեն հնար ի դործ
ենք դնելու ըստ չափու պահպանել այդ
բաղդաւորութեան եւ պարզաբանութեան
շօջանը:

Փոքր միաս չէ բերում և հետաքրք-

քիր կոչված ընթերցանութիւնը։ Սուրա միակ հետեանկըն է բոպէական զուարժութիւն առանց օգտի մոքի համար, մինչև անգամ ծանարակշխու բովանդակութեամբ զլրեն ևս անօգուտ զուարձութիւն կապատճառեն, եթէ կարդալու ժամանակ ծանօթութիւններ, նկատողութիւններ և բացատրութիւններ տուող և կարդադացածը կեանքում փոխարինելու միջոցները ուսուցանող չլինի։ Կրկին խորհուդ եմ տակիս ձեղ, Նաղեկ Տիկին, ողքան կարելի է շատ զրգուեցէքձեր որդու ինքաղործունէութիւնը։ Գրօննելու ժամանակ անգամ կարող էք դուք այս նպատակին համանելու համար միջոց գտնել։ Դարձեցէք երեխայի ուշաղրութիւնը բոյսերի, շնութիւնների և ամեն մի պատահած առարկայի վերայ։ Խրական աշխարհի մօտաւոր երեւյթների և իրողութիւնների հետ ծանօթութիւնը առողջ զարդացման ամենալաւ միջոցն է։ Ուսումնարան գնացող երեխաները դիտելով մենք տեսնում ենք, որ նոքա իւրեանց

շըջակայքի տեղադրութեան հետ միաաւսակ ծանօթ չեն. չքաւոր ծնողաց երեխաները լաւ դիտեն իւրեանց տեղադրութիւնը, իսկ հարուստներինը ոչ։ Առաջինները կողամ էն ուսումնարան, աղատօրէն ճանապարհին զանազան նկատողութիւններ են անում և շատ անգամ երկայն ճանապարհ գնում իւրեանց անից մինչև ուսումնարան, երկրողներին հաստո՞ղ էն բերում ուսումնարան, իսկ եթէ ոտով ևն դալիս, անսպատճառ մեծերի հետ, որոնք ճանապարհին դատողութիւններ են անում, շատ անգամ խօսակցելով նոյա հետ օտար լեզուով, ուստի այս երեխաները ժամանակ չեն ունենում դիտողութիւններ անելու։ Երեխաների զարդացնող պարապմունքներից մինն է զանազան քարերի, թիւթեռների, միջատների, բոյսերի ժողովածուներ հաւաքելը, բայց այս պարապմունքը փոքրերի համար չէ բոլորովին, այլ 8—10 տարեկան հասակի երեխաների համար. իսկ փոքրերն ըստ մեծի

մասին այս պարապմունքից ձանձրանում են և թէ պատահի, որ կամքի հաստատութիւնից մի փոքր ժամանակ ևս շարունակեն, այնու ամենայնիւ չեն վերջացնել իւրեանց գործը և կ'ձգեն սկսած ժողովածուները մի անկիւն։ Ես արդէն զբել եմ, որ երեխայի վերայ վատ ազդեցութիւն ունի սկսած գործը չվերջացնելը, ուստի միշտ այնպիսի բան պէտք է սկսէ, որ կարողանայ վերջացնել։ Միջաներ և թիթեռներ ժողովեն աւելի ծանր և վնասածար է երեխաների համար, քան բոյսեր ժողովեն եւ այն պատճառով, որ երեխայն պէտք է չարչարէ կենդանիներին կամ այնպիսի նիւթեր գործածէ, որ թմրացնում են նուցա։ Վերջապէս ժողովածուներ հաւաքելը միայն այն ժամանակ օգուտ (թէ և համեստ) կունենայ, երբ երեխայն մի գիտնականի առաջնորդութեամբ ձեռնամուխ լինի այս պարապմունքին։ Առաւել օգտակար և գործնական են երեխայական պարակնեւում ընդունված պարապմունքները կամ

աշխատանքը, գծազրութիւնը, թղթերից զանազան ձևեր կտրեն, փայտեայ կտորներից շինութիւններ կազմեն, ասղնեղործութիւնը թղթի վերայ, թղթի կտորներից զանազան ձևեր հիւսելը և այն։ Դժբաղշաբար այս նիւթերը մեզանում շատ թանկ են, ուստի ժողովադիմն անմատչելի։

ՆԱՐԱԿ

ԺԱ

Չեր վերջն նամակում դուք հարցնում էք, թէ ինչպէս պէտք է նախապատրաստել ձեր որդուն ուսումնարանի համար, ուր միւս տարի մտադիր էք ուղարկել նորան։ Մեծ ուրախութեամբ ըսկում եմ խօսել ձեզ հետ այդ հարցի մասին, որ ամեն ծնող իւր տեսակ է հասկանում։ Մինը կարծում է, թէ բոլորովն հոգացողութիւն հարկաւոր չէ ունենալ երեխաների և նոցա զարգացման մասին, ուստի թողնում է նոցա բազմազան դէպքերի ազդեցութեամնը։ Միւսը

իւր երեխային նախաղատրաստում է տառնին, որ մի գուցէ նա ուսումնարանում յետ մնայ լսւ. աշակերտներից: Երբարդը փառասիրութիւնից, որ իւր որդին շատ առաջ գնայ, անչափ ձանձրացնում է նորան դասերով: Տարրական ուսումնարանը, եթէ լսւ կաղմանք է, չպէտք է պահանջէ նորա մէջ մօնող աշակերտներից մի առանձին նախաղատրաստութիւն. բայց այսուամենայնիւ կան այնպիսի յատկութիւններ, որոնք երեխայն ուսումնարան մանելու ժամանակ ան հ րաժ ե շ տ պէտք է ունենայ. այս յատկութիւնների թուում շատ ց ան կ ալի է, որ լինի և զարգացումն և չլինին այն յակութիւններն, որոնք ծնողաց կարծիքով անհրաժեշտ են, բայց ուսումնարանում աւելուրդ և մինչև անդամ վն ա ս ա կ ա ր

Ուսումնարան մօնող երեխայն անշուշտ սկզբնական բարոյական կրթութիւն պէտք է ունենայ, որ ուսուցիչը հարկադրված չլինի նորա վարքը և վաս սովորութիւնն

ները ուղղելու. բայց այս կողմը շատ անդամ գոհացուցիչ չէ լուսաւորեալ դասսերի որուոց մէջ անդամ, ուր մնայ միւսների: Ուստի ուսուցիչը ստիպված լինելով իւր աշակերտների բարոյական կրթութեանը վերայ հոգալու շատ ժամանակ է կորցնում. այն ժամանակը, որ աշակերտների ուսման և զարգացման համար կդորձ զներ, եթէ նոքա ստոցած լինենին ընտանեկան բարոյական կրթութիւն: Մի աշակերտ կարծելով թէ կոիւը մարդուս կանոնաւոր դրութիւնն է, երբէք հանդարտ չէ մնում, այլ իւր ընկերների հետ միշտ կովումէ: Միւսը չէ հնաղանդում ոչ մի կարգի և կանոնի, որովհետեւ նա հասկացողութիւն չունի գոյա մասին. օրինակ՝ նա մի քանի եօթնեկումիւր առաջին զիրքը այն դրութեան մէջ է ձգում, որ նա դառնում է մի անորոշ գոյնի թղթի կտորներ: Հատ անդամ ծնողքը այս կամ սորա նման առթով յանդիմանում են ուսուցչն, որ նա չէ սովորեցնում երեխայ-

ին կարգի և կանոնի, զրքեր պահելու եւ ցանակի եւ այն։ Այնինչ դժուար չէ հասկանալն, որ ուսուցին դժուար է միքանի տառամբ երեխային սովորեցնել այն, ինչ որ ծնողքը վեց եօթը տարում չեն կարողացել սովորեցնել. մանաւանդ ուսուցիչը աշակերտին օրը մի քանի ժամ է տեսնում միայն, իսկ ծնողքը միշտ իւրեանց մօտն էին ունեցել երեխային վեցեօթը տարուայ ընթացքում։— Ահա մի պայլ զոյդ լաւ երեխաների, բայց սոցահետ ևս շատ չարչարանք կայ։ Առաջինը չնայելով որ զուարժ և աշխայժ երեխայէ, բոլորովին չէ կարող կենդրոնացնել իւրուշագրութիւնը գեթ մի բոպէ մի որ և իցէ առարկայի վերայ. նա ամեն մի հարցին անտեղի պատասխաններ է տալս առանց մնածելու։ Միւսը, ընդ հակառակը, հանգարտ, ամօթխած, վախկոտ և ճիշտ պատասխաններ է տալս, որոնք հաղել ըստում են։ Կրեռում է, որ սորան կրթել են միշտ ահի և դողի մէջ։ Այս բոլորը

ընտանեկան դաստիարակութեան պատուղներն են, երկար տարիների պատուղներ, որոնք մեծ խոչընդուաներ են ուսումնարանական դաստիարակութեան համար. ուստի ուսումնարանը նախ և առաջ պէտք է հեռացնէ սոցա գործածելով երկար ժամանակ։

Այժմ կարծում եմ կարողացայ ձեզ, Նազելի Տիկին, պարզել թէ ինչ եմ հասկանում ասելով լաւ բարոյական կրթութիւնն։ Ես յիշեցի միայն երեխաների մի քանի վատ սովորութիւնները. բայց կան ուրիշ շատ այդպիսի սովորութիւններ՝ անսաքրութիւնն և այն, որոնք նոյնպէս ուսումնարանական կրթութեան խոչընդուաներ են։

Հատ ցանկալի է ևս, որ ընտանեկան կրթութեան միջոցին առաւել ուշադրութիւն դարձնելի երեխաների արտօպին զգայարանքների զարգացման վերայ։ Ձեզ շատ օտարութիւն կթուի այն իրողութիւնը, որ տարրական ուսումնարաններ մնանող ե-

քեխաներից շատերը վատ տեսնում և
լուսմ են, չնայելով որ նոցա լսելիքը և
տեսանելիքը միանգամայն առողջ են :
Հարցրեցէք այդպիսի աշակերտից. Ինչ
տեսաւ նա ճանապարհին տանից ուշ
սումնարան դալու ժամանակ, կամ ինչ
պատմեց ուսուցիչն երեկ — նա չէ կարող
պատուախանել : Գողոցից անցնելու միջոցին նա ոչինչ չէ նկատում, որովհետեւ
նորա երեակայութիւնը բոլորովին այլ առ
արկաներով է զբաղված։ Նա սովոր չլինե-
լով ուշադիր լինելու դեպի արտաքին աշ-
խարհն, անուշագիր է և ուսումնարանում :
Գրելու ժամանակ նա օրինակին չէ նայում,
կարգադրու ժամանակ չէ հետեւում կարգա-
ցածին, թէեւ նայում է դրքին. Երբ ուսու-
ցիը նկարում է տախտակի վերայ, նա նա-
յում է տախտակին, բայց չէ դիտում նը-
կարը, այլ բոլորովին ուրիշ բաներ և այլն :
Իմ կարծիքով չէ կարել ասել, թէ ի՞նչ
է տեսնում այդ միջոցին երեխայն : Երբ
ուսուցիը խօսում է, այդ տեսակ երեխայն

կարծես ուշաղբութեամբ լսումէ, բայց սր-
խալէ կարծիքը, որովհետեւթէեւ նորա
աչքերը դարձած են այն կողմը բայց
նա նայում է ուսուցչի շորերի վերայ,
նորա կերպարանքի վերայ և գուցէ մատածում
է սոցա վերայ շատ տրամադրանօրէն, բայց չէ
լսում նորան. Նա ընդունակ չէ հետեւելու
դասախոսութեանը, մինչև անգամ այն ժա-
մանակ, երբ սցդ լինի թէ ձեռվ և թէ
պարունակութեամբ միանգամայն նորա հա-
սակին համեմատ։ Այս դեպում ևս, ես
կարծում եմ, չէ կարել ասել թէ ի՞նչ չէ,
լսում երեխայն։ Նա այդ միջոցին իւր
զգայարանքների տեկր չէ, այլ նոցա գերին.
Նա իւր զգայարանքներին ենթարկվում է
անպայման։ Նորա մտաւոր գործունէութիւ-
նըն ևս միանգամայն պատուհական է՝ նա
կախված է այն ախորժ տպաւորութիւններից,
որոնք այդ միջոցին ներդործում են նորա
վերայ և ոչ թէ երեխայի կամքից։ Ուրեմն
տարբական ուսումնարանի համար ամենա-
լաւ նախապատրաստութիւնը արտաքին

զդայարանքների զարդացումն է: Ուսուցելը
ձեր որդուն լսել և տեսնել. այս լարնա-
դիրը շատ դիւրին է: Տուէլք նորան իւր
հասակի: յարմար յանձնարարութիւններ
և պահանջեցելք մանաւանդ, որ ձեր խօս-
քերը ծառային կամ ում եիցէ խօսքերը
ձեզ նա լիովին և ճշդութեամբ յայտնէ:
Երբ գուը խօսումէլք նորա հետ, չժոյլա-
տրէլք, որ նորա ուշադրութիւնը ցըմի: Մնա-
ցած զդայարանքների զարդացման մասին
հարկաւորութիւն չկայ առանձին հոգալու.
այնինչ առհասարակ ճաշակելիքը առաւել
է զարդանում և տիրապետումէ միւս,
զդայարանքների վերայ:

Հատ ցանկալի է նոյնպէս, որ ուսում-
նարան մննող երեխանները խօսէին մա-
քուր և կանոնաւոր լեզուով: Մայրերը ըստ
մեծի մասին շատ քիչ ուշադրութիւն են
դարձնում դորա վերայ և երեխանների լե-
զուն շատ անդամ իրաւունք է տալիս ու-
սուցչին անբաւարար եղակացութիւն ա-
նել իւր աշակերտների ընտանեկան կըր-

թութեան մասին: Մինը խօսակցութեան
ժամանակ զործ է ածում այնպիսի բա-
ռեր, որոնք միանգամցն երեխայական բար-
բառին են վերաբերում, միւսը խօսումէ
այն բարբառով, որ լսել է իւր տան ծառ-
ուաներից, երրորդը բոլորվն չէ կարողա-
նում արտասանել, մի քանի հնչելներ,
մինչդեռ ոչ մի դործարանական պակասու-
թիւն չունի: Առաջնին թոյլատրումէին
փոփոխել բառերն որովհետեւ մայրիկը
հաւանաւմէր այդ երկրորդն ակնկերեւ է,
որ մնացել է ծառաների մեջ և ծնողքը
չեն կարողացել նորա արտասանութեան
պակասութիւնները նկատել, որովհետեւ
երեխայի վերայ շատ քիչ ուշադրութիւն էին
դարձնում: Երրորդը շատ դիւրին կերպով
կուղղէր իւր արտասանութեան պակասու-
թիւններն, եթէ ծնողքը համերութիւն
ունենային և հոգային դորա մասին: բայց
այդ աշխատութիւնը լաւ են համարել
ուսումնարանին թողնել: Այնինչ կանոնա-
ւոր խօսակցութիւնը շատ հեշտացնումէ

կարգալ և դրեն, որովհետեւ առաջին տարիներն երեխայն զբուժէ այնպէս, ինչպէս խօսումէ: Զայէաք է մոռանալ, որ կանոնաւոր խօսակցութիւնը մեծ ազդեցութիւն ունի պարզ և կանոնաւոր մտածելու վերսց ևս: Երեխաներին պարզ և կանոնաւոր խօսակցութիւն ուսուցանելու համար կարելի է ուսուցանել նոցա փոքրիկ երեխայական պատմութիւններ, ուսանաւորներ և այն զգուշանալով այնպիսի բաներից, ուրոնք նոցա հասկացողութիւնից վեր են: Նոր բան չպէտք է պատմել, մինչև որ երեխայն առաջին պատմութիւնը լաւ չդիտենայ և չկարողանայ առաջի պատմութեան վերաբերեալ բոլոր հարցերին պատասխանել. առանց սորան երեխայն կրաւորական գեր կիսաղայ միայն եւ պատմութիւնը նորա համար լոկ ժամանակ անցկացնելու միջոց կլինի և ոչ թէ ուսանելու եւ զարգանալու. գորանով նա կըսովորի ժամանակին բոմաններ միայն կարգալու, այն ևս առանց մի որևէ իցէ նպատակի:

Այս է իմ կարծիքով ընտանեկան նախալատրաստութեան անհրաժեշտ կողմերն, որոնք ցանկալի են խուսումնարանական կրթութեան յառաջաղիմութեան համար: Բայց այս ցանկ աւ լի է, որ երեխաներն ուսումնարան մննելուց առաջ հասկացողութիւն ունենային թուերի մասին: Այն երեխայն, որի արտաքին զգայարակների զարգացման վերայ ուշադրութիւն է դարձուցած, անշուշտ հասկացողութիւն կունենայ և թուերի մասին: Բայց երեխաների մեծ մասը գիտէ միայն, որ նա ունի երկու աչք, երկու ականջ, երկու ձեռք, երկու ոտք և այլն. կան այն այնպիսի երեխաներ, որոնք մինչև հարիւմն անզայ համարել գիտեն, բայց հալցրեցէք նոցա և օթն է շատ թէ իննը. դժուար թէ ձիշտ պատ սախան ստանաք, որովհետեւ նա թուերն ուսել է մեքենայաբար, առանց մի որ և իցէ գաղտփար կազմելու նոցա մասին: Այդպիսի երեխաներին զրեթէ առաւել դժուար է թուերի մասին

գաղափար կազմել տալը, քան թէ նոցա,
որոնք բոլորովին թուել չդիտեն: Թուեր սովո-
րեցնելում ծնողը չունին չափ: կարծե-
լով թէ երեխային բազմապատճելու աղիւ-
սակն ուսուցանեն օգուտ է ուսումնարանի
համար, շատ ծնողը ուսուցանում են այդ.
բայց եթէ վնաս ևս չլինի, գոնեա իզուր
տեղը կորցրած կլինիք ձեր ժամանակն և
աշխատանքը: Ձեր որդուն ուսումնարա-
նում թուաբանութիւնը հեշտացնելու հա-
մար աշխատեցէք, որ նա թուերի անուն-
ների հետ կազմէ և մի դաղափար: սորա
համար գասեր հարկաւոր չեն, ևս ինքս
ընդդէմ եմ դորան, որովհետեւ նա գեռ
փոքր է, մանաւանդ որ կարդաւոր գասերը
յանձնելու է ուսումնարանին: Երեխայի
կեանքը, նորա խաղերը, դործունէութիւնը,
զրոսանքը, սեփական հարցերն, օրինակ՝
ամպրիկ, ինձ քանի՞ կաղին, դեղձ, ինձոր
կամ տանձ կտաս: — այս բոլորը երեխայի
համար շատ լաւ նախապարասաւելու մի-
ջոցներ են: Իւր այս տեսակ հարցերն ինչ-
քըն ըստ ինքեան ցոյց են տալիս թէ ինչ

միջոցներով պէտքէ ծանօթացնել նորան
թուերի հետ: Միշտ պէտք է թուել շըլ-
ջապատող առարկաների, մանաւանդ շըլ-
ժական իրերի միջնորդութեամբ: ուստի եր-
բէք չպէտքէ հարցնել երկու և մի քանի կը-
լինի, կամ վեցից հանենք չոլաը-քանի կմնայ:
Այլ թող երեխայն թուէ սեղաններն, ա-
թուները, խաղալիքը, կաղիններն և այլն:
Տուէք նորան հետեւալ տեսակ յանձնա-
րաբութիւններ: «Քեր ինձ երեք զրդալ,
մօտեցրու սեղանին չորս աթոռ, ահա քեզ-
վեց կաղին, երեքը առուր քրոջդ, իսկ մնա-
ցածը քեզ» և այլն: Սորա համար շատ
յարմար են նարդու զարերը, որնց վերայ
ամեն կողմից կէտեր կան: Երեխայն նոցա
վերայ տեսնումէ ինչպէս գումարվում են
թուերը: օրինակ $4=2+2$, $6=3+3$ և այլն:
Առաւել լաւ միջոց կարել է համարել
մի քանի տասնեակ փայտեայ կտորներ, ո-
րոնցից երեխայն բազմազան շնութիւններ
է կազմում: խաղալով այդ կտորներով
նա վաքր առ վաքր ուսունում է և հա-

շուելը։ Գուք կարող եք ուսուցանել հետևեալ կերպով։ «Ճնիք մի բուրդ չըս կտորից, (եթէ չկարողանայ—ցոյց տուեք), այժմ մի ուրիշ վից կտորից, մինն ես ութլ կտորից։ Առ մի կտորն առաջենից և դիր երկրորդի վերայ, քանի կտոր մնաց տռաջի բուրդում և քանի է երկրորդում այժմ, և այն։ Այսպիսի խաղում, եթէ դուք կկարողանաք պահպանել խաղի յատկութիւնն և ծածկել ձեր դիտաւորութիւնն, երեխայն մեծ յօժարութեամբ մի ժամկանցկացնէ, որ առաւել օդտառէա է նորա համար, քանի մի որ և իցէ դաս թուաբանութիւնից ուսումնարանում։ Ես մաանանիշ եմ անում մի քանի ձեւերին, դուք կարող եք հնարել և ուրիշ շատ միջոցներ։ Այսպէս ուրեմն թուերի վերաբերութեամբ ես բաւական եմ համարում ուսումնարան մանելու համար այս տեսակ պատահական ծանօթութիւնն երեխաների համար մերձաւրապէս մինչեւ տասն։ Խակ կանոնաւոր ուսուցանելը զու

նեա աւելորդ է իմ կարծիքով։ Մի և նոյնը կարելի է ասել միւս առարկաների մասին ևս, տառեր կամ կարգալ սովորեցնելը բոլըրովին օգուտ չունի, որովհետեւ ուսումնարան մանսող երեխաների մեծ մասը սկսում է այբ և բէնից, ուստի արդէն զիտեցողը դասի ժամանակ անդործութիւնից պէտք է հոգնի—խակ այս շատ վատէ ազդում երեխաների վերայ։ Նոյնպէս և զիեն—ուսումնարանում սկզբիցն են ըսկում։ Բացի այս, զրելու ձևերը գեռ ուրոշված չեն և ամեն ուսումնարանում ոչ միատեսակ։ Ուստի գուցէ զրել զիտեցող երեխայն հարկադրված լինի մոռանալ իւր ուսածն առ աջ—անօդուտ և անվարձատրելի աշխատանք։ Այն տեղերում, ուր տարրական ուսումնարանները միաձեւ չեն, հարկաւոր է նախ ծանօթանալ այն ուսումնարանի հետ, ուր մտատիր են տեղաւորել երեխայնն և ասպա աշխատել նախապատրաստել նորան այնպէս, որ նազիտենայ այնքան, ինչքան պահանջում է

ուսումնարանն —ըստ կարելութեան ոչ առաւել ևոչ պակաս:

ՆԱՄԱԿ

Ճ.Բ.

Դատք հարցնում էք, թէ ինչպէս և որքան ծնողքը պարտական են հսկելու և օգնելու երեխաններին ուսումնարանական դասերը պատրաստելու ժամանակի: Այս հարցին ես կտառասխանեմ հետեւալ օրինակով՝ մօտերում իմ ուսումնարանի աշակերտների ծնողներից մինը յայտնեց իւր զըժգոհութիւնը, որ նորա որդին մի քառնի առարկաներից թոյլ է, թէև յանցանքը ոչ ուսումնարանին, այլ իւր որդուն էր վերաբերում: Արդարեւ, ես ևս վերջնի ժամանակները դժգոհ էի այն աշակերտից և իմ դժգոհութիւնը յատնում էի վասթուանշաններով: Ես նկատել էի նոյն պէս, որ դասատան մէջ նա շատ դանդաղ

եւ անհամարձակ էր պարապում, այնա ինչ տանը պատրաստած դասերը շատ գոհացուցիչ էին: Ինձ յատնի էր, որ նա տանն ունի առանձին ուսուցիչ, որովհետեւ տիարութեան պատճառով նա մօտ մի ամիս ուսումնարան չէր զալիս, ուստի չնայելով նորա ընդունակութեանը նա առաջադէմներից չէր: Առ հասարակ ատն օգնութիւնը և նախապատրաստելը վաս հետեւանքներ կունենան աշակերտի մաքի եւ բնաւորութեան դարզացման վերայ, բացի այն դէպքերը, երբ աշակերտը բըթամիտ է կամ մի քանի ժամանակ տըկար է եղել: Վերոյիշեալ օրինակում տան օգնութիւնը անհրաժեշտ էր, որովհետեւ մօտ մի ամսուայ ընթացքում աշակերտը տկար էր և այդ պատճառով յետ էր մընացել իւր ընկերներից, ուսակ հարկաւոր էր հացնել նորան իւր ընկերակիցներին և ասկա թողնել օգնութիւնը, բայց այսպէս չեղաւ, ուսուցիչն անցէր կենում տանն այն բոլոր առարկաները, որոնք աւանդվում

Են ուսումնարանում և շինումէր աշակերտի համար բոլոր թուաբանական և քերականական խնդիրները։ Սորա հետեւանքն այն եղաւ, որ աշակերտը չնայելով իւր տան ուսուցչի բարեխղճաբար պարապելուն եւ հմտութեանն, ինքնուրոյն պարապելուց յետ կանդնեցաւ։ Նա շատ լաւ դիտէր, որ շուտով գալու էր ուսուցիչն և կպատմէր նորան բոլոր դասերը, ուստի ինքն աւելրդի էր համարում գլուխ ցաւացնեն և աշխատեն։ Այսպիսով փոքր առ փոքր աշակերտը ծուլանում է մի բանի վերայ մտածել և մինչեւ որ ուսուցիչը չստիպէ, չէ աշխատում մտաւորապէս։ Առ հասարակ այն ծնողքը, որոնք օգնում են իւրեանց երեխաներին ուսումնարանի պարագնունքներում, հեռացնում են իւրեանց երեխաներին ինքնուրոյն աշխատութիւնից և ուսումնարանում անուշադիր լինելու պատճառ են դառնում, մինչեւ անդամ այն ժամանակ ևս, երբ այդ ծնողքը ձեռունամնեւին են լինում դորջին հմտութեամբ։

Աշակերտը դասի ժամանակ անուշադիր է, գիտենալով որ տանն ուսուցչի բոլոր պատմածը կլրինեն և կուտուցանեն; Բասի այս երեխայն խաբեբայութիւնն է սովորում թէւ ամենասանմեղ ձեռվլ։ Ուսուցիչը չդիտէ, թէ ինչ միջոցներով աշակերտը պատրաստել է իւր դասը և դովում է նորան միանգամայն անարժան տեղը. աշակերտը իւր կողմից չէ կասկածում, որ այդ դովասանքն անարժան է, որպէս ետև դեռ չէ դիտակցում, թէ ուրիշի աշխատանքն է դովասանքի պատճառը։ Ուրեմն տանն առանձին ուսուցիչը պահող ծնողքը փոխանակ ուսումնարանի դործը թեթեացնելու դժուարացնում են։ Ուսուցիչն աշակերտի յառաջադիմութիւնը տեմնելով և չկասկածելով նորա բուն պատճառը, չէ տեմնում, որ օրէցօր աւելացրած աշխատանքն աշակերտը չէ կարողանում առանց օգնութեան կատարելու, ինչպէս և չէ կատարել առաջուանն և այսպիսով խանգարվում է բոլոր ուսումնի և վնասվում

Երեխայի մտաւոր զարգացումը: Երեխայի բնաւորութեան վերայ ևս վատ է ազգում մշտական օգնութիւնն: Այս տեսակ դաստիարակված երեխայն ընդունակ չէ լինելու ապագայում ինքնուրոյն և գժուար աշխատութեան: Նորա մտաւոր զօրութիւնները զօրեղ չեն լինիլ և նա պարզափրտ բնաւորութեան տէր չի լինիլ ընդհակառակը կարելի է սպասել, որ նա կլինի թոյլ և ծոյլ մտաւոր զօրութիւնների տէր, առանց հիմնաւոր կարծիքի, ազնուաբար իւր սխալն և մոլութիւնը չխոստովանող մարդ: Պէտք է ի մտի ունենալ, որ տանը պատրաստելու տուած աշխատանքը թէ քանակութեամբ և թէ որպիսութեամբ աշակերտի կարողութեան յարմար է լինում և եթէ հարկաւոր է փոքրերին մտարերելու, որ նորա պարապեն, հարկաւոր չէ երբէք ցոյց տալ նոցա ինչպէս հարկաւոր է այդ անել, որովհետեւ ուշագիր աշակերտը լասձ կլինի արդէն ուսուցչի բացատրութիւններն այդ աշխատանքին մտաւոր զօրութիւնները զօրեղ չեն լինիլ և աշակերտի կամաց անդամն աշխատանքը չի լինիլ: Այս պատրաստելու մասին աշխատանքը կամաց անդամն աշխատանքը չի լինիլ: Այս պատրաստելու մասին աշխատանքը կամաց անդամն աշխատանքը չի լինիլ:

Ես երբէք չեմ նկատել, որ տան օդանութիւնն օգտաւետ լինէր աշակերտի համար: այնինչ վնասակար լինելը շատ եմ տեսել: Մեծ աշակերտաներին միանդամայն աւելորդ է յիշել նոցա պարտականութիւններն և նոցա ուսումնարանական պարտապահներն, որովհետեւ նորա արդէն կարող են կինդրոնացնել իւրեանց մտաւոր զօրութիւններն իւրեանց պարտականութիւնները ըստանալու համար: Էսպէս տանը պատրաստելու խնդիրը ոչ այնքան կատարելագործվելու համար է, որքան նոցա ինքնուրոյն և տպատ դործունէութեան զարգացման և պարտականութիւնների բարեխղճաբար և անփոխիս կատարման համար, որոնք պահանջում են աշակերտի կողմից ստիպել իւրեան և կատարել իւր ցանկութիւնն: Ուսումնարանում աշակերտը զիսաւորապէս կրաւորական դեր է խաղում: ուսուցչի ներկայութիւնը, նորա մշտական հսկողութիւնն և դործունէութիւնը ստիպում են աշակերտին ուշագիր լինելու: Իսկ երբ ա-

շակերտը տանն է պատրաստում իւր գտա-
սելն, այն ժամանակն ինքն իւրեան լինե-
լով, նորա ուշադրութիւնն և աշխատու-
թեան արժանաւորութիւնը կախված կիւ-
նի միայն նորա բնաւորութեան կտմ
կամքի զօրութիւնից:

Եթէ աշակերտը մի որ և իցէ տառ-
ձառով բաւական դասեր թաղեց, հար-
կաւոր է և շատ օգտակար տանն առան-
ձին պարագել նորա հետ, միայն պէտք
է այնքան, որ նո հանի իւր ընկերա-
կիցներին, յետոյ թողնելու նորան առանց
օգնութեան: Ուսումնարանում աւանդած
բոլոր դասերի կրկնօղութիւնը շատ օգ-
տաւէտ է: **Աթէ** աշակերտն ուսումնարա-
նից տուն գալով ամեն անփամ պարաս-
տոր լինէր կրկնելու ուսումնարանում անց-
կացած դասն, այդ ոչ միայն կտմաւորէր
նորա յիշողութեան մէջ ուսուցչից լսածն,
այլ և կտմաւորնէր նորան ինչուուրոյն
մտաւոր աշխատութեան, որովհեաւ ու-
սումնարանական դորձունէութեան պատ-

յայտումը կամհանջէր երեխայից լիսկա-
տար ուշադրութիւն և մտաւոր զօրու-
թիւնների կենդրուացումն: Այս պատճա-
ռով ես միանգամայն ընդունում եմ
այդ ձեւի տան օգնութիւնն:

Անհերքելի է, որ ամեն խելացի օգ-
նութիւն ծնողաց կողմից ուսումնարանին
թեթևացնում է այս վերջինի գործը.
բայց միանգամայն հարկաւոր է, որ ծնող-
քըն իւրեանց երեխաներին ուսումնարան
տալու ժամանակ բարեխղճարար և պատզ-
յայտնեն իւրեանց երեխաների բնաւո-
րութեան պակասաւթիւններն եւ վաս-
տովորութիւններն: Առաջուց դիտենալով
այս, ուսուցիչն խօսյն կարող է համա-
պատասխան դասախրամկական միջոցներ
գործ զնել դոցա ուղղելու համար. իսկ
իմանալով փոքր առ փոքր մի քանի ամ-
սից յետոյ երեխայի պակասաւթիւններն,
ուսուցչի գործը գժուարանում է և եր-
բեմն արդէն ուշ է լինում իւր ուղղելու
միջոցների գործածելն: Ուսումնարան մըտ-

նելու բովէն դաստիարակական ազգեցուաթեան ամենակարեղը և բարեյաջող բովէն ներից մինն է: Ուսուցիչը շատ հեշտութեամբ կարող է խմանալ երեխայի մուռ զարգացման աստիճանն, իսկ երեխայի բարոյական զրութիւնը դժուար է շուտով խմանալ, մանաւանդ որ երեխայն ուսումնարան մանելիս նորանոր տակաւորութիւնների, անծանօթ ընկերների, ուսումնարանի կարգ և կանոնի ազգեցութիւնից փոխվում է, կենդրոնացնում է իւր մտաւոր զօրութիւններն և միայն մի քանի ժամանակից յետոյ, երբ արգէն նա ընտելանում է իւր զրութեանը ըսկափումէ արասպայտել իւրեան և իւր բոլոր սովորութիւններն:

Ուսուցիչն ամենից աւելի դժուարանում է այն երեխաների հետ վարիլ, որոնք իւրեանց ծնողաց վկայութեամբ ոչ ստախօս և ոչ խաբերայեն. իսկ գործից երբեւմ է, որ նորա իսկ այդ բաներում ամենահամառներն են: Այդիսպիսի աշա-

կերաներ ինձ շատ են խարել, որովհետեւ ևս նախազգուշացած չլնելով կասկած անդամ չունեի նոյցա վերայ, ասդա թէ ոչ իսկոյն կեշմարէի նոյցա այդ պակասութիւններն և այն յատկութիւններըն, որոնք ստախօսութեան յատուկ են: Դժբաղդաբար ստախօսութիւնն առանձին ախտ չէ, այլ մարդ սուտ է խօսում իւր ուրիշ ախտերը ծածկելու համար. սուտ է խօսում առաւել լաւ երեալու համար, քան է. սուտ է խօսում իւրեան չճանաչող մարդոց հաւատարմութիւնը գրաւելու համար և ամեն մի յաջողութիւն այս մոլար ճանապարհում տմբացնում է և պահպանում այդ ախտաւոր հակումը մարդու մէջ: Ես ձեզ, Նաղելի Տիկին, կրացատրեմ, թէ ինչպէս երեխաները փոքը առ փոքր անբարոյական և ստախօս են գաւնում և ողքան մեղաւոր են ծնողքը գորանում և ինպէս դուք կարող եք ձեր որդւոյն հեռու պահել այդ ամենակեղաստութեան մասութիւնից:

Այժմ՝ գարձնումեմ ձեր ուշադրութիւնը աշակերտների գասերից յ ետքն կնելու վերայ։ Ուսումնարան տալվերեխային, ծնողքը միայն այն ժամանակի կարող են յառաջադիմութիւն սպասել, երբ երեխայն կանոնաւոր գնում է դասի։ Այն մի խելացի գասառուութիւն մի ամբողջ բան է, սցսպէս տաել մի շողթոյ է, որի ամեն մի օղը ուերտ կարգված է միւսի հետ։ Այս կապն է, որ տաղիս է ուսումնարանում աւանդած զիտութիւններին դասախարակական զօրութիւն։ Ուստի ամեն մի թողած գասը կորուստ է աշակերտի համար, մինչեւ անդամ եթէ այդ պատահի ուշ ուշ և տանը կարգանան վարձատրել այդ կորուստն։ Խակ եթէ դասից յետ ընկնելը յաճախ է սպասահում, այն ժամանակ աշակերտը կասանայ ուսումնարանից մի քանի տեղեկութիւններ, բայց ոչ լորդացուցիչ զիտութիւն։ Դրադրագարար ծնողքը ոչ միշտ լու հաւանում են երեխայի դասից յետ մնալու

վնասն և տանն են թողնում երեխային ոչ միայն հիւանդութեան, այլ և միանդամայն անցարդելի պատճառներով։ Մանաւանդ այն ծնողքն անկանոն են ուղարկում իւրեանց երեխաներին, որոնք միջոց ոնին տանը սպատրսատելու, բայց այս տեսակ ուսումից յառաջադիմութիւն սպասել կարելի չէ։ Բայցի այն, որ աշակերտը կիսկտուք տեղեկութիւններ է ստանում դասերից յաճախ յետ մնալով, որ ինչպէս ասացինք չէ կարող նպաստել նորազարդացմանն — աշակերտը կմոռանայ ուսումնարանական կարգ և կանոնը, դասի ժամանակ ուշադիր չի լինիլ և երկար ժամանակից յետոյ հաղիւ հաղ կընտելանայ ուսումնարանի ձեկն։ Աշակերտի յաճախ դասերից յետ ընկնելը ցցց է տալիս, որ նորա ծնողքը շատ թեթև են նայում ուսումնարանի վերայ և այս կիսախանցվի աշակերտի վերայ ևս, որ կախէթեթև նայել իւր ուսումնարանական պարտաւորութիւնների և աշխատանքի վերայ։

Մի խօսքով, եթէ դուք ցանկանում եք,
որ ձեր որդւոյն ուսումնարանն օգուտ բերէ,
ուղարկեցէք նորան ուսումնարան տա-
րուայ սկզբից մինչև վերջն, որքան կարելի
է կանոնաւոր և միշտ:

ՆԱԾԱԿ

Ժ.Գ.

Դուք կարծում եք, թէ ևս չափաղան-
ցացնում եմ ստախօսութեան կամ լաւ
ևս է առել ստախօսութեան առաջին
քայլերի հետևանկըները: Խօսքս իսկ այդ
առաջի քայլերի մսսին է, որոնց առաջը
պէտք է առնել և չժողնել, որ նոքա
երեխայի բնաւորութեան մէջ արմատա-
նալով սովորութիւն դառնան: Շատ ան-
դամ ծնող քը գանդատիւմ են առելով,
թէ նոյս երեխաներն առաջ պարզասիրա-
և ճշմարտախօս էին և յանկարծ սկսե-
ցին սուտ խօսել և խարել: Այդ
սխալ է երեխաների մէջ «յանկարծ»
փոփոխութիւններ չեն լնում. անշուշա-

երեխաներն առաջ ևս խօրում էին իւ-
րեանց ծնողաց, բայց այս վերջնները չեին
նկատում: «Յանկարծ» կարելի է, որ չա-
րիքի սեր մն ընկնի երեխայի սրտի մէջ,
բայց ոչ չարիքի սովորութիւնն և այդ
կայծը յանկարծ չէ հրդեհ պատճա-
ռում: Ուստի հարկաւոր է գանել վաս
սերմը. այդ հեշտ չէ, որովհետեւ չարիքի
սերմն առ հասարակ այնքան անմեղ ձև
ունի և փոքր է, որ նորան չեն նկատում
կամ վնասակար չեն համարում: Ահա
ձեզ օրինակ, երեխային մի բան պատմելու
ժամանակ խառնում է փաստերը, տեղն
և ժամանակն ամենածիծաղելի կերպով,
որով մեծ զուարձութիւն է պատճառում
ծնողացն և շրջապատողներին: Սորանից
գեռ վնաս չկայ, բայց ահա կրկնել են
ապիս երեխային իւր պատմածը, զանա-
զան հարցերով նորա միտքն են ձգում
պատմութեան ծիծաղելի և սխալ կողմելն
և զուարձանալով բաւականաչափ շատ
անդամ վարձատրում են նորան: Կրկնե-

ըսլ այս արարողաթիւնը յաճախ դաստիարակներն երեխային այն մաքին են բերում, թէ նորա պատմութեան սխալ և անցարմար կողմերը զբարձութիւն են պատճառում: Որքան որ երեխային ի բնէ սրամիա լինի, այնքան շուա նա կոսկորի գիտութեամբ խառնել իւր պատմութիւնները, ցանկալով դոկասանք լսել, վարձատրմել քաղցրեղէնով և այլն:

Չկարծէք թէ այսպիսի դէպքեր ուշ ուշ են պատահում. ընդհակառակն, ուշազբութեամբ գիտեցէք և կտեսնէք, որ շատ երեխաներ գիտութեամբ իւրեանցից բաներ են աւելացնում պատմութեան մէջ: Շատ ծնողք վերջն աշխատում են յետ կանգնեցնել իւրեանց որդւոց այդ սովորութիւնից, մինչև անդամ պատժում են, որ գոնեա գորանով նա ճշմարտախօսութեան ճանապարհը վերադառնայ: Այս կրիստոնայիկ անարդարութիւն է, որովհետեւ ծնողքն իւրեանց սեփական զուարձութեան համար թոյլարելով և

ջատագովելով երեխային խառնաշփոթ պատմութիւնների համար, դժուարացնում էին նորան կանոնաւոր լեզու սովորելն եւ իւրեան շրջապատող աշխարհը Ճիշտ կերպով հասկանալն: Ասպագում այդ տեսակ երեխաներն ուսումնարանում, չնայելով նոյս ընդունակութեանը, չեն կարողանալ պարու, առանց շփոթելու մի բան պատճել կամ մտածել, այլ միշտ իսկութիւնն ըստ հին սովորութեան կիսառնեն հնարածի հետ: Յովնենք այս կողմն. երեխայն բարոյապէս ևս խանգարմում է. նա փոքր ի շատէ կորցնում է ճշմարտախօսութեան այն նուրբ զգացմնենքն, որ սեփական է երեխաներին և որ աւելի վաս է նա սովորում է օգուտ քաղել սաախօսութիւնից թէև միանգամայն անմեղ կերպով: Վեց - եօթը տարեկան երեխայն ճշմարտախօս ովէտք է լինի. Նորա երեխայական հնարած պատմութիւններն այնքան պարտամիտ չեն և դուք չեն դարձես. բայց այնուամենայիւ ստախօսու-

թեան սովորութիւնը մնացել է և նոքա
աշխատում են միայն առաւել հմտու-
թեամբ դործածել այդ սովորութիւնն:

Ուրեմն, երբէք մի' հարասահարեք
ձեր որդուց անմեղ և ախորժ ստախօսու-
թիւնը ձեր զուարձութեան համար: Որ-
քան կարելի է շուտ բայցարեցէք բոլոր
նորա սխանները: Ճշմարտախօսութիւնն
երբէք ձեր որդուցն պարզամտութիւնից
և պարզասրութիւնից չէ զրկելու: Մի'
մոռանաք, որ մենք երեխայի մէջ պարփական ենք
պարփական ճարշիայն արծոնառութիւնն, ուստի
չունեն է երեխային մեր խոշոշելու շնչենք և
անմոռանացնենք: մեր զուտոքմութեան համար:

Ես ձեզ ցոյց տուեցի թէ ինչպէս ե-
րեխայն կորցնում է ճշմարտախօսութեան
զգացմունքն արտաքին ազգեցութիւններից,
բայց երեխաներն երբեմն գլուքեանց լսել
քով՝ ևս համում են ամենանմեղ
ստախօսութեան. օրինակ, ևս տեսել եմ
երկու տարեկանից փոքր երեխաներ, որոնք

երբ կամենում են, որ գայեւակն խըրեանց
մօտ լինի կամ անկօղնից հանե նոցա,
այնպիսի պատճառներ և պիտոյքներ էին
ասում, որ բալորովն չունեն: Մինչև որ
այս հնարազիտութիւնը յաջողութիւն
ուներ, այսինքն մինչև որ գայեւակը գալիս
էր և հանում տեղեց, երեխայն կրկնում
էր յաճախ: Ի հարկէ այդ հասակի երե-
խայն չէ կարող հասկացողութիւն ունե-
նալ ճշմարտախօսութեան և ստախօսու-
թեան մասին, բայց նա գիտէ անշուշտ,
որ այդ հնարով նա համում է խըր
նպատակին: Այս վերջին հանդամներն է
պատճառ երեխաների ստախօսութեանը:
Քանի երեխայն մեծանում է, այնքան նա
առաւել հնարների թիւն աւելացնում
և ձեւակերպում է: Յ ա ջ ո դ ո ւ թ ի ւ ն.
ահա այն բառն, որով բայցարվում է
ստախօսութեան սովորութիւնն, որ երբեմն
համում է մեծերի մէջ մինչև զայրա-
ցուցիչ անդարձոյականութեան: Երեխաներն
առաւել փոքր տուտ կխօսէին, եթէ ծնողը

քըն ուշադրութեամբ լսէին և զանեա երբեմն ստուգէին նոցա խօսքերն։ Օրինակ, երեխայն վառ երեւակայութեան աղջեցութեան տակ պատմումէ մօրն իւր ընկերների հետ խաղալու մասին առասպելական բառներ. մայրը լուսում է նորան, մասամբ նկատում է չափաղանցութիւնը, բայց ոչնչ չէ ասում մասածելով, որ հարկաւոր չէ խանգարել երեխայի պարզամիտ թօթով մունքը։ Բայց, հարյուսում եմ, եթէ երեխայն միշտ երեւակայական բաներ կիսուի, եթէ միշտ կ'խաղնէ խկութիւնը հնարածի հետ, մի՞թէ այս չի խանգարելու խկութիւնը պարզ և դրապէս ըմբոնելու և նկարազելու ընդունակութիւնները։

Բայցի պարզ ընդունելու ընդունակութիւնը սորանով կմնալի երեխայի ընաւորութիւնն ևս թէեւ երեխայական պատմութիւնների երեւակայական տարրը դատապարտելի չէ և երեխայն առանց կարմիկու պատմում է անզիտակցաբար սուտ բաներ, բայց ապագայում երբ սուտն ար-

դէն գիտակցաբար է ասվում, նոքա այն ժամանակն . ևս ըստ սովորութեան չեն կարմրում . վերջապէս ստախօսութիւնն անյաղթելի սովորութիւն է գառնում, որի գէմ պատերազմելը դաստիարակի կողմից շատ դժուար է։ Միանդամ մի մայր իմ ներկայութեանս յանդիմանեց իւր ութը տապեկան որդւոյն տուտ և հնարած պատմութեան համար մի այնպիսի զէպքի մասն, որին ինքը ներկայ էր եղած։ «Աւազ», մայրիկ,» ասաց երեխայն, «երբ ես պատմում եմ առանց հնարածի, քեզ դուք չէ դալս պատմածս։» Ներեխայի պարզամիտ պատասխանն ինքն իւրեան պարզ է։ Զարմանալու չէ, եթէ այն երեխայն ժամանակին ստախօս և մնապարծ դառնայ և ամեն բան թէ կարեսը և թէ չնչին իւր քմքին յարմար ձեւակերպէ երբեմն գեղեցիկ խօսքի։ Համար, երբեմն առանց պատճառի՝ զատ սովորութեան։»

Ես չէի հաւատում, թէ կան այնպիսի մարդիկ, որոնք չեն կարող մի բառ ար-

տասանել առւանց սուտ խօսելու, բայց տարաբաղդաբար ևս համազվեցայ վերոյիշեալ խօսքերի ճշմարտութեանն իմ աշակերտներից մինի վերայ: Արդարեւ նորա ամեն մի բառը սուտ էր և հակառակ խալութեան: Երկար և զգոյշ աշխատանքից յետոյ նա սկսեց ուղղվել: Թէև նա առաջուայ պէս սուտ էր խօսում, բայց սուտ ասելուց յետոյ խնկոյն տւելացնում էր՝ «ոչ, այդ ճշմարիտ չէ, ահա ինչպէս էր դործը»:

Մինչեւ այժմ մենք աեսանք մեր խօսակցութեան նիւթի բացասական կողմերն, այսինքն ինչպէս դաստիարակները մեղանցում են երեխայի առաջ ընպատելով՝ նորա մէջ ճշմարտախօսութեան զգացմանըը դարդացնելու և ըպահպանելով՝ նորան ստախօսութեան սովորութիւնից: Մինչեւ անդամ եթէ այդ սովորութիւնը չար չէ և անմեղէ, այնուամենայնիւ, ինչպէս մենք արդէն աեսանք, ինչպատճեն կարիւ կատարմանըիւնը միանուամայն անարժան կերպով:

լովկ ստախօսը սկզբում վաստ դիտաւորութիւն չունի երբէք—նա սուտ է խօսում, որովհետեւ չէ հասկանում ստախօսութեան սոսկալի դարշութիւնը. յետոյ սուտ է խօսում ըստ ոսկորութեան և վերջապէս սուտ է խօսում շահասիրութեան համար, այսինքն սուտ է խօսում ըստ կարելիութեան աւելի օդուտ և յարմարութիւն ձեռք բերելու համար, դրաւելով ուրիշների հաւատարմանըիւնը միանուամայն անարժան կերպով:

ՆԱՄԱԿ

ԺԴ.

Այսօր ես ձեզ ցոյց կտամ, թէ ինչպէս դաստիարակներն անդիտակցաբար իւրեանց աշակերտների ստախօսութեան պատճառն են դառնում և երբեմն մինչեւ անդամ հարկադրում են նոցա սուտ խօսելու: Խստութեան պակասութիւնն ոչ միայն երեխաների, այլ և դաստիարակի

վերաբերութեամբ անարդարութիւն է, դաստիարակը պէտք է կատարէ իւր պարտականութիւններն առևենածից կերպավ և երբէք չպէտք է փախչի գժուարութիւնից: Դուք տեսած կլինիք այնպիսի ծնաղք, որոնք իւրեանց երեխաներին անգագար և անթիւ հրամաններ են տալիս, որոնք երեխայի կարողութիւնից վեր են և ոչ միանգամ չեն ստուգում—կատարեց արդիք երեխայն հրամանների գէթ մի մասով թէ ոչ: Ճշմարիտ է, որ ծնողքը բարի նպատակով են երեխային ձանձացնում հրամաններով—նոքա կամենում են այդ միջոցով պահել երեխային ուղղիղ ձանապարհի վերայ, բայց այդ միջոցը բոլորովին այլ հետեւանքի է բերում, այն է խախառում է անշուշտ երեխային ուղղիղ ձանապարհից և խարերայութիւն է սովորեցնում նորան: Ես արդէն նամակներիս մէջ ասել եմ, որ շատ հրամանները գժուարացնում են երեխայի հն աղանդութիւններ, որովհետեւ ես

ըեխայն չէ կարօղ միտք պահել և կատարել նորանից պահանջածը: Տեսէք այս ժըմ, թէ ինչպէս մեղք երեխային սոտիսօս և խարերայ ենք դարձնում նորա անձնաւկան աղատութիւնը խանգարելով: Ըսկզբում արդարեւ երեխայն հնապահովում է ծնողաց կամ դաստիարակի հրամանին բառ կարելիութեան. բայց այս կարելիութիւնը տառաւել և տառաւել պակասում է, բայցի այս, շուտով երեխայն տեսնում է, որ բոլոր հրամանները մի առանձին բան չեն: Արդարեւ, ոչ միայն ստուգելու անկարութիւն է դաստիարակի կողմից կատարվեցաւ հրամանը թէ ոչ հրամանների շատութեան պատճառով, այլ և անկարելի է այդ բոլորը միտք պահել. ուրեմն զարմանալի չէ, որ երեխայի փոքր առ փոքր սկսում է ստունախիտ նայել մօր հրամանների վերայ, որ հրամանները տալաւորութիւն չեն թողնում երեխայի վերայ, որ թոյլ կերպով են կատարվում այդ հրամանները և որ խելոյն մուանում է երե

իսպն նորան հրամայածն։ Երեխայն շուտով
կհասկանայ, որ մայրը նկատելով իւր
հրամանի չկատարելը մի փոքր կբարկանաց
և ինքը կկատարէ։ Այսպիսով շատ շուտ
դաստիարակի և աշակերտի մէջ խարե-
րայակմն յարաբերութիւններ են ծագում.
Երեխայն խարում է մօրը, մայրը ինքն իւր
ըեան։ Այս կերպ յարաբերութիւնը դժուա-
րացնում է երեխայի հնազանդութիւնն. Ե-
րեխայն սկսում է անհնազանդ դառնալ և
ընդ սմին ծուլանալ։ Երեխայն գործ է ա-
ծում ամեն մի ջոց մի որեւիցէ դժուար աշխա-
տանկից աղատվելու համար կամ կատարում
է ինչպէս որ պատահի կամ, եթէ կարելի
է, օգուտ է քաղըումուրիշի աշխատանկից,
ասելով թէ ինքն է արել։ Հասկանալի է, որ
ամեն մի կարողութիւնից վեր բան ոչ միայն
դժուարացնում է հնազանդութիւնն, այլ և
տանում երեխային գէպի խաբեբայութիւն։
Դօքանելու գնանք այժմ, » ասում է
մայրը որդւոյն։ Նոյն լսապէին մայրը մաս-
երում է իւր պարտականութիւնն իմա-

նալու պատրաստել է արդեօք երեխայն
իւր գասերը թէ ոչ։ Շատ կվրդովկէր նա,
եթէ գասերը պատրաստած չլինէր երե-
խայն, որովհետեւ դորանով կիսանդարվէին
նորա բոլոր ցանկութիւններն այդ օրուայ
համար նշանակած ծրագրի վերաբերու-
թեամբ։ Այս տպաւորութեամբ նա հարց-
նումէ որդուց՝ «ի հարկէ, ուսումնաբանի
դասերդ դու արդէն պատրաստել ես։»
— «Պատրաստել եմ ո, պատասխանում է
երեխայն գիտենալով, որ բացասական
պատասխանը խիստ կվրդովկէր մօրն, որին
նա գոնեա այս գէպըում նեղացնել չէ
կամենում։ Արդարեւ, թէպէտ երեխայն
սուտ խօսեցաւ, բայց երկու կողմն ևս բա-
ւական մնացին. մայրը կատարեց իւր պար-
տականութիւնը հարցնելով որդուց դա-
սերի մասին, իսկ որդին անախորժ դրու-
թիւնից աղատ մնաց փոքր ի շատէ պարզ
հասկանալով, որ նորանից այլ պատապ-
ևան չին ցանկանում լիւ։ Հարցն այն-
պէս եր դրած, որ այլ պատասխան տալ

կարելի չէր, ուրեմն անշուշտ սուտ պէտք
է խօսէր երեխայն։ Այսպէս լինում է և
այլ հանգամանքներում։ Ծնողքը, մանա-
ւանդ մայրերը, չկամենալով անախորժ
պատասխան լսել, այն ձեւի հարցեր են
ապիս, որ երեխայն կամայ ակամայ սուտ
պէտք է խօսի։

Կանոնաւոր գաստիարակված երեխայն
առ հասարակ ձանձրանում է, երբ ծնող-
քը նորա ամենաթեթև տկարութեան ժա-
մանակ անդամ շատ անհանգիստ են լի-
նում և մեծ ուշադրութիւն են դարձ-
նում նորա վերայ։ Բայց այնու ամենայնիւ
երեխաները կարող են հիւանդ ձեւանալ զանա-
զան պատճառներից, եթէ ծնողքը յաճախ
կդիմեն առ նա հետեւեալ տեսակ հար-
ցերով։ « Ի՞նչ է պատահել քեզ հետ
հոգիս, կարծես, գոյնդ փախել է և երեխ
դու տկար ես և անդատճառ գլուխ է
ցաւում։ Խոստովանիր» ։ Հարց և փորձ
շարունակվում է մինչեւ, որ կամայ ակամայ
երեխայն ասէ, ոչոյն մի փոքր։ Այս պու-

տասօխանը լուրջ մայրը իհարկէ հրամա-
յումէ դասերն և պարագաները մի կողմ
դնել։ Թէե տղաները հիւանդ ձեւանալ
չեն սիրում, բայց վերջիշեալ դէպքի
նման փորձերի վերայ հիմնվելով, նոքա
հարկաւոր եղած ժամանակն օրինակ, մի
անախորժ յանդիմանութիւնից ազատվե-
լու համար, կիարողանան հիւանդ ձե-
ւանալ՝ դորա համար հարկաւոր է միայն
մի փոքր դէմքը տիրացնել և մի ակնար-
կութիւն անել զիսի կամ առանձների ցա-
վի մասին և բոլոր անախորժ յանդիմա-
նութիւնները կհեռանան։ Հիւանդ ձեւա-
նալն ունի իւր ուրիշ գրաւիչ կողմերն ես,
երեխայն տեսնում է, որ այն ժամանակ
մայրը նորա բոլոր ցանկութիւնները կա-
տարում է և աւելորդ քաղցրեղին ես է
տալիս ՝ ի՞նչպէս ուրեմն երեխայն չխարվի
այս բոլոր հանգամանքերից և պայման-
ներից։ Բայց առաջին անդամ խաքելուց
յետոյ, երեխայն կիսարէ և երկրորդ ան-
դամ և ուրիշ շատ անդամներ ես։ Օրի-

նակ, երեխային գանդասփռմ է, որ ուշ սումնարանում շատ խնդիրներ են տալիս լուծելու, այնպէս որ նա չէ կարողանում ժամանակին հասցնել. բայց երեխային շատ են երեսում այդ խնդիրներն, որովհետեւ նա ժամանակին չէ պարապել, ուստի ժողովին են նոքա: Երեխային գանդասփռմ է, որ ուսումնարանում դասը հասկանալի կերպով չեն պատճեմ. բայց որոր պատճառը իւր անուշադրութիւնն և ցրված լինեն է դասի ժամանակ: Հարկաւու է այս գանդասաներից յետոյ աեղեկութիւններ ժողովին, բայց այդ ժամանակ է պահանջում, ուստի ծնողլքն խկոյն սկսում են դաստապարտել ուսումնարանն և ուսուցչներ երեխայի մօտ, այս վարմանքից երեխայն աեւնում է, որ նորան հաւատում են և այնուհետեւ նա սիրտ է առնում առաւել և առաւել խարել: Նորերում աշակերաններիցս մինը հաւատացրել էր իւր մօրը թէ ամսական վատ թուանշանը նորան սխալմանը են նշա-

նուկել: Մայլը բաւականացել էր սորտ-նով և աւելրոդ էր համարել ստուգել երեխայի ասածը: Շատ անզամ երեխաներն ուշ են առն վիրագառնում ուշ սումնարանից և տանն ասում են, թէ ուսուցիչն երկար պահեց նոյս, այս սովորական բան է և երեխաները զիտեն, որ ծնողլքը գնապու և հարցնելու չեն ուսուցչները սկսած մասին, ուստի նոքա շատ յաճախ գործ են ածում այս ձեւն և նորանով խաբում ծնողաց:

Աս ցոյց առեցի միայն մի քանի օրինակ երեխաների խարելու մասին, բայց ուշագիր եղողը կարող է լինեն ուրիշ շատ օրինակներ զիտել թէ ուսումնարանում և թէ տանն: Այսպէս ուղեմն խոսութեան դրահանութեանը էամ շատ է ես առել ծնողաց անհաջողաւթիւնը պահման է բառեաւ, որ երեխունները խոբեն նոյս, առաւել և առաւել հապալ այդ արտահամար, միան առգամ է նշան օգործոց բարի անուան:

Ասն և այնպիսի ծնողլք, որոնք միան-

գամացն հակառակ են վարփում։ մի ան-
դամ բռնելով երեխայի խարերայութիւնը,
նորա այնուշեաւ միշտ նայում են երե-
խայի ասածին անհաւասարմութեամբ,
կարծելով թէ այդ վարմանքով կողղեն
երեխային և միւնցն ժամանակ սպառիմ
են համարում այդ ձեւը Բայց այս վար-
մունքն ևս խառութիւն չէ, այլ միւնցն
անհոգութիւնն Աւելի հեշտ է խառու-
թեամբ վարվել երեխայի հետ քան միշտ
ստուգել նորա ասածն։ Այս ձեւն երբեք
ներգործութիւն չէ կարող ունենալ. մը շ-
տական անհաւասարմութիւնը գէպի ե-
րեխայի խօսքելով չէ ուղղում նորան, այլ
ընդհակառակն խառացնում է նորան, որով-
հետեւ միշտ խխտ վարվելով երեխայի հետ
ծնողքը առիթ են տալիս կարծելու երեխային,
որ նորան չեն սկսում։ Այս վարմանքից
երեխայն սկսում է սառնասիրունայել իւր
ծնողացը, սորանից ծագում է լուս ընդդիմա-
զրութեան զգացմունքն և երեխայի ընդու-
նումէ իւր համար հետեւեալ սկզբունքը. «Ե-

թէ ինձ խարեբայ է.ք համարում, տեսէք ուրե-
մըն ինչպէս ես խարելու եմձեզ այսուհետեւ
Ծնողաց գանգառաներն, որ երեխաները
չեն պատուում նոցա, մենք շատ ենք լսել
և սորա պատճառն անշուշտ այն է, որ
ծնողք չեն կարծացել իւրեանց երեխա-
ների հետ վարվել այնպէս, ինչպէս հարկաւոր
էր Արեխայն համարում է իւրեան հա-
ւասար իւր ծնողաց հետ և որովհետեւ
չկայ սիրոյ և բանականութեան վերաց հիմ-
նած բնական հեղինակութիւն, որ ստի-
պէր երեխային պատուելու իւր ծնողաց,
մնումէ միայն ծնողաց կողմից դիմելու կո-
պիտ բնակալութեան, որի գէմ թոյն
(երեխայն) անձայտացած խորամանկութիւն
և խարեբայութիւն դորձ կածէ։

«Որդիս սուտ չէ խօսում,» ասաց ինձ
աշակերտներիս մինի հայրն, երբ ևս չա-
ւասացի նորա որդուց իւր ընկերների վե-
րաց ասածին։ Առ հասարակ «սուտ խօսելը»
ծնողքը ուրացութիւնն են հասկանում
այսինքն՝ յանցանքը ծածկելու ցանկու-

թիւն։ Արդարուե, ես ևս դիտէի, որ վերացիւնալ աշակերտան ուրանալ չգիտէի, բայց գիտէի, որ նու սովորութիւնն ունի չափազանցայնելու, մանաւանդ երբ անբաւականութիւնն էր պատահում նորա և ընկերների մէջ։ Շատ պարմանալի է, որ ծնողքը ստախօսութիւնը ու բացութիւնից չեն զանազանում։ Ճշմարիկ է, լաւ է, որ երեխայն պարզապիտ լինի, բայց պէտք է ի մասի ունենալ այն որ ու բացութիւնը խարբեայութեան ձևերից մինն է միայն Վերջապէս, երեխայի պարզաբանութիւնն իւր վաս պատճառներն ես կարող է ունենալ. նորա պարզասրւութիւնը կարող է համեմել այն ցածր բարոյական ասակճանին, որ նա իւր ամեն մի արածը—լութէ վաս—առանց ամօթխածութեան ասէ։

Ուրացութիւնն առ հասարակ սասախօսութեան ամենաներելի ձևերիցն է, ուրովհետեւ երեխայն ուրանում է վախից և այդ զբացմանքը հետեւնք է անշափի խստութեան։ Երեխայն դիտենալով, որ

իւր արածի համար, օրինակ մի բան կոտրելու համար, անշուշտ պէտք է պատճի—հարց և փորձի ժամանակ կսկսէ ուրանալ։ Առաջին անդամնայ կդժուարանայ, իւր գերբ լու կատարել՝ նորա երեսի կարմրութիւնն ամօթից, շփոթվելն և այնարտապայտում են նորա մէջ մի նելքին պատերազմ։ Ապադայում երեխայն կհստարելագործի այս սովորութեան մէջ և երեսից մի նշան անդամ անկարել կլինի նշմարել։ Վախենալով պատճից, եթէ մինչև անդամ երեխայն յցս ևս չունենայ ուրանութեան յաջողութիւն—նա այնուամենայնիւ կուրանայ ձեռնառ համարելով ուրացութիւնը խստովանելուց և փռքը առ փոքր նա այնպէս կընտելանայ իւր սովորութեանն, որ ոչ մի միջոցավ հնար չի լինի նորանից խստովանութիւն սպասել։ Որ ասակճան արմատանում է այդ ախտը մարդուս մէջ կարելի է իմանալ ակնելով այնպիսի թշուատականներ, ուրնիք չնայելով հարցի առենապարզ և

ակներեւ լինելուն չեն խոստովանում իւրեանց
յանցանքը քաջ գիտենալով, որ ուրա-
ցութիւնից փրկութիւն չկայ նոյա համար:

Երեխաները վախենում են առ հասա-
րակ քննութիւնից, հարց և փորձից. ուս-
տի նոքա կաշխատեն չեռացնել իւրեան-
ցից կասկածն անզամ և ուրիշների վե-
րաց բարդել յանցանքն: Օրինակ, երեխայն
մի բան կուղեց, նա այնպէս է գարառում
կոտրած բանի կատըներն, որ արտաքուստ
չերեայ նորա կոտրած լինիլը, մինչև որ
մի այլը ձեռ տայ նորան: Եթէ նա մի
բան կորցրեց, աշխատում է կորցրածի տե-
ղը ծածուկ կերպով նորը դնել: Վա-
խն այնքան մեծ է, որ երեխայն խարե-
րայութեան չետ գործ է ածում և յա-
փրշտակութիւն, ցանկանալով ինչ և իցէ
միջոցով հասր գտնել ծածկելու իւր
յանցանքն և ազատվելու պատմից:

Առն և այնպիսի երեխաներ, որոնք բա-
րի են և լաւ գաստիալսկված, նոքա ևս
երեմն խարռում են իւրեանց ծնողաց մի

միայն նոյա սիրելուց, այս բառի բուն
նշանակութեամբ: Սորա պատճառն այն է,
որ այդ աեսակ՝ երեխաների ծնողքն երե-
խայի արած ամեն մի չնչին յանցանքից
մեծ յուսահատութեան և տանջանքի
մեջ են ընկնում, որով երեխային վա-
խեցնում և տրամեցնում են. իսեղջ երե-
խայն սուտ է ասում այս հանգամանքում
իւր մօրը վշտից և յուսահատութիւնից
ազատելու համար. ուրեմն երեխայն ստա-
խօսութիւնը համարում է հանգարդե-
ցուցիչ միջոց իւր մօր համար:

Պատահում են և այնպիսի երեխաներ,
որոնք սուտ են խօսում ծաղըալը առար-
կայ չբառնալու համար նկնասիլութեան
անկանոն վարդացումն երեխային այն միտ-
քի է բերում, թէ իւր յանցանքի կամ
սիսալանքի խօստովանութիւնը մի գժբաղ-
դութիւն է: Այդ աեսակ երեխաները շատ
լաւ զգում են իւրեանց սիսալանքները,
բայց ամեն միջոց գործ են գնում ծած-
կելու ուրիշներից. այս յատկութիւնը կա-

րել է զիակել և փոքր երեխաների մէջ։
Երեխայի ուրացութեան պատճառներից մեծն ևս նորա վախն է իւր ծնողաց հեղինակութիւնից, մանաւանդ երբ սիրոց կաղ չկայ երեխայի և ծնողաց մէջ։ Բացի այս շատ ծնողք իւրեանց քննութիւնը սկսում են մի քանի դատաստանական քննիչների նման առաջուց նախարարական ված լինելով երեխայի յանցաւորութեան մասին։ Երեխայն սկզբից շիմթվում է, աեմնելով քննութեան ձեւերը, բուռն միջոցները և զիմնում է ստախօսութեան և ուրացութեան։ Քննութիւնն աւելորդ է ի հարկէ այնպիսի հանդամանեցներում երբ ակնյայնն երեսում է երեխայի յանցաւորութիւնն, որովհետեւ այսպիսով կրտքենք երեխային դէպի ստախօսութիւն։ Իսկ հրատարքից մեծերն անդամ շատ յաճախ զբաւվում են։

Այսպէս ուրեմն, մենք աեանք, որ վախը պատժից, վախն ամ և իցէ վշացնելուց, վախը ծաղալի դառնալուց։ մի

խօսքով վախն իւր ամեն մի ձեռւմ կարող է խարեւայութեան և ուրացութեան մեծ պատճառ դառնալ։

ՆԱԽԱԿԱՆ
ՃԵ

«Օրինակը կանակից առաւել է ներգործում», առում է հին առածը։ Սատեսկութիւնը սարածվում է և արմատանում միան այն պատճառով, որ երեխաները միւնցնը աեմնում են և ասվորում իւրեանց դաստիարակներից՝ ծնողքից, ուստիցներից և առ հասարակի հասարակութիւնից։ Դա գործ է գործ կապութեամբ, որ ծնողքն եւ միւնքներն իւրեանց օրինակով սովորեցնեին երեխաներին ստախօսութիւն։ Դժբաղգար ստածներս ծշմարիս են։ Դիտեցիք այժմեան հասարակութիւնն և զորք կաւա-

և ստախօսութիւնը։ Մենք ևս՝ ամեն աեւ-
ասկ գաստիպրակներս ճշմարտախօսութեան
վերաբերութեամբ խիստ չենք, ամեն ան-
դամ չենք կշռագաստում մեր խօսքերը։
Ահազին, սարսափելի, անհաւասուլի,
զարմանալի, զարհուրելի» և այլ այս տե-
սակ չափազանցութիւններ զործ ենք ա-
ծում այնքան յաճախ, որ նաքա մեզ
համար կորցնում են իւրանց խսկական
նշանակութիւններ։ Օրինակ, մայրն ասում
է երեխային. «Քանի չ աղար անդամ
քեզ ասել եմ, որ չանես այդ» . . .
կամ՝ «Դու երբ էք մարդ չես լինի» . . .
կամ՝ «Եմի շտ քո խաղալիքն իւր աեւ-
դումը չե» և այլն։ Իհարկէ, երեխայն
զգում է, որ մայրը չափազանցութիւն
է անում և թէսէտ հասկանում է, որ
այդ արած է բարի նպատակով, բայց նա
չէ կարող չունել և այն, որ մայրը ճշշ-
մարիտ չէ ասում։ Այս տեսակ օրինակ-
ներից նա կազմում է իւր համար մի
նախադիմ և սկսում է տւտ խօսել նոյն-

պէս բարի նողատակով։ Փոքր առ փոքր
երեխայի մոքի և նորա արտապերած բա-
ռերի մէջ երկգոտութիւն է պատա-
հում, բառերը նորա համար մի պայմա-
նաւոր նշանակութիւն են ստանում և նո-
րու ճշմարտախօսութեան զգացմանըքը աս-
կառ առ ստկառ թուլանում է։ Արանից
մի քանի ժամանակ առաջ աշակերտնե-
րից մինը գրելէր իւր ծնողացը. «Դ ը եթ է
մեր ուսումնարանի բոլոր աշակերտները
հիւանդ են կարմիռուկով», մինչդեռ աշա-
կերտների մի քառորդ մասն անդամ հի-
ւանդ չէր։ Գատապարտելու չէ աշակեր-
տնն, նա իւր չափազանցութեամբ նմանել
էր միսյն հասարակութեան մէջ ընդու-
նած ձեին։

«Օնողքը շատ անդամ պատմելով իւ-
րանց երեխաների մասին փոքրի շատէ
չափազանցայնում են նոյս լաւ կողմերնէ
Արեխանելը, մանաւանդ փոքրելն, այս նկա-
տելով կաշխատեն իւրեանց առաւել լաւ-
ցոյց տառ, քան իսկութեամբ են, ուստի

գործանալու չէ, և թէ այդ տեսակ երեսիաները դառնոն նախ պարզավիտ և տպա անսանելի մնապարձներ։ Մի անդամ մի մայր ցոյց տաղավ ինձ նկար, որ երբեւ որդին էր նկարել, ասաց. «վաս չէ նկարած, այնպէս չէ և զրեթէ բոլորն ինքն է նկարել»։ Երեխայն ըստ դիմանալով, որ նկարն ըստ մեծի մարմնի ուսուցին էր նկարել, այս խօսքերից քաշվեց և աչքերը հեռացրեց ինձանից։ Ծի այլ օրինակ. «նայեցէք», ինչպէս արդէն ըստ զրում է մեր վահաներ», ասաց մի անդամ, մի հայր, ցոյց տաղավ ինձ մի զրած թուղթ։ «Միթէ այս նարա գրածն է», հարցրեցի ես. «Այսո պատասխանեց հայրն և դառնալով գեղի երեխայն յարակցեց. «Դու առանց ուրիշ օդեւութեան ես զրել, այնպէս չէ»։ Աերջը ես խնացայ, որ երեխայն ոչ մի տառ ինքը չէր զրել։ Գտաեցէք այժմ, ինչ հեռանմք կարելի է ապասիլ այս վարմանքից Շմալասխօսութեան վերաբերութեամբ։

Հարկաւոր չէ չափաղանցացնել երեսիայի արժանաւորութիւնները. բայց չպետք է և չափաղանցացնել նարա պակասութիւններն։ Օրինակ, շատ անդամ ծնողքը մի բանից վրդախած լինելով երեխայի ամենունչին յանցանքի համար սաստիկքարեանում են, զործածում խիստ բառեր, ինպէս են՝ «գժաղպ», անպիսան, հրեշ, աւաղակը և այլն, երբեմն բայցնայս պատմում են ևս. Այս տեսակ անարդարութիւնը է, և թէ վրդը նորա հետ քաղցր ես վարպն, երեխայն երբէք չի մնանալ, որ նորա ծնողքն անարդար էին։ Մի օրինակ ևս մէկ փոքրիկ աղջեկ կոսրեց մի բաժակ։ Մայրը բարկութիւնից նորան ան շնորհ հք և ան զդոյշ անուանելուց յետոյ տեղայրեց. «զնեա եզրօրիցդ օրինակ աւնեկը նա միշտ զգոյշ է և շնորհքով»։ Անցաւ մի քանի ժամանակ, այդ աղջկայ եղբայրը մի այլ բան կոտրեց։ Այս հանդամանքը բառմ մայրը յանդիմանեց նորան և յա-

լրակցեց. պոնեամ քրոջիցդ օրինակ առնեիր,
նա այդ տեսակ անզգշութիւններ չէ ա-
նում»։ Այս տեսակ անցածող բաղդա-
տութիւններն երեխանների վերաց առաւել
մեծ տրագաւորութիւնն են թողնում։
Անշուշտ այս հանգամանքներումը գար-
ձեալ երեխանները կհասկանան ծնողաց
մխալն և նոցա անարդարութիւնն և սո-
րա հետեանքն այն է, որ երեխանները
սկսում են չհաւասար ծնողաց հեղինա-
կութեանը։

Պատահում են և այնպիսի ծնողք,
որոնք սպառնում են հետեւեալ խօսքե-
րով. «ըստիր, սպաթէ ոչ լուսամալից դուքս
կձգեմ»։ Առ հասպանի երեխաններն
այս սպառնալքից չեն լուսմ, բայց իհար-
կէ նոցա լուսամալից դուքս ձգեն անկաւ-
րելի լինելով, սպառնալքը չէ իրագործ-
վում։ Ի՞նչ հարկաւոր է անհնար սպառ-
նալք գործ ածել։ Երեխայի հայեացքով
այդ սպառնալքիւն է և գմբաղգարար
շատ յաճախ է կրինվում թէ տան մէջ

և թէ ուստ մնարանում։ Առ հասպանի
սպառնալքը կներգործէ երեխայի վերաց
մխալն մինչեւ այն ժամանակ, երբ նա տես-
նի, որ ոչ մի վեաս չկայ նորանից, երբ հաս-
կանայ, որ մխալն վախեցնելու համար են
սպառնում և ոչ կատարելու։

Հատ անգամ դաստիարակները խօս-
տանում են պարզե տալ երեխային և
նոյնքան են կատարում իւրեանց խօստումն,
որքան և սպառնալքն. այսինքն՝ այս հան-
գամանքում ես, ինչպէս և երեխայի հետ
վարվելու զրեթէ ամեն մի դէսքում, սո-
վորեցնում են երեխային ստախօսու-
թիւն։ Դէպի մեծերը ծանրաբարոյ եւ
Ճշմարտասէր մարդիկ անզամ փոքրերի
հետ հակառակ են վարփում, կարծելով
թէ երեխային մի այլ ձեռլ ես կարելի
կլինի վարձատրել։ Օրինակ մայրն ասումէ
երեխաններին, «եթէ գործ այսօր խելօք
կլինիք, ես ձեզ երեկոյեան մի լու առակ
կպատմեմ»։ Նրեխանները ամբողջ օրը
հանգարա մնալուց յետոյ, երեկոյեան գա-

լիս են մօր մօտ և խնդրում են կատարել լիսստացածը: Բայց մայրը շատ հոգնած է և յետաձգում է առարկը վաղութեն, թէ և չդիմէ կարողանայ կատարել իւր խօս տումը վաղը թէ ոչ: Չեմ ասում, որ խօստացած բաղեն մայրը մտադիր չէ կատարելու իւր խօսութեն, այլ ցանկանում է միայն համեմատացնել երեխաներին կամ մի բան կատարել տալ նոցա — թէ և այս ևս պատահում է — ոչ, նա խօստանում է կատարելու դիտաւորութեամբ: Բայց կարելի կը նի արդիքք: Վ՞եւ փոյժ: Կարելի է ասել, երեխաները պահանջակ չեն: Այսուամենայնիւ, երեխայն փոքր առ փոքր կրայ հետեւալ եղանակացութեանը. « մայրիկս թէսէտ չկատարեց իւր խօս տումը, բայց այդ փոյժ չէ, նա դորս փոխարէն այս ինչ բանը արեց»: Այս եղանակացութիւնը նա կիսէ զորք դնել և իւր աեւխական վարմունքին: Միթէ կարելի է դարձնանալ, եթէ երեխաներն որոշեալ ժամանակին չաւարտեն իւրեանց զորքն

և եթէ ոչ մի հնարօւլ չեն համոզիլ իւր իսանց պարտականութիւնները ճշուաթեամբ կատարելու անհրաժեշտ լինին: Երեխայն տեսնում է հակառակն և շատ կարելի է, որ առէ, ամայրիկ կամ հայրիկ գու ինքու ասում են բան, իսկ կատարում են միւսը: Կարծեմ, ասածներս պարզ ցոյց են տալիս, որ միշտ զգուշանալու է անհնար խօստաներ տալուց: Այսպիսի, ըստ երեսյթին, չնչն հանգամնենքները փոքր առ փոքր երեխայի բնաւորութեանն և հասկացողութեանը մի որոշեալ ձեւ են տալիս: Այս արարողութեան մեջ մեծ զեր է խաղամ ծնողաց և զաստիարակների յարաբերութիւնը գէտի երեխաները, նաշյերով ինչ տեսակ է այդ յարաբերութիւնն, երեխայն ճշմարտախօս կդառնայ կամ սաստիօս:

ՆԱՄԱԿԻ

Ճ.Զ.

« Օ՞չողքն ուրախանալու են անշուշտ, երբ աեսնեն իւրեանց երեխաների մաս-

որ զարգացման առաջնի քայլերը, բայց
ուրախանալաւ են արդեօք նոքա, երբ եր-
բեխաների միաքը վաս ուղղութիւն է
ստանում. օրինակ երբ երեխաներն իւ-
րեանց զարգացումն ի չար են գործածում
խորամանկ ստախօսութեամբ, ուրիշնի ծաղ-
րելով և կամ մի այնպիսի արարմունք
բանեցնելով, որ միանգամայն վեստակար
է; Ի հարկէ ոչ. բայց ամեն մի քայլու-
փոխում մենք տեսնում ենք, որ ծնողքն
երեխայի այդ տեսակ արարմունքներով,
մանսաւանդ փոքր երեխայի, զուարձանում
են, եթէ նորա արարմունքն իւր ծնողաց
չէ վերաբերում, այլ օտարներին, ապա
թէ ոչ ծնողքը շատ նեղանում են և
մինչև անգամ պատժում երեխային: Բայց
ի՞նչ մոքեր և զգացմունքներ պէտք է
ծագին երեխայի մէջ երբ նա տեսնի, որ
այսօր պատժում են նորան այն բանի
համար, որ երեկ ծիծաղ էր պատճա-
ռում և որի համար նորան գովեցին:

Ո՞ի անգամ իմ ծանօթներից մինն

ընկերութեան մէջ պատմում էր իւր
որարգական կեանքից մի գէպք: Նորա
որդին, որ ներկայ էր այս պատմութեանը
յանկարծ ընդմիջեց հօրը, ասելով.
«Հայրի'կ, այդ առւտ է, դու հնարում ես
բոլոր:» Հայրը ուշադրութիւն չդարցրեց
իւր որդւոց խօսքերի վերաց և շարունակեց
իւր խօսքը, (երեկ նա սովոր էր երեխայի
այդ տեսակ վարմունքին.) մէնք, ի հարկէ
ծիծաղեցանք: Այս գեռ ոչինչ. երեխա-
ները միշտ տեսնում են և լսում սորա-
նից անհամեմատ վաս ստախօսութիւններ:
Օրինակ եկամ.մի հիւր. նորան ընդունում են
շատ քաղցր և ուրախութեամբ. բայց հիւրի
տանից գուլա գալուն պէս, խկոյն սկսվում
են քննագատել ամեն մի շարժուած-
քըն և զանազան կծու. նկատողութիւններ
են անում նորա մասին: Պատահում է և
այնպէս, որ ծնողքն երեխաների մօտ ծա-
ռային հրամայում են եկալ հիւրին ա-
սել, թէ տանը ըն և շատ անգամ իս-
կոյն իսկ սրաւմ են խօսել զանազան

ձանձրացուցէ հիւրերի մասին, որոնք անտառնելի են և այն: Արեխաներն առաջ տեսած էին այդ մարդոց և երեք չեն նկատել, որ նոքա անողիատն և անտառնելի են: Վիճում է և այնպէս, որ ըստ երեսյթին պարզաբար եւ բարեմտութամկացումիւնից յետոյ սկսում են դռատել այսպէս: «Ի՞նչու նա այս ինչ բանը պատառմէց, ի՞նչ կամ առել, կամ գիտեմ», նա թէեւ բարի բան է արել, բայց առանց նպաստի չի լինի: և այն: Այս բոլոն երեխայն փոքր ի շոտէ տեսնում է և լսում և շուտով նա կրայ այն անողոշեքակացութեանն, որ օխոսքը տուած է մարդուս իւր մաքերը ծածկելու համար: Գիտուած չի երեխայն այս տեսակ սառիսութիւնն և կեղծաւորութիւնը տեսնելով սկսում է այդ արքում աղջում է: նա չէ կարողանում բայտորել ծնողայ յարարերութիւնը գէպի մի քանի անմիզ: Աս չեմ խօսում այն գէպերի մասին, ուր կեղծաւորութիւնն և խարերայութիւնն:

արտայայտվում են ամենախայտառոկ կերպով, ես աչքիս առաջն ունիմ մեր պատճառ հասարակութիւնը և մեր առօրեայ և սովորական հասարակական յարաբերութիւնները: Մեր յաղաքերութիւնների մէջ մենք միշտ ի մասի ունիմք այն ձևերն, որնք ընդունված են հասարակութեան մէջ, մեր կարծիքով անողյել է» մարդու երեխն ամեն բան ասելու, բայց նուրա բացակայութեան ժամանակ մենք մեզ թոյլ ենք տալիս այդ: Արեխայն դժբաղդաբար (գուցէ և բարեբաղդաբար) չունի այդ պլացմանքը, նա ամեն բանում տեսնում է միայն սուան, որի վերայ հիմնված է այն մեր հասարակութիւնը: Միթէ զարմանանք, եթէ երեխայն յանձնի խր մօրն ասելու լինի, ամսցիկ, դու այս ինչ ափինոջ այսօր շատ գոլիցիիր, նորան հետ շատ քաղցր խօսեցար, մինչեւ անօգամ զնալու ժամանակը համբուրեցիր, մինչդեռ մի քանի օր առաջ գու պախարակում էիր նորան, ասացիր որ . . . և

այն։ Պատահաւմէ և այսպէս՝ երեխայն տեսնում է, որ հայրն իւր դլաւողին կամ մի «մեծ» մարդու ընդունելու ժամանակ յայսնումէ է իւր յարգանքն և պատիւն. իսկ վերջը խօսակցութեան ժամանակ ասում է այն պարոնի մասին, թէ նա յիմար է, նա այդ աստիճանին հասել է ոչ արժանի լինելով, այլ բարեկամների շնորհիւ, թէ ոչինչ չէ շնուռմ և այն։ Այս աեսակ դէսպեր ընտանեաց մէջ շատ յաճախ են պատահաւմ և թէպէս երեխայն լռում է, բայց անշուշտ նա որելիցէ եզրակացութեան պէտքէ դայ այդ յարաբերութիւնների մասին։ Հարցնում եմ. լու եզրակացութիւն կը նի արդիօք, թէ վատ։ Նրեի նա կեզրակացնէ, որ սուար—սովորական երեցին է և որեմն ինքն ևս երեմն սուա խօսելով ուրիշներից վատ չէ վարդում։ Կարելի է հաստատ կերպով պնդել, որ երեխանեւրին սուտ խօսել են ուսուցանում, որով հետեւ այդ ախար շատ խոր արմաննել

է թողել մեր կեսնկի մէջ։ — «Դու չպէտք է ասես քո բայր մատծածդ», խրառում է մայրը երեխային, թողնելով նորան ուրիշ մօտ գնալու. «Քո վերայ կծիծաղեն, քեզ յիմարի տեղ կդնեն, զու պէտք է դովիս տմեն բան, թէ և տմեն տեսածդ չշաւանես—ապաթէ ոչ անքաղաքավարի կանուանեն քեզ։ Խակ եթէ հարցնեն, ինչու վաղուց է ևս նոցա մօտ չեմ գնում, ասա՞ տկար է. իմ մասին այլ ոչինչ չխօսես»։ — Ի՞նչ անէ խեղճ մայրը նա ստիպված է այդպէս վարվելու։ Նա շատ լաւ գիտէ, որ երեխայի ճշմարտախօսութիւնից երբեմն վաս հետևանքներ են առաջ գալիս թէ ծնողաց և թէ երեխաների համար։ Նա գիտէ, որ բարի և ճըշմարտասէր երեխային յիմար և անքաղաքավարի են անուանում. ասա ուրեմն առաւել ձեռնդու է» նմանել ուրիշներին պարզամիտ ճշմարտախօսութիւնից հեռու պահերով իւրեան։

Վյոտւամնայնիւ չէ կարելի ասել, որ

Ֆնողքը ցանկանում էն իւրեանց երեխատների վաստոթիւնը. երբէք ոչ: Նոքա մինչև անդամ վախճառմ են մի վատ բան լսել երեխայի վերայ և շատ անդամ գիտակցարար ախրում են իւրեանց երեխայի վատ արտաբանն նքի վերաբերութեամբ: Աս ներկայ էի հետեւեալ տեսարաննին. երեխային մի յանցանք գործեց և առաջն հարցին, իսկ պատրաստ էր խոստվանել իւր արածն, որովհետեւ գործի հանդամնքներից երեւում էր, որ բացի նորանից ոչ ոք արած չէր լինի: Մայրն ևս շատ լսւ հասկանաւմ էր այս, բայց նա սարասիւմ էր ոչ այնքան նոյն իսկ յանցանքից, որքան երեխայի խոստվանքից: «Ոչ, Վարդան, դու ձմնարիսն ասան, ասում էր մայրը, «Դու չէիր անողն, այնովէս չ»: Դու միայն ձմնարիսն ասա», շարունակում էր մայրը վարդառ, տեսնելով, որ երեխային պատրաստ է խոստվանելու, ոգու պարզ ասա, մի ծածկեր ոչնչ, դու, չիլ, այնովէս չ» Ներկային տեսնելով, ո՛

Հնար չկայ մի այլ պատասխան տալու, ասում է ցածր ձայնով. «Ես չէի»—կան և ուրիշ շատ ձեւեր երեխային ստախօսութիւն սովորեցնելու: Օրինակ շատ անդամ երեխային ձանձրացնում են հետեւեալ հարցով. սիրում են՝ գառնուկ, հայրիկիդ, կամ մայրիկիդ, և չեն հանդարդվում մինչև երեխայն տաէ, այսու իսկ եթէ երեխայն ինքն է գալիս և ըսկում է յայտնել իւր սէրն, իսկոյն նորան քաղցրեղն են տալիս:

Բայց պէտք է գիտենալ, որ սիրել բառը երեխայի համար մի լոկ խօսք է միայն, նա ոչինչ չէ ներկայացնում իւրեան այդ խօսքի հետ և կրկնում է միանդամայն մեքենայաբար. միայն նկատելով որ մի քանի պատասխաններից և դգուանքներից նա շահվում է, երեխայն շատ յաճախ կգործածէ սիրում եմ» բայն—այսինքն կեղծաւորութիւն կանէ: Միւնցն է լինում և այն հանդամնքներում, երբ ստիպում են երեխային ճներողութիւն

խնդրել» կամ խոստանալ, որ միւս անդամ չէ անել այս ինչ այն ինչ բանն երեխայն բացի կեղծաւորութիւնից ոչ ինչ չէ ուսանում: Ի՞նչպէս կարող է երեխայն խոստանալ միւս անդամ չանել մի բան: Նա ինքն ևս շատ լաւ հասկանում է, որ մի քանի հանդամներում իւր խոստումը կարող է քանիզել: Մինչեւ անդամ եթէ երեխայն ինքն առէ, թէ այլ ևս անելու չէ այդ, պէտք է նորան սրատախանել, որ գժուար է խկոյն թողնել մի վատ սովորութիւն, բայց հարկաւոր է աշխատել այնպէս վարպել, իր թէ խոստացել է այլ ևս չանելու այդ բանն: Առ հասարակ երեխայն խոստանում է միայն պատժից ազատվելու համար: Հարկաւոր է ստիպել երեխային ներորութիւն խնդրել մի հանդամներում միայն, երբ նա վիրաւորել է մինին. խկ եթէ նա ծուլութեամբ, անհոգութեամբ և այն վնասել է իւրեան միայն, այն ժամանակ ներորութիւն պահպան կազմում:

անդի է և աւելըրդ: Պէտք է այն ևս զիւտենալ, որ երեխայն միայն այն ժամանակ կազմաշխարէ մինին արած անարդարութիւնն, երբ կհասկանայ արդարութեան և բարօրութեան խմանն և մինչեւ որ գասախարակիներն իւրեանց ազգեցութեամբ և օրինակով չեն բնաւորել երեխայի մաքի մեջ այդ բառելի գաղափարները, ներորութիւն ինդրելն առեն մի հանդամներում միայն կեղծաւորութիւն պէտք է համարել:

Դժբաղդարար առենայաջող հանդամներում ևս, երբ գասախարակիներն և ծնողքն երեխանելի հետ ձշմարիս և աղնիւ յարաբերութիւններ ունին, այնուամենայնիւ երեխայն կարող է ենթարկվել վատ ազգեցութեան: Օրինակ, ծառաների ազգեցութեանը. ծառաները միշտ ունենում են իւրեանց գաղանիքն և շատ անդամ աշխատում են երեխաներին խառնել իւրեանց կելոսոս գործերում, սովորեցնելով նոցա խարեւայութիւն և գաղտամառութիւն: Վատ կըթված ընկեր-

Ներն ևս զանազան նպատակներով սովորեցնում են երեխային սուտ խօսել ծաղրելով նորա պարզամտութիւնն և պարզաբառութիւնը Յայտնի է, որ ծաղրելը շատ խիստ գործիք է և այդ միջոցով կարելի է ճշմարտախօսութիւնից շեղել նորան:

Այսպէս ուրեմն գուք, Նազելի Տիկին, աեմնում էք, որ երեխայն ամեն կողմից շրջապատած է փորձութիւններով. ամեն հանգամանքում ստախօսութեամբ ելք կարող է դժոնել անսախորժութիւններից աղաւավելու. այն ինչ ճշմարտախօսութեամբ շատ անդամ անսախորժութիւններ է լուս, անցարժարութիւններ է աեմնում. այնպէս որ ճշմարտահր երեխայն ևս վերջը գառը փորձից յետոյ գառնումէ ստախօս Սուտըն և ստախօսութիւնն այնքան արմատացել են մեր հասարակական կեանքի մէջ, որ չկայ միջոց հեռու մնալու. նոցա աղդեցորթիւնից ծնողաց և դաստիարակների դրութիւնն անել է երեւում, բայց բարեբաղդաբար երեխայի առաջն ապաւո-

րութիւններն առաւել զօրեղեն քան վերջներն և նոցա թողած հետքերից կաղմբ վումէ մարդուս ապագայ բնաւորութիւնը:

ՆԱՄԱԿ ԺԵ

Մարմնի տկարութիւնները բժշկեն երբեմ դժուար է և երբեմն անհնար, որովհետեւ կան անբուժելի ցաւեր. իսկ նոցա առաջն առնելը շատ դիւրին: Նոյնը կասեմ և հոգւց հիւանդութեան՝ ստախօսութեան մասին: Ստախօսութեան առաջն առնեն առաւել դիւրին է, քան վերջը նորան անհետացնելը: Մենք աեսանք, որ ստախօսութեան դլսաւոր աղբիւրը միշտ կրկնուող օրինակներն են. օւստի ճշմարտախօսութիւն. արմատացնել կկարողանանք միայն օրինակներով: Ուրեմն մեր պարտականութիւնն է ճշմարտախօս լինիլ երեխայի հետ և պահպան նել նորա թարմ հոգեկան ընդունակութիւնները սխալ և սուտ հասկացողու-

թիւններից և պատկերներից: Մեզ դուցէ պատասխանեն, թէ այդպիտով մենք կըքը կենք երեխայութիւնն իւր գրաւիչ կողմէրից և կմոցնենք չոր և ցամաք յարաբերութիւններ ծնողաց և երեխայի մէջ: Երբէք ոչ մենք պահանջում ենք, որ երեխայի հասկացողութիւններն և զգացմանքներն ի չար չգործ դրվին. մենք օրինակ, պնդում ենք, որ տալ երեխային կաւիճ ասելով, թէ այդ շաքար է և զուարձանալ նորա սխալվելովն—աններելի հանաք է. այլ առաւել խելացի կինից տալ նորան մի կտոր շաքար և մի կտոր կաւիճ և բացատրել նոցա յատկութիւնները: Մենք պնդում ենք նոյն պէս, որ լայրը ձեւանալը մօր կողմից և յանկարծ ծիծաղելն, երբ երեխայն կամենում է նորան միսիժարել—յիմար և անխայել խաղ է: Նոր խօսել սկսող երեխայն շատ ծիծաղ և զուարձութիւնն է պատճառում իւր քաղցր սխալներ ծիծաղելն ոչ մի վատ հետեւանք չունի:

բայց հարկաւոր չէ կրկնել երեխայի սխալներն, այլ պէտք է ուղղել նոցա: Այդ վարժունքով երեխայն խւր պարզամտութիւնը չէ կորցնում, և վերջապէս պարզամիտ է երեխայի մէջ այն, ինչ որ նա իւրեանից է արտայայտում: Խսկ ուրիշներից ստացածը պարզամտութիւն չէ, այլ ստախօսութիւն: Երբ երեխայն սկսում է արդէն խօսել, ճնազքը պէտք է աշխատան որքան կարելի է խխատ լինիլ գէպի խրեանք ճշմարտախօսութեան վերաբերութեամբ և պէտք է պահպանեն իւրիանց հեղինակութիւնն երեխայի առաջ: Ծնողինասկութիւնն երեխայի առաջ նոնդքը պէտք է պահանջին, որ երեխայն կատարէ նոցա ամեն մի հրամանը ճշատպէս: ուստիյառաջագոյննոքա պէտք է խորհեն և կշռադատեն խրեանց հրամաններն, ապա թէ ոչ ուղիղն ասելով, իրաւունք չունին պահանջելու, երբ երեխայն չկատարէ նորան հրամայածն: Այս կէտի վերաբերութեամբ շատ սխալներ են պատահում թէ տանիք և թէ ուսումնարանում: Տանիք

պահանջում են երեխայից այնպիսի բառներ, որոնք նորա կարողութիւննից վեր են. ուստի մարանում նոյնպիսի խնդիրներ են տալիս լուծելու, դուք, Նազելի Տիկին, առաջին աեսաք իմ՝ առաջին նամակներից, թէ ինչ միջոցներ են գործ աճում՝ երեխաներն այդ աեսակ հանդամնելներում. ուստի զգուշացէք երեխայի կարողութիւնից վեր պահանջներ անելուց, որ շխարվեք:

Այս չափազանցութիւններն, որոնք երեխայն գործ է աճում իւր պատմութեաննեց, ինքն ըստ ինքեան մի վաս նշանակութիւն չունին. մինչեւ անդամ կարելի է ուրախանալ երեխայի խելքի և երեակացյութեան վարդացման համար, բայց մի մոռանաք, որ երեխաները, մանաւանդադադաները, սնապարձութեամբ և չափազանցութիւններ գործածելով դառնում են սասակի սասակօս; Ուստի երբ դուք նկատէք, որ ձեր որդին մի անկարելի բան աւելացրեց իւր պատմութեան մէջ, կանգնեցրէք նորան, և հաշկացրէք, որ նա ուղ-

ղէ իւր սխալն և այդպիսով վերադառնաց գեպի Ճշմարիան: Օրինակ՝ «մասածիր, հոգիա, ի՞նչ ասացիր, մի՞թէ մեր տունն եւ կեղեցոց բարձր է» կամ «մի՞թէ դու հարիւր անդամ նաւակով դքօսնել եա, ինչոչես որարծեցոր Գարբիէլի տուոջ»: Եթէ դուք միշտ ընդունէք այս ձեռն, երեխայն շատ շուտ կսկսէ Ճշմարտախառ լինիլ և ամեն մի տու կատէ, եթէ նա մնացած ամեն կողմերով լու, և դասախրաբակված:

Այս, եթէ նա մնացած ամեն կողմերով լու է դասախրաբակված: Այս ամենաոգլիսաւորն է, այս մի քանի խօսքերով ասած է այն, ինչ որ անհրաժեշտ է ստախօսութիւննից հեռու պահելու համար երեխային — այն է լու բարոյական կրթութիւն առ հասարակ: Աս դասախրաբակված երեխայն շատ քիչ առ եթէ կունենայ առաջ խօսելու և շատ քիչ գիպուածքներ կարող են պատահել նորան, որոնցից ազատվելու համար նա սուտ խօսի: Երեխաները զուարձութեան համար

չեն սուտ խօսում, այլ նոքա սուտ են խօսում խըրեանց յանցանքն և բարոյական պակասութիւնները ծածկելու համար կամ մի որոշեալ նպաստակ աչքի առաջ ունենալով, մի խօսքով ստախօսութիւնը միւս ախտերի արքան եւ ակն է: Ուստի վաս դաստիարակված երեխային միշտ առիթ կունենայ սուտ խօսելու, որովհետեւ նորա համար այդ միակ ելքն է գժուառութիւնից աղասիվելու համար: Հեռացրեք բարոյական պակասութիւններն և ախտաւոր ձգտումները, կհեռանայ և ստախօսութիւնը:

Ստախօսութեան ներքին շարժառիթները թէև շատ բազմազան են, բայց զրեթէ բոլորն առանց բացառութեան մի աղբիւրից են ծագում. այն է ինքն ասիւնութիւնից թէ իւնից: Ցղոյն չափազանցացնում է և պարձենում ցանկանալով զարմացնել ուրիշներին, նա խարսմ է ցանկանալով աղասիվել. անսխորժութիւնից կամ շահվել. նա կեղծաւորութիւն է անում

և սուտ է խօսում —նոյն պատճառներով ։ նա ուրանում է պատմից ապատվելու համար. մի խօսքով ամեն ուրեք և միշտ ստախօսութիւնը ծառայում է և Ա-ին: Ուրեմն հեռայինելով եսականութեան վաս կողմերը, մենք երեխային ճշմարտախօս կրարձնենք: Մնապարձն երբեմն շատ յար-մարայնում է սուտն խկութեան հետ ուրիշներին զարմացնելու կամ մի առան-ձին ընդունակութեան տէր ճանաչվելու համար: Երբ նկատվեցաւ այդ դիտառութիւնը, հարկաւոր է խսկյն կանգնեցնել նորան և ասել, որ նորա ստերի միտ-քըն ուրիշներին խարեն է, իւր մասին մեծ կարծիք հաստատել տան է: Երեխայն մի քանի անգամ անցածող փորձեր անելուց յետոյ տեսնելով որ դիւրահաւատ ունին-դիրներ չե գանում, կամայ ակամայ կթողնէ իւր սովորութիւնը: Բայց այս կացասական միջոցը հարկաւոր է զործ գնել և զրական միջոց. կարելի է ասել նորան այդ հանգամանկներում: «այդ տե-

սակ սուտ շարաղբելը շատ գիւրին է
և նոցա արժողութիւնը չնչին, ուսափ հա-
ւատալ կարող են միայն թիթեամբ և
տիմար մարդիկ: Առաւել լսու է, թէե
գժուար, զրաւիչ ձեռվ պատմել, միշտ
ճշմարիա խօսելով, դու ևս կարող ես
այդ անել. հարկաւոր է միայն միշտ ու-
շադիր լինիլ և ծիշդ պատմել պատմածդ: ՞
Նրեմն երեխաները պարծենում են
անենելով, որ գաստիարակները նոցա ար-
ժանաւորութիւնները չեն ճանաչում:

Այնպիսի ծնողք և գաստիարակներ,
որոնք կարծում են, թէ վոանդաւոր է
երեխային գովելը, շատ կան. նոքա պարտք
են համարում միշտ վատաքանել երե-
խային: Այդ սխալ է և. անարդարութիւն.
երեխայն ևս շուտով կհասկանայ. բայց
այդ երեխային հարկաւոր չէ միշտ վա-
տաքանել, որ նա միշտ արթուն մնաց
և շարունակէ պատերազմը նորա բնական
ձգտումների դէսպի համբաստութիւնն և դէ-
սպի ծուլութիւննաշխատասիրութեան հետ:

ջունենալով միջոց արդարացի բառակա-
նութիւն տալ խւր ինքնասիրութեանն—
երեխայն ինքն իւրեամ գովելով վարձա-
պումէ իւրեան այդ զրկանկքից:

Դուք աեմում էք, որ երեխաների
մկրնական կրթութեան ժամանակ հար-
կաւոր է մեծ բարեխղճութիւն: Սկզբնա-
կան կրթութեան նպատակն արտայացա-
վելու է Պօղոս Առաքեալի հետեւեալ խօս-
քերով. և Հայրեր և Մայրեր, թողէք սուտն
և ճշմարտախօս Եղիք: Առանց վատ օրինակ-
ների երեխայն չէ կարող ստախօսութիւն
սովորել և ես արդէն ցոյց եմ տուել
թէ ինչ բանի վերայ ծնողքը պէտք է
առանձին ուշադրութիւն գարձնեն խւ-
րեանց վերաբերութեամբ: Արդարեւ շատ
գժուար է երեխային հեռացնել խարե-
բայութեան և կեղծաւորութեան տեսա-
րաններից, որովհեան մեր հասարակական
յարաբերութիւնները զիսաւորապէս հիմն-
ված են միմեանց խարելու վերայ. բայց
մենք մի մեծ քայլ կանենք դէսպի լսուը,

Եթէ հրաժարվենք մի քանի ընդունված ձևերից. այսինքն եթէ մենք նուրբ քազախալութեան փօխարէն կատենք և կլանք միայն Ճշմարտութիւնն: Կան, այս, մի քանի անձնիք, որոնք հետեւում են այս սկզբունքին. բայց նորա տարօրինակ մարդիկ են համարվում և կոչվում են կողիս և անքաղջափակարի: Ես տեսել եմ այսպիսի ծնողք և գասախարակներ, որոնք երբէք հարկաւորութիւն չեն ունեցել երեխայի ստախօսութեան առաջն առնելու, որովհետեւ ստախօսութիւն չեն նկատում երեխայի մեջ: Այս տեսակ երեխաների մշտական Ճշմարտախօսութիւնը կարելի է բացատրել միայն ամենաբարձր բարոյականութեան տեր անձնի ազգեցութեամբ: Արեխայն զգում է, որ գասախարակը նորանից բարձրէ առն բանով և սիրում է նորան: ուստի նա ենթարկվումէ նորա ալիքցութեանն ոչ մի ոյն սիրելով նորան, այլ և յարդելով: Բառական չէ, որ երեխային միայն սիրէ իսր դատապահին:

մենք տեսանք արդէն, որ երբեմն աէրը խարեբայութեան պատճառ է դատնում, հարկաւոր է ունենալ հեղինակութիւն, որին համար պէտք է լինի գերազանց թէ բարոյագէս և թէ մասւորապէս: Միւս կողմից առանց սիրոյ հեղինակութիւնն ոչ այլ ինչ է, բայց եթէ աչ և գողի պատճառ, որից մնում է աւտելութիւն, եթէ սէր չկայ, երեխայն առտխօսելու ժամանակ կաշխատի որքան կարելի է ճարպիկութեամբ ծածկել իւր աշխածն:

Ուրեմն բարոյական կրթութիւնը յաջողակ է միայն այն ժամանակի, երբ երեխայն սիրում է և յարգում դաստիարակին: Բայց սէրն արտայայլվելով է ոչ միայն փաղաքշանքով և քաղցրեղէնով, այլ երեխայի մարդկային իրաւունքները լիազէս յարգելով և հաւատարմութիւն ունենալով գէպի նաև Այս կետի գէմ մէզանը են շատ անգամ ծնողքը: նորա սիրումն իւրեանց երեխանց երեխաներին որպէս խառ

դավիք, բայց չեն յարգում նոցա: Նոքա յօժակութեամբ աալիս են երեխային նիւթական յարմարութիւններ և շատ անդամ չափից գուրս հոգում են նոցա բարելառութեան համար, բայց վարփում են նոցա հետ չձանաշելով նոցա մարդկային իրառունքները:

Դշմալիս սէրը պատուիլում է ներողամիտ լինիլ երեխայի յանցանքներին և չպատժել միշտ: Ապա թէ ոչ դատիարակութիւնը կրառնայ իրաաների, սպառնալիքների եւ պատիմների շարք մի կողմից և խաբեբայութեան և սոսութեան — միւս կողմից: Մանաւանդ որ երեխաները շուտով նկատում են, որ ծնողաց պահանջը վեր է նոցա կարողութիւնից և թէ նոցա պատմում են այն բանի համար, որ ծնողքն իւրեանք անուշ են անպատճիմ: Առաւել լաւ է երեքն չնկատել երեխայի յանցանքն, իսկ եթէ պատմելն անհրաժեշտ է, պէտք է ի մայ ունենալ, որ պատիմը միւս անդամ յանշանքը չանելու համար է և ոչ վրէժ:

Նրեխայի պակասութիւններն և յանցանքները պէտք է ընդունել իրրե հիւանդառ և անկանոն երեխյթներ և պէտք է միշտ մտածել չլինի թէ մենք ենք նոցա պատճառը:

ՆԱՌԱԿ

Ճ.Ը.

Իւրեանց սէրը և յարգանքը գէպի երեխաները ծնողքն կարող են արտայայտել մասնակցելով նոցա պարապմունքին և գործունէութեանն և յաճախ յարաբերութիւն ունենալով ուսուցչի և ուսումնարանի հետ: Այն ծնողքն և դատիարակներն, որոնք ունին մեծ հեղինակութիւն և ազգեցութիւն երեխաների վերայ, կառող են հաստատ համոզված լինիլ, որ երեխաները ծշմարտախօս կլինին — գոնեաիւրեանց հետ, այդ ևս մեծ բան է: Այն երեխայն որ սուտ չէ խօսում իւր հօր առաջեւ, չի սուտ խօսիլ ուսուցչի կամ օտարի մօտ ևս: Միւս երեխաների սոսա

խօսութիւնը նորա վերայ վասա տպաւուրութիւն կունենայ: Բայց այսուամենայնիւնքաք է մեծ ուշադրութեամբ հսկել եւ րեխայի վարմունքը ծառաների և միւս երեխաների հետ այդ ընկերութեան մէջ երեխայն շատ փորձութիւնների կարող է հանգիպել և զարմանալու չեւ երբ երեխայն ընկերների կամ ծառաների ազգեցութեանն ենթարկվելով սուտ խօսի: Զմոռուաք, որ այդ հանգամանքում երեխայի սուտ խօսին ապացոյց է, որ նա մի վատ և պախարակելի բան է արել:

Դարոյական դաստիարակութեան ամենազօրեղ միջոցը սէր զարդացնելն է առ Աստուած: Երեխայն շատ շուտ կարող է ըմբռնել, որ մեր բոլոր մոքերը, խօսքերն և արարմունքները յայտնի են Աստծուն և թէ մենք երբեմն կարող ենք խարել մեր ընկերին, բայց Աստծուն երեք: Երեխայն այս ծշմարտութիւնն յիշելով շատ անդամ սուտ չի խօսի: Երեխայի յարաբերութիւններն առ Աս-

տուած համանման են նորա յարաբերութիւններին առ դաստիարակները: Վախն ինքն ըստ ինքնեան զարթեցնում է միայն հպատակութեան ստրկական մի զդացմունք, բայց ոչ ազատ ցանկութիւն վատ բանից հեռու մնալու: Սորա համար հարկաւոր է սէր առ Աստուածութիւնն, որ անկարելի է ի հարկէ ուսուցանել, բայց զարթեցնել և պահպանել այդ սէրը, բայցատրելով երեխային փոքր առ փոքր վերին արդարութեան և բարութեան գաղափարը: այս դաստիարակութեան կարելի և անհրաժեշտ խնդիրներից մինն է:

Այսպէս ուրեմն երեխայի ծշմարտաւխօսութիւնը կախված է լաւ բարոյական դաստիարակութիւնից, որովհեաւ ստախօսութիւնը միւս պակասութիւնների արբանեակն է միայն: Ես արդէն բացատրեցի ձեզ, Նազելի Տիկին, այն միջոցներն, որոնցով կարելի է գոյա առաջն առնել: Բայց աշխարհիս երեսին կատարեալ ոչ մի բան չկայ, ուրեմն չկայ և

կատարեալ գաստիարակութիւն, վասնորոյ
անկարելի է, որ երեխայն միանդամայն
սուտ չխօսի, մանաւանդ որ մեծերն ան-
դամ միշտ չեն կարող հեռու պահել
իւրեանց այնպիսի հանդամանքներից,
երբ հարկադրված են սուտ խօսելու։ Աւս-
տի երբ դուք նկատէք ձեր որդու ասածի
մէջ ստախօսութիւն—երբէք իրաւունք
չունիք երեխային յանցաւոր համարել։
Դուք կարող էք բարկանալ նորա վերայ,
բայց միշտ ի մտի ունեցէք, որ ձեր խօս-
քերը միայն այն ժամանակ տպաւորու-
թիւն կունենան նորա վերայ, երբ նա հա-
մոզված լինի, որ դուք ինքեանքդ ճշմար-
տախօս էք. աղա թէ ոչ ձեր բարկու-
թիւնն ոչ մի տարաւորութիւն չի թող-
նել նորա վերայ։

Աններելի կինի միւս կողմից ամեն մի
ստախօսութեան միւնոյն հայեացքով նայ-
ել. այլ պէտք է միշտ իմանալ ստա-
խօսութեան շարժառիթն, որովհեաւ սուտ
խօսելլ նպատակ չէ, այլ մի որեիցէ նը-

պատակի համար լոկ միջոց միայն կարե-
լի է երեխայն սուտ խօսեց շտապէլուց,
վախից կամ թեթևամտութիւնից. այս
հանդամանքներում հարկաւոր չէ խկոյն
յանդիմանութիւններով և նախարինքով
դիմել նորան. այլ հանդարտ կերպով
առելու է. «սելքդ ղօւսիդ ժողովի՞ր, ու-
ղիղն ասա՞»։ Եթէ այս չներգործեց, ու-
րեմն երեխայն առաջին անգամն չէ սուտ
խօսում. մնապարծ երեխային պէտք է
բացի այդ ցոյց տալ սնապարծութեան
վատ կողմերն ես, առելով. օրինակ. «դու
պտումնաւմ ես, որ մարմնամարզութեան
մէջ շառ ճարպիկ ես, շառ լաւ, եթէ
ճշմարիտ է աւածդ, բայց մեծ յիմարու-
թիւն կինի քո կողմից, եթէ դործից
երեար, որ դու պարծենում ես միայն.
քեզ վերայ կծիծաղեն և շառ լաւ կա-
նեն»։ Այս տեսակ վարմունքով դուք
կզարժեցնէք երեխայի մէջ զգուանք ստա-
խօսութիւնից. բայց այն ժամանակ միայն,
երբ սորա նման նկատողութիւններից

յետոյ, որոնք իսկութեամբ սոսորացնում
են նորա անձնական պատիլ, դուք
կաշխատէք խրախուսել և հաշտեցնել
երեխայի ողին։ Անդադար յանդիմանու-
թիւններով, պատիմներով և այն շատ
հեշտ է ճնշել նորա ողին։ իսկ դաստիա-
կութեան նպատակն է ոչ թէ ճնշումն,
այլ ընդհակառակը նորա եռանիքի զար-
դացնելն և նորա ողեկան զօրութիւնների
ազնուացնելը։

Բայառքեցէք երեխային, որ նա գովա-
սանքի կարժանանայ ոչ պարծենալով և
սուտ խօսելով, այլ անդադար աշխատե-
լով։ Երեխայի ամեն մի սուտ խօսելու
ժամանակ նախ պէտք է նորան ցոյց տալ,
որ դորանով նո մնասում է առաւել
իւրեան, քան ուրիշներին։ Օրինակ, եթէ
նա սուտ խօսելով ցանկացաւ աշխատան-
քից փախչել, պէտք է նորան ստիպել,
որ միւնցն աշխատանքը նա առաւել
կառաջեալ և լաւ կստարէ։ Բայց այս,
երբ իմայաք, որ երեխայն սուտ խօսեց,

պէտք է պահանջել նորանից խոստովա-
նել ստախօսութիւնը։ «Դու երեկ ինձ
առացիր, թէ ուսումնարանական դասեր
չունիս, բայց այսօր առաւոտ դու ծա-
ծուկ պարապեցար։ Երեկ ծշմարիան ա-
սացիր ինձ և ի՞նչպէս է կոչվում՝ այդ
տեսակ վարմունքն, ասա՞ս Առ հասարակ
նա կղմուարանայ առել ստախօսութիւն»
բառը—այդ լաւ նշան է։ ուստի հեշ-
ացրէք նորա խոստովանքն, տաելով «ևս
ծշմարիտ չասեցի» և թող նա ևս կըրկ-
նէ գոնեա ցածր ձայնով այդ խօսքերը։
Խոստովանքը կթեթեւացնէ նորան եւ
դուք կարող եք բացատրել, որ չէք նե-
զանում, բայց ցաւում եք նորա արար-
մանքի մամին։ «Բայց որովհետեւ դու
թեթեւացրիր քո սիրու խոստովանելով
յանցանքդ, ևս ևս հանդարտվեցայ։ Սիայն
ասմ. ի՞նչու դու երեկ սուտ խօսեցար.
դու գիտես, որ ևս քեզ սիրում եմ,
ուրեմն կարող ես ինձ ամեն բան ասել։
—Ուրեմն դու ցանկանում էիր երկար

խաղալ երեխամների հետ, ասում ես. ի
զուր դու չասացիր ինձ, ես կթոյլատրէի
և այսօր դու չէիր հարկադրված լինիլ
ծածկելու քո պարագմունքն, որ սովու
րականից վաս է դուրս եկել: Երեի ու-
սուցիչն ես կնկատէ այդ. այդ պատճա-
ռով դու նորան պէտք է ասես ծշմա-
րիտը, միոքդ պահիր և խոստացիր այսօր
իսկ նորից կառարելու գործդ:[»]

Եթէ հնար լինէր ստախօսութեան
անախորժ հետեանքներն իմանալ տալ
երեխային այնպէս դարձ, ինչպէս վերոյ-
իշեալ օրինակում, այդ տեսակ ստա-
խօսութիւնը շատ շուտ կանհետանար,
որովհետեւ երեխայն շատ լաւ կտեսնէր
իւր ստախօսութեան վատ հետեանքները:
Բայց այս տեսակ կարելի է վարդել, երբ
ստախօսութիւնը կամ խաթեբայութիւնն
ակներեւ ապացուցած են: Անհամեմատ
գմուպանում է գործն այն հան-
դամանքներում երբ կասկածներ են միայն
և հաստատ չղիտէք, ով է յանցաւորն:

Երկու դէպք կարող են պատահել այդ
հանդամանքում: Կամ՝ յանցանքն այնպէս
է, որ կարելի է չնկատելու դնել նորան
և կամ անյարմար է նորան անուշադիր
թողնել: Երկու դէպքում ես նաև դա-
տեցէք՝ կարելի է արդեօք իմանալ Ճըշ-
մարիտը թէ ոչ: Եթէ դուք չէք հա-
մոզված, որ անպատճառ կգտնէք յան-
ցաւորը, մի սկսէք քննութիւնը, որ կա-
րող է անյաջտղ վերջանալ, այլ լուեցէք
և սպասեցէք բարեպատեհ հանգամանքի:
Իսկ եթէ յուել անկարելի է վկաների
կամ այլ ապացոյցների շնորհիւ, յայտ-
նեցէք երեխաներին, որ դուք չէք կարող
գտնել յանցաւորին, որովհետեւ մարդ
լինելով, ամենագէտ չէք, կարողութիւն
չունիք ամեն մինի սրտի մէջ թափանցել.
«Ինձ համար ցաւալին այն է, որ մինի
գործած յանցանքի պատճառով ստիպ-
ված եմ կասկածել ամենի վերայ:[»] Յե-
տոյ հարցրեցէք ամեն մինին և պահան-
ջեցէք բարեխիղձ պատճառին: Եթէ ու

բոշ և հիմնաւոր կատկածներ ունիք
մինի վերայ, հրապարակական քննութիւն
հարկաւոր չէ անել, որովհետեւ ամօթի
զգացմունքից հաղիւ թէ երեխայն խոս-
տովանի միւսների առաջ իւր յանցանքն:
Այդ զգացմունքը պէտք է պահպանել:
Երեխայն շատ լաւ հասկանում է, որ
ներողամիտ են առ նա և իւրեան պար-
տաւորփած համարելով այդ ներողամուու-
թիւնից, կասէ ճշմարիտը: Միայն քննու-
թեան յաջողութիւնը կախված է հարց
և փորձ անողի ձևերից. եթէ երեխայն
տեսնում է, որ նորան հարցնում են ա-
ռանց բարկութեան՝ սիրելով և ցաւելով
նորա վերայ, ոչիբրեւ յանցաւորի, այլ իրեւ
մխալուողի—նա անշուշտ առաջին խօս-
քերից կխօստովանի: Աւ հասարակ իմասի
ունեցէք, որ հարց և փորձը պատժելու
համար չէ, այլ երեխայի խիզճն ազա-
տելու իւր դործած յանցանքի զիտակ-
ութիւնից: Աւ դաստիարակված երեխա-
ները թէև դիտեն, որ կպատժվին, բայց

առաջին հարցից իսկ խօստովանում են
յանցանքն: այսպէս և պէտք է լինի, ա-
պա թէ ոչ երեխայն անսպայման ճշմար-
տախօս չի լինիլ, այլ ճշմարտախօսու-
թեամբ. վարձատրվելու կամ անպատճի՛-
մալու նպաստակովնա ուղեղը կամ:

Ես այսքան երկար խօսեցայ ստախօ-
սութեան մասին, որովհետեւ այս ախար-
մեր հասարակական ախտերից ամենասո-
վորականն է և մեծ անբարոյական աղ-
դեցութիւն ունի երեխաների վերայ: Քա-
ջայոյս եմ, որ հետեւելով տուած խոր-
հուրդներիս ձեր որդին կազատի՛ այդ
գարշելի ախտից և եթէ նա, ինչպէս և
ամեն մի երեխայ, երբեմն սուտ խօսի,
այդ կմնայ առանց ազգեցութեան նորա
սրտի և բարքի վերայ, որոնք ձեր սիրով
և խելացի հոգաբարձութեամբ կհաս-
տառվին և կաղնուանան: Բայց այս նո-
րա մէջ կծագի ուշադրութիւն դէսի
իւր խօսքերն և վարմունքը, նա կդիտակ-
ցէ իւր մխալներն և կունենայ այնքան

Հաստատ բնաւորութիւն, որ ազատ մնայ նոցանից:

Մի խօսքով բացի սիրուց դուք կգար գացնէք նորա մէջ այն վերին զօրութեան սկիզբներն, որ մէնք խիզձ, խըզձ մըշտ անք ենք անուանում և որի շնորհիւ գիտակցում ենք ապագայում մեր պարագաւորութեան հիմունքն և որ է մեր անձնական կարելի բաղդաւորութեան անհրաժեշտ պայմանն: Աշխատելով այս խնդրի վերայ, դուք միենոյն ժամանակ ամենաաղնիւ կերպով կրածէք և ձեր սեփական կեանքի խնդիրը. ձեր ցանաճ սերմ ընկ փոխի և որբան անցածող հանգամանքներում ևս լինի ձեր որդին, նա մարդ կինի և գորա համար պարտական կան կինի ձեզ. այս գդացմանքը ձեզ և ձեր որդուն կկատէ այնպիսի հաստատ կապերով, որոնց կեանքն անկարող կինի քանդելու:

Վերջացնելով վերջին նամակս ի բոլոր սրտեցանիւնում եմ ձեզ, նազելի Տի-

կին, լիակատար յաջողութիւն ձեր որդւոյ դաստիարակութեան մէջ: Թող նա միշտ մաքուր լինի Աստծու և մարդոց առաջեւ: Ես շատ ուրախ կլինէի, եթէ կարողանայի ասել, որ իմ խորհուրդներով նպաստեցի ձեր և ձեր որդւոյ բաղդաւորութեանը:





6n

2013

«Ազգային գրադարան



17685

NL0051505

